

ԷՋՄԻԱԾՆ

1984

Դ

ԱՄԼ 146



ԽԱ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Հատոր

1984



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՁԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (22 ապրիլի 1984 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:
«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Աշխարհի վրա վերստին գարուն է բացվել ու գարնան հետ ուրախությունը նոր կյանքի վարթոնքի: Այսպես ահա գարուն է աշխարհում և գարուն մեր սրտերում: Եվ ինչպես ամեն գարուն, նո՛ր գարուն է, և նո՛ր վարթոնք, այնպես էլ Քրիստոսի Հարության ավետիսը ամեն տարի նոր ավետիս է հանդիսանում:

Մենք՝ մարդիկս, միշտ ու տևապես փոփոխական ենք: Անվերջ հոսող ժամանակը ինչ-որ չափով մեզ կերպարանափոխում է: Երբեմն մռայլվում է մեր ապրելու ուրախությունը, երբեմն նվազում է մեր կյանքի ավյունը, երբեմն հանգում է մեր հույսերի ճրագը, երբեմն ընկնում ենք հոգու ու մարմնի փորձությունների հորձանքի մեջ, ու այսպես՝ կյանքի ալեկոծումների, տագնապների մեջ, որոնում ենք փրկության մի լաստ, մի նոր ստուգություն, մի պայծառ արահետ, նոր եռանդով, նոր լավատեսությամբ վերստին նվիրվելու մեր ապրած կյանքին, մեր ձեռաց գործերին, մեր իդեալներին: Կամենում ենք բոցավառել մեր հույսերի ճրագը, գտնել մեր ինքնությունը և իմաստը մեր գոյության: Կամենում ենք վերանորոգվել, այլակերպվել, դառնալ ավելի անարատ, ավելի կատարյալ, ավելի բարի ու արդար:

Տխուր պիտի լիներ կյանքը առանց գարնան, առանց հոգեկան նոր լուսաբացի, հետևաբար առանց Քրիստոսի Հարության ավետիսի:

Սիրելի հավատացյալներ, այս գարնան առավոտյան, Սուրբ Էջմիածնի բարձունքից, այս խոհերով ձեզ բոլորիդ բերում եմ աշխարհասասան այս մեծ ավետիսը:

Հիսուս՝ Որդին Աստուծո, իջավ աշխարհ, եղավ մարդ, ապրեց, գործեց ու տառապեց: Նա մարդացավ, որպեսզի երկրի վրա ապրի փորձառությունը մարդկայինի, որպեսզի ըմպի դառնության բաժակը մարդկային ողբերգությանց, ունենալով մի նպատակ. այն է՝ օգնության ձեռք երկարել մարդկության և բաց անել նրա առաջ փրկության մի ճանապարհ, ճանապարհը մեղքերից ազատ մի կյանքի, ճանապարհը արդար ու խաղաղ մի կյանքի:

Հիսուս՝ մարդացյալն Աստված, երկրի վրա բաժանեց տառապալի ճակատագիրը մարդկանց, ենթարկվեց մարմնի ու հոգու չարչարանքների, խոնարհությամբ իր վրա վերցրեց ողջ մարդկության մեղքի ու չարիքի դարավոր ծանրությունը, մահն իսկ ճաշակեց խաչափայտի վրա ու գերեկման իջավ ծանր քարի տակ:

Կատարվեց սակայն հրաշքը մեծագույն: Երեք օր հետո նրա գերեկմանը դատարկ գտնվեց: Յուղաբեր կանանց, հրեշտակը ավետեց՝ «Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս: Չէ աստ, այլ յարեաւ» (Ղուկ. ԻԴ 6): Հիսուս, իբրև Աստված, քանդել էր կնիքը բնության օրինաչափության և մեռելներից հարություն էր առել ու բարձրացել դեպի անհունը երկնքի:

Հիսուսի Հարությունը խորհրդանիշն է չարիքի ու մեղքի կապանքների քանդման, ստուգությունը բարվո ուժերի հաղթության, ճանապարհը հոգու փրկության:

Այսպես է, որ փրկության մի լաստ որոնող մեր ծարավի հոգիները, ամեն տարի նոր հույսերով, նոր սպասումներով, նոր լավատեսությամբ մանկացած սրտերով, դիմավորում են Քրիստոսի Հարության ավետիսը, Հարության շնորհներով թոթափելու համար իրենց տկարությունները, գտնելու իրենց իսկությունը, իրենց կյանքի արդար ուղին: Հարության ավետիսը երկնքի պատասխանն է մեր բարոյական խղճի վարթոնքի ու հրավերը՝ քանդելու մեր կյանքի չարիքի ու մեղքի շղթան և դառնալու նոր մարդ, բարի գործերով արդարացյալ մեր հոգիների փրկության հույսը ծրարած մեր սրտերում:

Լսենք մեծ առաքյալի պատգամը՝ «Զի մեղքի թոշակը մահ է, այլ Աստուծոյ շնորհները յաւիտենական կեանք ի Քրիստոս Յիսուս Տէր մեր» (Հռոմ. Զ 23):

Դուք, հարազատ զավակներ առաքելական մեր Մայր Եկեղեցու, զատկական սրբազան այս ժամին, երբ հավաքվել էք հուսացյալ սրտերով Փրկչի Իջման բազմադարյան այս սուրբ տաճարի կամարների ներքև, բաց արեք ձեր սրտերը և հաղորդվեցեք Աստվածորդու հրաշալի Հարության խորհրդով, և հոգով ու մարմնով վերանորոգված, ուխտ կատարեցեք, նվիրական խոստում տվեք՝ անսայթաք ընթանալու ավետարանական կենարար պատգամների ուղիով, հեռու պահելու ձեզ անմաքուր փորձություններից, լինելու ավելի ու ավելի կատարյալ, մաքուր ու պարտաճանաչ ձեր ընտանեկան կյանքում, ձեր աշխատանքի վայրում, ձեր ընկերային համայնական կյանքում, լինելու նաև կարգապահ, շինարար քաղաքացիները ձեր հայրենիքի:

Աղոթեցեք նաև, որ սուրբ Հարության շնորհներով առավել աճեն ու ամրապնդվեն մարդկային աշխարհում՝ խաղաղ գոյակցությունը ազգությունների և արդար հարաբերությունները պետությունների միջև, որպեսզի անցյալում բազում անգամներ արյունով ներկված մեր երկրագունդը այլևս երբեք, երբեք չտեսնի սև ուրվականը պատերազմի, որպեսզի այլևս ոչ մի պետություն չհա-

մարձակվի լինել ավերակների ճարտարապետ, որպեսզի փլատակների ու դիակների տակ չխեղդվեն երգն ու ծաղիկը աշխարհի:

Այո՛, աղոթք արարեք, որ Քրիստոսի Հարության շնորհներով, սիրո և խաղաղության ոգին լուսավորի սրտերն ու ձեռաց գործերը մեր օրերի պետությանց ղեկավարների, որպեսզի իսպառ խորտակվեն բոլոր վենքերը պատերազմի, և խաղաղության սպիտակ աղավնին ապատ ու անվտանգ սավառնի աշխարհից աշխարհ:

Մարդասիրության ու խաղաղության ոգու ամրապնդումը ավելի քան անհրաժեշտ է մեր օրերում: Պատերազմները դժվար թե վերանան, ինչքան ժամանակ աշխարհում տիրական են ագահությունը, շահագործումը և տիրապետելու մարմաջը, մինչ վինարանները լիքն են ատոմական ռումբերով: Մարդկանց և ժողովուրդների միջև կայուն բարեկամության և շինարար գործակցության մթնոլորտի ստեղծումը, այսօր նույնքան հրամայական է, ինչքան վինաթափումը:

Այսպես է, որ նաև դարեր ու դարեր ահարկու ողբերգություններ ապրած ու 1915-ի Եղեռնը տեսած մեր ժողովուրդը, այսօր փրկության ու վերածնունդի ափին հասած, պիտի շարունակի իր վերելքն ու ծաղկումը մայր հողի վրա, սուրբգրական Արարատի ստորոտին, ի մխիթարություն համայն հայ ժողովրդյան որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Աստված մի արասցե, բանաստեղծի խոսքերով ասած, որ «վերստին կանգնենք մեր ժանիքավոր ճակատագրի առաջ ճակատ առ ճակատ»:

Մեկ՝ հավատացյալներիս համար, մարդասիրության ու խաղաղության ոգու մարմնացումն է Փրկիչը մեր Քրիստոս, իսկ նրա Հարությունը՝ գերագույն ստուգությունը այդ ոգու հաղթության: «Զի ոչ է արքայութիւն Աստուծոյ կերակուր և ըմպելի, այլ արդարութիւն և խնդութիւն և խաղաղութիւն ի Հոգին սուրբ» (Հռոմ. ԺԲ 17):

Թող աշխարհի ու ողջ մարդկության երկնակամարի վրա հավետ շողա լույսը Քրիստոսի, լույսը արդարության Արեգակի և խաղաղության Իշխանի:

Փառք Հարության Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի, այժմ և հավիտյանս. ամեն:



ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Հունաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Երուսաղեմի Հունաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՈԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),

Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Ե-ԻՆ (Կահիրե),

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ (Ադիս Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Քոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),

Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻՆ (Բուխարեստ),

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),

Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԷԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս),

Անտիոքի և համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),

Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ),
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ Դ-ԻՆ (Դամասկոս)
Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻԻՆ (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին
Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին
Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵՅԻՆ (Պրագա),
Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոսիա),
Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ԱՆՏՈՒԱՆ ՊԻԵՐ ԽՈՐԵՇԻՆ (Կերկե),
Մարսելի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),
Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ՖՐԱՆՑ ՔՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),
Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին
Ամենապատվություն կարդինալ
Ժ. Գ. Մ. ՎԻԼԼԵԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),
Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍՏԻԺԵԻՆ (Փարիզ),
Լատվիական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս,
Նորին Գերապանցություն ՅԱՆԻՍ ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս,
Նորին Գերապանցություն ԷԴԳԱՐ ԽԱՐՔԻՆ (Տալլին),
Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՉԻՆԻԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ,
Նորին Սրբազնություն ՔԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ (Ժնև),
Մխիթարյան ռխտի Աբբահայր, Գերապայծառ Հայր
ՀՈՎՀԱՆՆԵՍ վարդապետ ԴԵՐՁԱԿՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ռխտի Աբբահայր, Գերապայծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),

Քրիստոսի սուրբ Հարության ավետիսը լուսավորում է մարդկային աշխարհը և պայծառացնում մեր բոլորիս հոյսը, մեծ հոյսը՝ ձերբազատվելու մեղքի ու մահվան կապանքներից, մեծ հոյսը՝ մեր հոգիների փրկության:

Զի «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և Յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»:

Այս մեծ ավետիսով ողջունում ենք Ձերդ Սրբությունը և հղում Մեր սրտաբուխ բարի մաղթանքը, որ հարուցյալ Փրկչի շնորհներով լուսավորված՝

Ձեվ հատուկ հոգևոր հեղինակությամբ շարունակեք Ձեր նվիրական առաքելությունը պտղառատ արդյունքներով, ի պայծառություն ձեր պատմական մեծ Եկեղեցու և համրապնդումն քրիստոնեական եղբայրության համայն աշխարհում:

Սուրբ Հարության շնորհներով նաև թող առավել աճի սերը և բարի կամեցողությունը մարդկանց ու ազգությունների միջև և խաղաղ գործակցությունը պետությունների:

«Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա Կորնթ. ԺԶ 15): «Քանզի ամենեջին որդիք Աստուծոյ էք՝ հաւատովք ի Յիսուս Քրիստոս» (Գաղատ. Գ 26). ամեն:

Եղբայրական հարգալից սիրով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Քրիստոսի սուրբ Հարության ավետիսը վերստին լուսավորում է մարդկային աշխարհը և պայծառացնում մեր բոլորիս հույսը, մեծ հույսը՝ ձերբազատվելու մեղքի ու մահվան կապանքներից, մեծ հույսը մեր հոգիների փրկության:

Զի «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, այս լույս ավետիսով ողջունում ենք Ձերդ Սրբազնությանը և հղում Մեր օրհնանքը թեմիդ եկեղեցյաց ուխտապահ հոգևոր սպասավորներին, թեմական և համայնքային վարչությանց, տիկնանց և երիտասարդաց հանձնախմբերի և դպրաց դասերի եկեղեցաշեն անդամներին և համայն մեր հավատացյալ զավակաց, ջերմագին մաղթանքով, որ բոլորը ձեռք-ձեռքի տված, Ձերդ Սրբազնության հովանու ներքո սիրով միաբանած՝ համերաշխորեն գործեն հառավել շինություն և ծաղկումն թեմիդ հոգևոր, կրթական և մշակութային կյանքի:

Նաև սուրբ Հարության շնորհներով թող առավել աճի սերը և բարի կամեցողությունը մարդկանց ու ազգությունների միջև և խաղաղ գործակցությունը պետությունների:

«Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա Կորնթ. ԺԶ 15): «Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք՝ հաւատովք ի Յիսուս Քրիստոս» (Գաղատ. Գ 26). ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվել են ամենաջերմ և հարգալից զգացմունքներով լեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ Հայ Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց վանական կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված շնորհավորականների համար:





ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն տարի Հայաստանյայց Եկեղեցին, ինչպես նաև բովանդակ քրիստոնեական աշխարհը, յուրահատուկ շուքով և հանդիսավորությամբ է նշում Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը՝ որպես կյանքի և լույսի հավերժական ավետիս, որպես բարու և գեղեցիկի հաղթանակի խորհրդանիշ: Քրիստոնեական Եկեղեցու նվիրական կամարների տակ վերստին հնչում են Փրկչի հրաշափառ և սուրբ Հարությանը նվիրված շարականները, օրհներգություններն ու ալելուիաները.

«Այսօր յարեաւ ի մեռելոց
Փեսայն անմահ և երկնատոր.
Քեզ աւետիք խնդութեան,
Հարսն ի յերկրէ եկեղեցի» (Շարական):

Քրիստոսի հրաշափառ Հարությունը, որպես հոգևոր վարթոնքի խորհրդանիշ, տոնախնամբվում է գարնանը, երբ ծաղկում, գեղեցկանում, կարծեք հարություն է առնում նաև բնությունը: Եվ պատահական չէ, երբ Հայոց Հայրապետը իր այս տարվա պատկական քարոզը սկսում է այսպես.

«Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Աշխարհի վրա վերստին գարուն է բացվել ու գարնան հետ ուրախությունը նոր կյանքի վարթոնքի: Այսպես ահա գարուն է աշխարհում և գարուն մեր սրտերում: Եվ ինչպես ամեն գարուն նո՛ր գարուն է և նո՛ր վարթոնք, այնպես էլ Քրիստոսի Հարության ավետիսը ամեն տարի նոր ավետիս է հանդիսանում»:

Այո, Եկեղեցին գեղեցկորեն ներդաշնակել է բնության վերապարթոնքը հոգեկան կյանքի ուժերի վերապարթոնքի հետ:

Նորից մարդկային մտածումներն ու զգացումները թաածում են դեպի հեռավոր անցյալը, երբ փշրվեցին մահվան շղթաները, և մարդկությունը լուսավորվեց լույսովը Քրիստոսի հրաշափառ Հարության: Քրիստոսի թափուր գերեզմանը մարդկային հոգում նորից բոցավառում է փրկության, հոգևոր ապատության և բարոյական վերածննդյան ավետիսը: **«Քրիստոսի Հարությունը,**—ասում է Վեհափառ Հայրապետը,—**խորհրդանիշն է չարիքի ու մեղքի կապանքների քանդման, ստուգությունը բարվո ուժերի հաղթության, ճանապարհը հոգու փրկության»:**

Եվ այսօր, քսան դար հետո, **նոր գարնան և նոր վարթոնքի** հետ նորից հնչում է Քրիստոսի ձայնը. **«Ես եմ, մի՛ երկնչիք. վի՞ խընդրէք վկենդանիս ընդ մեռեալս»:** Այդ ձայնը ամեն գարնան նորովի է հնչում և նոր լիցք հաղորդում հայ հավատացյալի հոգուն:

Քրիստոսի հրաշափառ Հարությունը քրիստոնեական Եկեղեցու ամենանվիրական տոներից մեկն է և այն հիմնաքարը, որի վրա հաստատված է քրիստոնեական մտածողության ճշմարիտ վարդապետությունը: **«Ես եմ յարութիւն և կեանք»:** Եկեղեցին խարսխվել է հիմնականում այս վկայության վրա: Առանց վարանման կարելի է ասել, որ Քրիստոսի սահն ու հարությունը կազմում են Եկեղեցու քարոզության ուղն ու ծուծը, որովհետև **«Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր»:** Հարության ավետիսը քրիստոնեական կրոնի անշարժ վեմն է: Այն իր մեջ խտացնում է կյանքի անմահության, կյանքի հավերժության գաղափարը: Քրիստոսի Հարության ավետիսը մահվան տապալման և մարդկային

հոգու անմահության, մարդկության փրկության ավետիսն է:

Ըստ քրիստոնեական մտածողության, յուրաքանչյուր հավատացյալ, յուրաքանչյուր քրիստոնյա հաղորդակից է դառնում Քրիստոսի մահվանը և հարությանը:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Մահուամբ զմահ կոխեաց
Եւ յարութեամբն իւրով
Մեզ զկեանս պարգևեաց» (Շարական):

Ճիշտ է, Քրիստոսի Հարության իրողության բացատրությունը և գիտական մեկնաբանումը թերևս վեր է մարդկային մտածողության սահմաններից, սակայն այն մի ստույգ իրողություն է՝ հաստատված ժամանակակիցների վկայություններով, այնպիսի մի իրողություն, որ միայն հավատքով կարելի է ըմբռնել: **«Զի՞նչ են հատատք, եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն, և յանդիմանութիւն որոց ոչն երևին»,**—ասում է Պողոս առաքյալը:

Քրիստոսի Հարության առաջին վկայությունը կապված է այն բարեպաշտ կանանց հետ, որոնք Ավետարանում հայտնի են «յուղաբեր կանայք» անվամբ: Նրանք է, որ Փրկչի առաքելությամբ շտապում են Քրիստոսի աշակերտների մոտ և վկայում իրենց տեսածը:

Քրիստոսի Հարության երկրորդ վկաները դառնում են նրա աշակերտները: Նրանք լսում են Հարությունից հետո Փրկչի առաջին պատգամը. **«Գնացէք ի Գալիլիա և անդ տեսցէք զիս... ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի»:**

Սակայն Քրիստոսի Հարության մեծագույն վկայությունը բերում է Քրիստոնեական Եկեղեցին՝ իր 2000-ամյա պատմությամբ ու կերտած մշակույթով, իր ապրող և շնչող իրականությամբ, վեհ գաղափարներով, իր անխոնջ պայքարով՝ հանուն խաղաղության և մարդկանց երջանկության: Ինչպես ամեն մի պատեհ առիթով, Ս. Հարության տոնի առթիվ էլ Ամենայն Հայոց Հայրապետը իր ալղոու ձայնը բարձրացնում է հանուն խաղաղության, որպեսզի **«...Հարության շնորհներով առավել աճեն ու ամրապնդվեն մարդկանց աշխարհում՝ խաղաղ գոյակցությունը ազգությունների և արդար հարաբերությունները պետությունների միջև, որպեսզի անցյալում բազում անգամներ արյունով ներկված մեր երկրագունդը այլևս երբեք, երբեք չտեսնի սև ուրվականը պատերազմի, որպեսզի այլևս ոչ մի պետություն չհամարձակվի լինել ավերակների ճարտարապետ, որպեսզի փլատակների ու դիակների տակ չխեղդվեն երգն ու ծաղիկը աշխարհի»:**

Հարության տոնը՝ իր պատգամներով և իր ավետիսով, թվում է ավելի հարազատ հայ հավատացյալի հոգուն: Մեր բազմաչարչար ժողովուրդը, որ դարեր շարունակ կենաց և մահու պայքար է մղել չարի ու բռնության բիրտ ուժերի դեմ, որ չարչարվել, խաչը ուսին՝ բազմիցս իր արյունոտ Գողգոթան է բարձրացել, միշտ հավատարիմ է մնացել իր պապերի հավատին և Քրիստոսի պատգամին՝ **«Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք»,** երբեք չի կորցրել իր հարության հույսը: Այդպես մեր ժողովուրդը վերջին անգամ խաչվեց 1915 թ. Ապրիլյան եղեռնին, բայց նորից կարողացավ, ի զարմանս շատերի, հարություն առնել, բուժել իր անցյալի արնոտ վերքերը: Եվ այսօր հայ ժողովուրդը իր վերածնված հայրենիքով, գիտությամբ ու մշակույթով իր նոր խոսքն է ասում աշխարհին և, ինչպես նշում է Վեհափառ Հայրապետը իր զատկական քարոզում, **«...դարեր ու դարեր ահարկու ողբերգություններ ապրած ու 1915-ի Եղեռնը տեսած մեր ժողովուրդը, այսօր փրկության ու վերածնունդի ափին հասած, պիտի շարունակի իր վերելքն ու ծաղկումը մայր հողի վրա»:**

Փա՛ռք Քրիստոսի հրաշափառ Հարությանը.

Փա՛ռք մեր ժողովրդի հարուցյալ ոգուն:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. ՆԵՐՍԵՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Բարեխնամողն Աստուած, մեր Մայր Եկեղեցու տասնեօթդարեայ պատմութեան ընթացքում, մեր ժողովրդին յաճախ է պարգևել Սուրբ Հոգով ներշընչուած եկեղեցական մեծ դէմքեր, որոնք իրենց երկնատուր շնորհներով և արժանայիշատակ գործունէութեամբ փառաւորել են սուրբ մեր Սուրբ Եկեղեցին:

Ինչպէս յայտնի է, ԺԹ դարի երկրորդ կէսին, այդպիսի բարեմաշնորհ անձերից մէկը հանդիսացաւ Տ. Ներսէս եպիսկոպոս Վարժապետեանը, որ, իբրև Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքութեան պատմական Աթոռի Գահակալ, մեծ հռչակ վաստակեց Հայ Եկեղեցու և ժողովրդի պատմութեան մէջ:

Նա ծնուել է 1837 թ. Կ. Պոլսի Խասգիւղ թաղամասում և սովորել տեղի Ս. Ներսէսեան վարժարանում, ապա իր ուսումն առաջ տարել ինքնաշխատութեամբ: 1855 թ. տեղափոխուել է Ադրիանապոլիս ուսուցչական պաշտօնով: Երեք տարի անց, առաջնորդ Տ. Արիստակէս եպիսկոպոս Ռաֆայէլեանի ձեռամբ, ձեռնադրուել է կուսակրօն քահանայ և կարճ ժամանակ յետոյ էլ ստացել վարդապետական աստիճան: Վերադառնալով Կ. Պոլիս, ծաւալում է արդիւնաշատ գործունէութիւն: Գործուղուում է Ռումինիա, Տրանսիլվանիա և Ադանա, տեղի հայ համայնքներին այցելելու և հոգու մխիթարութիւն բաշխելու հայ հաւատացեալ ժողովրդին:

Սսի Տ. Կիրակոս Բ կաթողիկոսը, տեսնելով Վարժապետեան վարդապետի գործունէութեան արդիւնաւէտութիւնը, ադանացիների խնդրանքով 1862 թ. եպիսկոպոս է ձեռնադրում նրան 25 տարեկան երիտասարդ հասակում: 1866-ին նրա ջանքերով Խասգիւղում բացւում է Նուպար-Շահնազարեան վարժարանը: 1872 թ. Սուրբ Էջմիածին այցելելով, նա անցնում է Մայր Աթոռի եպիսկոպոսաց դասը:

Տ. Ներսէս Վարժապետեանը կարճաւուն, սակայն բեղմնաւոր իր գործունէութեան ընթացքում, որպէս մանկավարժ և քարոզիչ, վանական յանձնաժողովների անդամ, կրօնական ժողովի ատենապետ, պատրիարքական պատուիրակ և կաթողիկոսական ընտրական ժողովի պատգամաւոր, այնքան աչքի է

ընկնում, որ Խրիմեան Հայրիկի պատրիարքական Աթոռից հրաժարումից յետոյ, Կ. Պոլսի հայոց պատրիարք է ընտրուում 1874 թ., երբ նա հասլի 37 տարեկան էր:

Նրա գահակալութեան տարիներին կուգադիպեց 1877 թ. ռուս-թուրքական պատերազմը: 1878-ի մարտի 3-ին ստորագրուած Սան-Սթեֆանոյի պայմանագրում նշուած 16-րդ յօդուածը, որ վերաբերում էր հայերին և հայկական հարցին, խմբագրուել էր նաև Տ. Ներսէս Պատրիարքի ջանքերով: Յոյժ բեղմնաւոր եղան նրա պատրիարքական գահակալութեան գործունէութեան տարիները, մեծապէս գնահատուած համայն հայ ազգութեան կողմից իր ժամանակին:

1884 թ. մայիսին, Սուրբ Էջմիածնում կաթողիկոսական ընտրութեան ժամանակ, Տ. Ներսէս Վարժապետեան պատրիարքը ընտրուեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, սակայն հիւանդութեան պատճառով նա հրաժարուեց այդ պատասխանատու պաշտօնից և հինգ ամիս յետոյ, 1884 թ. հոկտեմբերի 26-ին, վախճանուեց դեռ 48 տարիքը չբոլորած:

Տ. Ներսէս Պատրիարքի մահուան 100-ամեակը լրանում է այս տարի աշնանը:

Տ. Ներսէս Պատրիարք Վարժապետեանը բնաւորութեամբ հեզահամբոյր, լայնախոհ, գաղափարապաշտ և պարզասէր մի հոգևորական էր, բարոյական անձնաւորութեան մի կատարեալ տիպար, իր ժամանակի հոգևորականութեան աչքառու դէմքերից մեկը՝ ազգասիրական ջերմ զգացումներով խանդավառ:

Մեծանուն Օրմանեան Պատրիարքը ուղիղ է բնութագրել Վարժապետեանին, հետևեալը գրելով պատկերաւոր կերպով նրա մասին. «Ներսէս իւր ազգին բարոյն և յառաջդիմութեան նախանձայոյզ եղաւ: Ներսէս իւր ազգին ճշմարիտ օգուտին համար անձնուէր աշխատեցաւ: Ներսէս իւր Եկեղեցոյն պայծառութեան ժիր մշակ եղաւ... Ներսէս արդեամբ և արժանեօք բարձրացաւ: Ներսէս պարագաներուն ներածին չափ իւր ազգն ու Եկեղեցին շահեցուց և կարգացուց»:

Մենք սիրով և խոր գոհունակութեամբ ենք ընդառաջում Ամենապատիւ Մեր Եղբօր, Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեանի 22 Փետրուար 1984 թուակիր դիմումին և սոյն Մեր կոնդակով հրաւիրում ենք մեր Մայր Եկեղեցին և համայն մեր հաւատացեալ ժողովրդին որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի, սոյն տարուայ աշնանը արժանավայել կերպով տօնախմբելու պայծառ յիշատակը Տ. Ներսէս Վարժապետեան սրբազան Պատրիարքի, նաև ջերմապէս աղօթելու նրա հոգու խաղաղութեան համար երկնային յաւերժութեան մէջ:

«Յիշեցէք կառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ, հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ 17):

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20 Ապրիլի
1984 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԳ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1249

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԶԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ ԱՐՏԱՍԱՆԵԼԻՍ

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 22-ին, կիրակի.—ԶԱՏԻԿ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Մայր Աթոռը Փրկչի Հարության տոնակատարության առթիվ այսօր ցնծության և բերկրանքի մեջ է: Հավարավոր հավատացյալներ, դեմքներին կենսուրախ ժպիտներ, սեր ու խնդություն, դիմում են Ս. Էջմիածնի Մայր տաճար: Նրանք գալիս են նորոգելու իրենց ուխտը, գալիս են հաղորդակից լինելու հայրապետական սուրբ պատարագին:

Ժամը 11-ին ուրախ դողանջներով հնչում են Մայր տաճարի վանգակները: Վեհափառ Հայրապետը, տոնական հանդիսավորությամբ, շրջապատված Մայր Աթոռի միաբանությամբ, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու կատկական սուրբ պատարագ:

Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ խրոխտ և հոգեվայլ են հնչում «Գովեա Երուսաղէմ զՏէր» և «Յարեաւ Քրիստոս» տաղերը:

Այս ուրախալի առիթով ս. պատարագին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Փարիզի հայոց Կրոնական ընկերակցության ներկայացուցչական հանձնաժողովի ատենապետ պրն. Արմեն Բարսեղյանը և գանձապահ պրն. Կարպիս Զրբաշյանը, Մոնրեալի հայոց եկեղեցական վարչության ատենապետ դոկտ. Արշավիր Կյոնճյանը, Ֆրանսիայի Իսի Լե Մուլինոյի քաղաքագլուխ Անդրե Սանտինին, փոխքաղաքագլուխ Մարտիրոս Կարագյոզյանը, Լիոնի նախկին ռազմիկների միության ընդհանուր նախագահ Միհրան Քեհյայանը, Մայր Աթոռի բարերարներ Տիգրան Փափազյանը և Սերժ Մանուկյանը, Լիոնի «Սևան» ճամփորդական հաստատության տնօրեն Վարուժան Սարգիսյանը:

Ս. պատարագին հյուրաբար ներկա էին Պերուից հասարակական գործիչ Ֆերնանդես Մալդոնադոն և հայր Խուան Ֆլորենսիոն:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով համայն հայության Զատիկը, բովանդակալից իր քարոզում վեր է հանում ս. Հարության տոնի հոգևոր և պատմական նշանակությունը (հայրապետական սույն քարոզը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3): Վեհափառ Հայրապետի կատկական քարոզը ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից նույն օրը երեկոյան:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան, ուր ընդունում է շնորհավորանքներ կատկական տոնի առթիվ:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը, Տ. Շահե արքեպ. Աճեմյանը, Տ. Ներսես եպս. Պոլապալյանը, Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի, ճարտարապետների հանձնաժողովի անդամները և մայրավանքի պաշտոնյաները: Ճաշկերույթին մասնակցող հրավիրյալների թվում էին Մայր Աթոռում գտնվող հյուր ուխտավորները:

Ճաշկերույթին ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ճաշկերույթի ընթացքում ներկաները ջերմորեն շնորհավորում են Վեհափառ Հայրապետին Ս. Հարության տոնի առթիվ և նրան մաղթում արևշատ օրեր, նորանոր հաջողություններ իր ազգանվեր և եկեղեցաշեն գործունեության մեջ:

Զատկական ճաշն ավարտվում է Վեհափառ Հոր օրհնությամբ:

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ



ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՆՇՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 24-ին, կիրակի.—Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս համաշխարհային առաջին պատերազմի.

Ապրիլյան Եղեռնի 69-րդ տարելիցն է այսօր:

Ամեն տարի գարնանը, ապրիլի 24-ին, թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում խոր վշտով ոգեկոչվում է հիշատակը 1915 թ. հայ բյուրավոր նահատակաց: Խաղաղ և աշխատասեր ժողովրդի մեկ ու կես միլիոն վավակներ նահատակվեցին բարբարոս և արյունարբու թշնամու ձեռքով՝ դուրս քշվելով իրենց հայրենի պատմական հողերից, ուր նրանք դարեր շարունակ աշխատել, ապրել և ծնունդ էին տվել մշակութային բազում արժեքների: Անհերևակայելի մի փաստ 20-րդ դարի համար, անժխտելի և անմոռանալի մի դեպք, որի տխուր հիշատակը սրբացվեց հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու կողմից:

Ապրիլյան այս օրը հայրենիքում և սփյուռքում բազմահազար հայորդիներ իրենց քայլերն են ուղղում դեպի անմահ զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանները՝ գլուխ խոնարհելու և իրենց հարգանքի տուրքը մատուցելու:

Առավոտյան ժամը 10.15-ին, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Շահե արքեպ. Աճեմյանի գլխավորությամբ, Տ. Ներսես, Տ. Գևորգ սրբազանները, Մայր Աթոռի միաբան վարդապետները, աբեղաները, ինչպես նաև քահանա հայրերն ու սարկավագները այցելում են Ծիծեռնակաբերդ և ծաղկեպսակ կետեղում Ապրիլյան Եղեռնի զոհերի հուշարձանին: Նրանք մի պահ կանգ են առնում հավերժական կրակի առաջ և «Հոգւոց» արտասանում, ապա մեկ բոպե լռությամբ հարգում նահատակների հիշատակը:

Ժամը 10.30-ին Մայր տաճարի Ավագ խորանի վրա ս. պատարագ է մատուցում Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը և «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսում՝ վեր հանելով բյուրավոր հայ նահատակների հիշատակը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: Արարողությանը ներկա էին նաև Մայր Աթոռի աշխատավորներն ու հավատացյալների մի հոծ բազմություն:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը, ի գլուխ եկեղեցական թափորի, առաջնորդվում է մայրավանքի հյուսիսային կողմում կառուցված նահատակաց հուշարձան և նախագահում հոգեհանգստյան արարողությանը:

Նույն օրը, ժամը 15-ին, հոգևոր ճեմարանի ուսանողությունը ծաղիկներով, տեսչական և դասախոսական կազմի գլխավորությամբ, բարձրանում է Ծիծեռնակաբերդ:

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՆՄԱՐ ԿՐԱԿԻ ԱՌՋԵՎ (24 ապրիլի 1984 թ.)



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 1-ին, կիրակի.—Ե կիրակի Քառասնորդական Պահոց (Դատաստրին):

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հովնան աբեղա Տերտերյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը «Ասաց եւ առակ մի նոցա առ այն թէ պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս եւ մի ձանձրանալ» (Ղուկաս ԺԸ 1) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 5-ին, հինգշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելում ԵՀԽ-ի նախագահության անդամ, հընդկական Մալաբար Եկեղեցու միտրոպոլիտ Մար Գրեգորիոսը:

Սրբազան հորը Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորում են Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը և Տ. Հովնան աբեղա Տերտերյանը:

* * *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթի սկզբում ներկաները մտքեր են փոխանակում Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանի ապրիլի 1-ին Մայր տաճարում արտասանած քարոզի շուրջ:

Այնուհետև միաբանական հավաքույթին հրավիրված միտրոպոլիտ Մար Գրեգորիոսը խոսում է աղոթքի, մեղքի և հավիտենականության հարցերի մասին:

Վերջում պատվավոր հյուրը պատասխանում է միաբանների հարցերին:

* * *

Ապրիլի 8-ին, կիրակի.—Զ կիրակի Քառասնորդական Պահոց (Գալստեան):

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Տ. Հով-

նան աբեղա Տերտերյանը «Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս ի չար սովորութեանց իւոց ի բարի սովորութիւն» (Շնորհալի) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 11-ին, չորեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողները, գլխավորությամբ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանի, մեկօրյա պտույտի են մեկնում դեպի Գառնի և Ս. Գեղարդա վանք:

* * *

Ապրիլի 12-ին, հինգշաբթի.—Այսօր, առավոտյան, Մայր Աթոռի միաբան Տ. Հովնան աբեղա Տերտերյանը հովվական այցելությամբ մեկնում է Իրաքի հայոց թեմ:

* * *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հավաքույթ:

* * *

Ապրիլի 14-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ են այցելում Կանադայի հայոց առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն վրդ. Քեշիշյանը, Մոնրեալի հայոց եկեղեցական վարչության ատենապետ դոկտ. Արշավիր Կոնճյանը, Փարիզի հայոց Կրոնական ընկերակցության ներկայացուցչական հանձնաժողովի ատենապետ պրն. Արմեն Բարսեղյանը և գանձապահ պրն. Կարպիս Ջրբաշյանը:

Վեհափառ Հայրապետը ընդունում է հարգելի հյուրերին և ջերմ զրույց ունենում նրանց հետ:

* * *

Ապրիլի 15-ին, կիրակի.—Ծաղկազարդ.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ներսես եպս. Պողպատյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ծերքն ոստովք ձիթենեօք եւ տղայքն ոստովք արմաւենեօք եւ երամ երամ դասուքն աղաղակէին՝ ովսաննա օրհնեալ եկեալ ի յանունն Տեառն» (զարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նույն օրը, Էջմիածին քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ է մատուցում Տ. Հակոբ քհն. Գյոկչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Մինչդեռ լոյսն ընդեպ ունիք՝ հաւատացէք ի լոյսն զի որդիք լուսոյ եղիջիք» (Հովհ. ԺԲ 36) բնաբանով:

* * *

Ապրիլի 18-ին չորեքշաբթի.—Այսօր ԱՄՆ-ից Մայր Աթոռ է վերադառնում Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը: Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում սրբազան հորը դիմավորում և բարի գալուստ է մաղթում Տ. Հուսիկ արք. Սանթուրյանը:

* * *

Ապրիլի 19-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 17.30-ին, Մայր տաճարում կատարվում է «Ոտնալուայի» կարգը:

Ժամը 19.30-ին սկսվում է Հիսուսի «սուկալի չարչարանաց և խաչելութեան» հիշատակին նվիրված Ավագ ուրբաթի արարողությունը կամ «Խաւարման» կարգը:

«Փառք ի բարձունս»-ից հետո օրվա խորհրդի մասին քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

* * *

Նույն օրը Երուսաղեմից ուխտավորաբար Մայր Աթոռ է այցելում Տ. Շահե արքեպ. Ահեմյանը:

* * *

Ապրիլի 20-ին, ուրբաթ.—Աւագ ուրբաթ. Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր, ժամը 12-ին, Մայր տաճարում կատարվում է «Կարգ Խաչելութեան» արարողությունը:

Երեկոյան ժամը 18-ին, «Թաղման կարգ»-ից հետո, Տ. Սիոն արքեպ. Մանուկյանի նախագահությամբ Մայր տաճարի շուրջ կատարվում է եռադարձ «Թափօր թաղմանն» արարողությունը:

* * *

Ապրիլի 21-ին, շաբաթ.—Աւագ շաբաթ. Ճրագալոյց Զատկի.

Այսօր, երեկոյան, Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Շահէ արքեպ. Աճեմյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Հաւատովք ճանաչել կնա եւ կպօրութիւն յարութեան նորա» (Փիլիպ. Գ 10) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է Ս. Զատկի նախատոնակի արարողությունը և Մայր տաճարում հնչում է Հարության մեծ ավետիսը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց...»:

Ապա վանական սեղանատանը Մայր Աթոռի միաբանները և հոգևոր ճեմարանի ուսանողությունը միասին ճաշակում են Զատկի նավակատիքի ընթրիքը:

*
* *

Ապրիլի 23-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հովսեփ աբեղա Հակոբյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն «վասն համօրէն նընջեցելոց»:

*
* *

Ապրիլի 29-ին, կիրակի.—Կրկնապատիկ (Նոր Կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Թորգոմ աբեղա Խարապյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում օրվա խորհրդի մասին:

ԱՎԱԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

ՀԻԾԱՏԱԿ ՂԱԶԱՐՈՒ ՀԱՐՈՒԹՅԱՆ

«...Եկեսցէ ժամանակ յորում ամենեքին որ ի գերեզմանս կայցեն՝ լուիցեն ձայնի նորա, եւ եկեսցեն արտաքս» (Հովհ. Ե 28—29):

«...Ղազարէ, արի եկ արտաքս: Եւ ել մեռեալն...» (Հովհ. ԺԱ 43—44):

Ըստ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո սահմանած կարգ ու կանոնին, Մեծի պահոց ավարտին կսկսի մեր Տիրոջ երկրային կյանքի կարևորագույն պահը: Մեր Եկեղեցվո սրբական հայրերը Ղազարու հարության դրվագը վերտեղելով Մեծի պահոց վերջավորության և Ծաղկազարդի (Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ) նախօրյակին, ճշմարիտ նվաճումի գաղափարով պսակեցին Մեծի պահոց հոգեղեն շրջանը և նախերգանքը տվին մոտալուտ մեծահրաշ ու աշխարհաջահ հաղթության՝ Քրիստոսի հրաշափառ Հարության: Այսպիսով՝ Ղազարու հարությունը **պատկեր** մը հանդիսացավ Քրիստոսի հարության, ինչպես, օրինակ, հարության այլ պատկեր եղավ նաև Հին Ուխտի դրվագներեն՝ Հովնան մարգարեի այլաբանական դեպքը: Մարդկային կյանքի նպատակը, որ դարերու ընթացքին աշխարհիկ պես-պես տեսություններով բացատրված էր, մարդացյալ Աստուծո փրկարար տնօրինությամբ ստացավ հավելյալ և հուսադրիչ հորիզոն ու տարողություն: Այդ հորիզոնին վրա իր առանձնահատուկ ու բովանդակալից տեղը ունեցավ Ղազարու հարության դեպքը:

Այս աշխարհի տեսանկյունեն դիտած՝ մարդկային կյանքը արագընթաց ճանապարհորդություն մըն է դեպի մահ: Նման թեզ մը որդեգրեց հունական իմաստասիրությունը, երբ նույն դպրոցին պատկանող փիլիսոփաներ կհաստատեին, թե ոևէ գոյացություն, վերջ ի վերջո, դատապարտված է անգոյության. քանզի մահը, որպես կերպար անգոյության, կարծեք մարդկային կյանքին միակ նպատակակետը եղած ըլլար, որով կյանքը հեռու էր ոևէ արժեք ունենալե և հետևապես պարուրված էր ուղեկորույս պարապությամբ մը: Թե՛ մարդիկ և թե՛ ազգություններ իրենց մշակութային դիմագիծով վրկված էին շրջապատը իր միավորներով ու իր ծալքերով ոգեկինելու և իմաստավորելու տիրահաստատ վեհ կոչումեն:

Սակայն Աստված այնքան սիրեց իր իսկ պատկերով ու նմանությամբ ստեղծած մարդը, որ իր Միածին Որդին առաքեց, որպեսզի մարդ էակը վերագտնե իր կյանքին իսկական դիմագիծը և վայն իմաստավորե արժեքներ ստեղծելու և իր շրջապատը ոգեկինելու աստվածադիր կոչման ընդմեջեն: Ահա թե ինչու հարկ էր ունենալ ճարտարապետ մը բարի, որը, որպես մարդացյալ Աստված, աստվածային արարքով մը ձերբապատեր մարդկային կյանքը լոկ աշխարհիկ նկարագիրե՝ վայն օժտելով նոր խորհուրդով մը, թե կյանքը պարգևն է Աստուծո և ուրեմն ունի յուրահատուկ կոչում և նպատակ. կոչում՝ ստեղծագործությունը վերստին Աստուծո սեփականությունը դարձնելու, ու նպատակ՝ մարդը, որպես տերը իր կոչումին, հասցնելու Աստուծո արքայության, ճաշակելու համար, հարության ճանապարհով, անմահության ակունքեն:

Ահա այս ըմբռնումով պետք է մոտենալ Ղազարու հարության հրաշքի խորհուրդին:

Իսկ Ղազարու հարությունը խորհուրդ մըն է ճիշդ անոր համար, որ, նախ՝ Քրիստոս այդ հրաշքով գործնականի վերածեց իր քարոզությունը, և երկրորդ՝ մեր Տերը փրկագործությունը պայմանավորեց սիրո գաղափարականով՝ վոհելով իր «Բարի Հովիվ»-ի կյանքը որպես սիրո արտահայտություն և փրկագին բոլոր ժամանակներու ու ամբողջ մարդկության փրկության համար:

Քիչ վերև ակնարկեցինք, թե Ղազարու հարության դեպքով Քրիստոս գործնականի վերածեց, եթե կուզեք՝ կյանքի կոչեց ընդհանրապես իր քարոզներուն մեջ արծարծված նյութերը: Այսպես՝ Հովհաննես առաքյալ, ավետարանիչներուն մեջ միակը Ղազարու հարության դեպքը հիշող, կներկայացնե մեր Տիրոջ անձը որպես տվիչը կյանքի, թե կյանքը ընծան է Քրիստոսի և թե Քրիստոսի պարգևը մարդոց՝ իր իսկ անձն է, ըստ տիրական առաջադրանքին. «Հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենացն աշխարհի» (Հովհ. Զ 52):

Եռամյա առաքելության ընթացքին Քրիստոս հաստատեց, թե ինքը ճշմարտապես տվիչն է կյանքի, այլև աղբյուրը կենաց: Ահա մեր Տիրոջ զույգ վկայությունը այս առնչությամբ. վկայություն, որ շատ շուտով հրաշագործությամբ մը պիտի արտահայտվեր՝ ունենալով որոշակի անդրադարձ իր առաքելության վրա:

Առաջին վկայությունը հետևյալն է. «Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ զբանս իմ լսէ եւ հաւատայ այնմ որ առաքեացն զիս՝ ընդունի զկեանսն յաւիտենականս. եւ ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս» (Հովհ. Ե 24):

Սույն արտահայտությամբ մեր Տերը մահը կվերածե պարագայական վիճակի մը: Իհարկե շեշտը այստեղ Քրիստոսի խոսքին վրա կկեդրոնանա և հավիտենական կյանքի ժառանգումը պայմանավոր կդառնա տիրական խոսքին ունկնդրումովը, այդ խոսքի բովանդակության հավատք ընծայելով և ըստ այնմ ապրելով: Կարևոր հանգամանքն այն է, որ մարդ էակը նույնիսկ իր կյանքի ընթացքին «անցած կըլլա մահեն դեպի կյանք» Քրիստոսի փրկչավանդ խոսքին ճանապարհով: Եթե մինչև իսկ անհատը մահացած ըլլա, դարձյալ մեր Տիրոջ խոսքին կենարար զորությամբ կյանքի կկոչվի, քանզի Քրիստոս ինքն է հաղթողը մահվան և տվիչը կյանքին:

Ահավասիկ մեր Տիրոջ երկրորդ վկայությունը, երբ մեռելները, լսելով տիրական ձայնը կենսառաք, իրապես հարություն կառնեն, այլ խոսքով՝ կյանքի կու գան: «Ամէն ամէն ասեմ ձեզ, զի գայ ժամանակ եւ արդէն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ. եւ որք լսիցենն՝ կեցցեն» (Հովհ. Ե 25): Այո, կրկին կշեշտվի Քրիստոսի խոսքին գերուժականությունը, սակայն այս պարագային մահացողները կյանքի կոչելով:

Ակներև է անշուշտ, որ Մարթայի և Մարիամի եղբայրը՝ Ղազարոսը, այն անձը հանդիսացավ, որ կյանքին վերադարձավ՝ լսելով Քրիստոսի ձայնը՝ «Ղազարէ, արի, եկ արտաքս» հրամայականով: Ու Ղազարոս, հարություն առնելով, կյանքի եկավ՝ փաստելով բոլոր ներկաներուն, թե ժամանակը արդեն եկած է, երբ մեռելները, լսելով Աստուծո Որդիին ձայնը, անպայմանորեն պիտի ապրին: Ղազարոս լսեց և վերապրեցավ:

Այստեղ պետք է մատնանշել կարևոր իրողություն մը: Եթե Ղազարոս Քրիստոսի հրամայականին ականջալուր ըլլալով իր կյանքը վերստին ժառանգեց, ապա ուրեմն ինչո՞ւ այդ պարգևը իրը չմնաց առհավետ: Սույն հարցին ճշգրիտ պատասխան տալու համար հարկ է ճշդել այն նպատակը, որուն համար Քրիստոս վերստին կյանք շնորհեց Ղազարոսին:

Ղազարոսի քրոջ՝ Մարթայի հետ ունեցած երկխոսության ընթացքին մեր Տերը հայտարարեց, թե «Յարիցէ եղբայրն քո...» (Հովհ. ԺԱ 23): Սակայն Մարթայի պատասխանեն կիմանանք, որ մեռյալին քույրը տակավին չէր ըմբռնած մինչ այդ Քրիստոսի ընդգծած ճշմարտությունը, ճշմարտություն՝ զոր մեր Տերը անգամ մը ևս հաստատեց հավելյալ հեղինակությամբ:

Ի պատասխան Քրիստոսի ավետիսին, թե Ղազարոս հարություն պիտի առնե, Մարթա ըսավ. «Գիտեմ զի յարիցէ ի յարութեան՝ յաւուրն յետնում» (Հովհ. ԺԱ 24): Այլ բացատրությամբ՝ Մարթա թերևս չէր հասկցած, թե Քրիստոս է և կմնա հեղինակը կյանքի պարգևատրման բոլոր ժամանակներուն համար, և թե մեր Տերը միայն դատաստանի օրվան հարությամբ չէ, որ կարժանավորե հավատավորները: Ահա մեր Տիրոջ աստվածեղեն խոսքը որպես եզրակացություն վերոհիշյալ ճշմարտության. «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ եւ մեռանի, կեցցէ. եւ ամենայն որ կենդանի է եւ հաւատայ յիս՝ մի մեռցի ի յաւիտեան» (Հովհ. ԺԱ 25—26):

Վերոհիշյալ հաստատումով բացահայտ կըդառնա մեր Տիրոջ նպատակը՝ Ղազարոսը հարության խորհուրդին արժանի ընելով: Ըստ այսմ՝ Քրիստոս հաճեցավ հաստատել, թե ինք իշխանություն ունի ի վերա մահվան, թե հարության խորհուրդը հակադարձն է մահվան վիճակին և թե կենաց պարգևը

հաղթանակն է ընդդեմ մահվան: Ղազարոսի անձը հանդիսացավ այն միջոցը, որով հարության գաղափարը պատմական դեպք դարձավ՝ կիրառվելով որոշակի ժամանակի մը ընթացքին և տվյալ միջոցի մը մեջ, թեպետև այս պարագային Ղազարոս վերադարձավ երկրային կյանքի վիճակին: Շուտով երկրորդ և ավելի մեծահրաշ հարությամբ մարդկային ցեղի պատմությունը պիտի ստանար նոր խորք և իմաստ, նոր ըմբռնում և տարողություն: Քանզի Քրիստոսի հարությամբ համայն տիեզերքը պիտի ենթարկվեր հիմնական վերանորոգման, ու մարդ էակը, Քրիստոսի նմանությամբ և հետևողությամբ, հետ հարության պիտի ժառանգեր անապականություն, կորություն ու փառք, ըստ Պողոս առաքյալի կորնթացիներուն ուղղյալ առաջին նամակի ԺԵ գլուխի հաստատումին:

Այժմ վերադառնանք Ղազարու հարության խորհուրդին հետ առնչվող այն երկրորդ կետին, թե վերոհիշյալ հրաշքով մեր Տերը պատկեր մը ևս ներկայացուց, ըստ որում փրկագործությունը պայմանավորեց սիրո գաղափարականով: Այլ խոսքով՝ Քրիստոս պատարագի սեղան բարձրացավ և կամովին ողջակեզ եղավ ի սեր համայն մարդկության փրկության:

Ճիշդ է, որ սիրո զգացումը մարդուն հոգեկան աշխարհի վեհագույն արտահայտությունն է, սակայն Քրիստոսի քարոզության արգասիքը ըլլալով, այլև անոր գործած հրաշքներուն խթանը հանդիսանալով՝ սերը ու սիրելու կարողությունը դարձավ օրենքի համապոր ճշմարտություն մը և ճշդող սկզբունք այն հարաբերությանց, որոնք ի գո են Աստուծո և մարդուն միջև և ընդհանրապես մարդ էակին և իր նմանին միջև: Երբ Քրիստոս մարդկության հանդեպ ունեցած իր սիրույն իբրև հետևանք՝ հարության հրաշքին արժանացուց Ղազարոսը, ան իր աստվածային անձին վրա հրավիրեց այս աշխարհի անհանդուրժող չարության ոգին և թշնամանքը, ինչպես կփաստեն Հովհաննես ավետարանիչին կողմե նշված Ղազարու հարության դրվագին հաջորդող դեպքերը: Կյանք պարգևող հրաշագործ արարքը շարժառիթ եղավ, որ խավարասեր թշնամին հալածանքի ենթարկեր մեր Տիրոջը և ապա խաչը հաներ սպան՝ անգիտանալով, թե այդ ահարկու արարքին ընդմեջեն արդեն մարդկային ցեղի փրկագործությունը իր ընթացքին մեջ կմըտներ: Իր աստվածեղեն կյանքին իսկ գնով մեր Տերը կյանք շնորհեց Ղազարոսին՝ շեշտելու նպատակավ, թե՝ «Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց» (Հովհ. ԺԵ 13):

Ըստ Հովհաննես ավետարանիչի վկայության, Ղազարու հարության դեպքեն անմիջապես հետո, քահանայապետները ատյան գումարեցին իրենց ընելիքը ճշդելու համար: Այսպիսով՝ Աստվածորդին մահվան դատապարտվեցավ. «Ապա յայնմ օրէ խորհուրդ արարին զի սպանցեն զնա» (Հովհ. ԺԱ 53):

Ղազարու հարության ճանապարհով Քրիստոս կերթար իր կյանքը պատարագելու ամբողջ մարդկության փրկության համար: Մեր Տերը իր կյանքը կու տար իր բարեկամի կյանքին փոխարեն: Սերը Քրիստոսի առաքելության առանցքը հանդիսացավ, հավիտենական ու անքակտելի կապը իր և մեր միջև. «Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս եւ ես սիրեցի զձեզ» (Հովհ. ԺԵ 12), քանզի «յայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս» (Հովհ. ԺԳ 35):

Ահա թե ինչպես «Բարի Հովիվ»-ին առակը կստանար խորիմաստ արժեք՝ հիմնված պատմական դեպքերու իրողությանց և հաջորդականությանց վրա: Աստուծմե առաքված Բարի Հովիվը կու գար, որպեսզի մարդ էակը կյանք ունենար: Սակայն այս աստվածառաք ծրագիրը իրագործելու համար Բարի Հովիվը իր կյանքը կպոհեր մարդկության համար. «Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Հովհ. Ժ 11):

Ահավասիկ Ղազարու հարության դեպքի իմաստը փրկագործության համայնապատկերին մեջ: Ղազարոսը կարող էր մեզմե որևէ մեկը ըլլալ. ավելին՝ ան կներկայացնե մարդկությունը անհատի մը ջոջափելի և տեսանելի կերպարին ներքև: Ինչպես ինք կյանքի եկավ, լսելով Հիսուսի փրկչավանդ ձայնը, մենք ալ հրավիրված ենք նույն ուղիով ընթանալ. լսել մեր Տիրոջ կոչը, թոթափել մեղաց քուրձը և ընդունիլ հարության հույսը:

Մեր մայր Եկեղեցվո թարգմանիչներու հույլին պատկանող, այլև երգիչը Աստվածաշունչին՝ Կլայեցի Ներսես Հայրապետը, այսպես ընդունած էր Ղազարու հարությունը.

«Զայնեցեր առ Ղազարոս
Որով ետուր մեռելոց յոյս.
Կենդանութեամբ չորեքօրեայն
Կենդանացան որ յադամայն.
Կենաց ձայնիւ վերջին փողոյ
Կոչեա զսա յայսմ հողոյ...»[1]:

Եկեք ձայնակցինք Շնորհալի Հայրապետին հետ աղոթելով Նորոգողին հնությանց, որպեսզի նորոգե և զմեզ ի խնամս մարդասիրության յուրոյ: Ամեն:

[1] Ներսես Շնորհալի, Ժամագիրք, էջ 113:



ՊՐՈՖ. ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ՈՒԱՋԻՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ (1956—1980)*

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ՈՒ ԲԱՐԵԶԱՐԴՈՒՄ

Հրազդանի կիրճի ձախափնյա կառիթափի գլխին, Երևանի բերդին հանդիման՝ նրա հյուսիսային կողմից, ձորեկրյա տարածության վրա երբեմնի սփռված Զորագյուղի կամ Խնկաձորի (Խնկելոց ձորի) անապատը, որի մասն էր կազմում ս. Սարգիս եկեղեցին, թեմական առաջնորդարանի կենտրոն և կաթողիկոսական իջևանատեղի է եղել: Պարիսպներով շրջապատված նրա ընդարձակ համալիրը պատով անջատված էր հարավային և հյուսիսային մասերից ու բաղկացած երեք եկեղեցիներից (ս. Գևորգ, ս. Հակոբ, ս. Սարգիս), Առաջնորդարանի ու թեմական դպրոցի շենքերից, տնտեսական բնույթի կառուցվածքներից, այգուց, բանջարանոցից և այլն[60]:

Ս. Սարգիս եկեղեցու կառուցման թվականը անհայտ է: Այն ավերվել է Երևանի մեծ երկրաշարժի ժամանակ (1679 թ. հունիսի 4-ին) ու այնուհետև նույն տեղում վերաշինվել է եդեսացի Նահապետ կաթողիկոսի գահակալության տարիներին (1691—1705 թթ.): Թե ինչպիսի՞ն էր այդ եկեղեցին, դժվար է ասել, սակայն ժամանակակցի և թեմի առաջնորդ Հովհ. եպիսկոպոս Շահխաթունյանցի վկայությամբ 19-րդ դարի սկզբի դրությամբ այն «յաղագս կարի հնութեանն և վտանգաւոր գոլոյն աղօթաւորացն ի նմա ժողովրդոց, ըստ խարխուլ շինուածոյն, յամի 1835 ի ժամանակի պաշտաման մերում հոգեւոր այցելութեամբ տուաք քակել զայն բոլորովին ի հիմանց, հրամանաւ վեհափառ կաթողիկոսին, և նոր ի նորոյ, ի նոյն տեղւոջն ընդարձակ ևս հիմնադրութեամբ, տուաք կառուցանել զորմունսն, որոյ շէնք հանդերձ չորս սեամբքն ի տաշածոյ և ի հասարակ քարանց և ի կրոյ հասանի գրեա թէ ի կատար յայս ամ»[61]:

Այս տեղեկության վրա ս. Սարգիս եկեղեցու վերաշինությունը իրականացել է Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի հրամանով 1835—1842 թթ.:

Եկեղեցու այդ շենքն էլ պահպանվել է մինչև մեր ժամանակները: Հանդիսանալով Երևանի գլխավոր և առաջնորդանիստ եկեղեցին՝ Վազգեն Ա կաթողիկոսի օրով այն ենթարկվեց հիմնական վերակառուցման և բարեկարգման: Վերակառուցման նախագիծը պատրաստեց ճարտարապետ Ռ. Իսրայելյանը: 1972 թվականի սկզբին նախագիծը հավանության արժանացավ Վեհափառ Հայրապետի և ճարտարապետների հանձնաժողովի

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1983 թվականի № № ԺԱ—ԺԲ-ից և 1984 թվականի № № Ա—Գ-ից:

60 Տես **Կարո Ղաֆադարյան**, «Երևանի միջնադարյան հուշարձաններ», Երևան, 1975, էջ 87—90. **Ռուբեն ավագ քահանա Մարտիրոսյան**, «Երևանի սուրբ Սարգիս եկեղեցին», «Էջմիածին», 1974, № ԺԲ, էջ 22—27:

61 **Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանց**, Բ հատոր, նույն տեղ, էջ 148:

կողմից: Ըստ այդ նախագծի եկեղեցու հին շենքը իր բոլոր կոնստրուկտիվ մասերով (պատերը, մույթերը, ծածկը կրող կամարներն ու թաղերը, ինչպես նաև ավագ խորանն ու գմբեթարդը, ավանդատները իրենց ծածկերի հետ միասին) հիմնականում պահպանվեցին:

Վերնաշենք ունենալու պահանջը թելադրում էր նրա համար հենարանների մի նոր համակարգ ստեղծել, որպեսզի առաջացող ծավալն իր ծանրությամբ չնստի եկեղեցու հին շենքի վրա: Նախագծում այս խնդիրը ստացել է մի այսպիսի նպատակահարմար լուծում, որը, ծառայելով հանդերձ նշված խնդրին, միևնույն ժամանակ հնարավորություն էր ընձեռում հիմնովին բարելավելու եկեղեցու արտաքին ճարտարապետությունը: Համաձայն նախագծի, եկեղեցու արտաքին պարագծով, հին պատերից փոքր-ինչ առաջ դրվելու էր նոր ու տարողունակ (արտաքուստ անթերվույթ երկաթբետոնյա կմախքով ապահովված) պատերի մի համակարգ, որոնք իրենց վրա պիտի կրեին վերնաշենքի հիմնական ծանրությունը: Դրա հետ մեկտեղ, այդ նոր, սրբատաշ տուֆաքարով երեսապատված պատերը պիտի քողարկեին եկեղեցու հին, ոչ բարետես պատկերը՝ սվաղված հարթություններով ու կիսագլանաձև որմնամույթերով: Վերջիններիս փոխարեն, պատերի արտաքին հարթությունները ուղղագիծ մշակման են ենթարկվում հռիփսիմեատիպ (հատակագծում տաշտաձև ու վերևում կամարներով պսակված) խորշերի միջոցով (4-ական երկայնական և 2-ական լայնական պատերին), դրանցով իսկ վերակառուցվող եկեղեցին ավելի հայաշունչ դարձնելու նպատակով:

Նախագծով պահպանված են եկեղեցու երեք (արևմտյան, հարավային և հյուսիսային) մուտքերը, սակայն դրանցից առաջինը՝ որպես գլխավոր մուտք, ճարտարապետորեն ավելի ճոխ և գեղեցիկ է լուծված: Ֆունկցիոնալ (դեպի վերնաշենքը մուտք ունենալու), ինչպես նաև ճարտարապետական (արևելյան ճակատի մշակումը հարստացնելու) նկատառումներով, մի դուռ էլ բացվում է ավագ խորանի հետնամասից՝ արևելյան կողմից: Նրան կից հարթակից պատի հաստության մեջ ամփոփված ոլորուն աստիճաններով կարելի է բարձրանալ հյուսիս-արևելյան ավանդատան վրա տեղավորված սանդղքատունը, իսկ այստեղից՝ վերնաշենքի ընդարձակ (18×20,5 մ. չափերի) սրահը: Նույն նպատակին են ծառայում նաև եկեղեցու ներսում, հարավ-արևմտյան կողմում տեղավորված սանդուղքները: Վերնաշենքի ավելացումով բնականաբար պահանջ առաջացավ հիմնովին քանդել-վերացնել նախկին անշուք թրմբուկն ու գմբեթը, փոխարենը կառուցելով առավել բարձրադիրն ու գեղեցիկը: Վերջինիս հենարան է ծառայում սրահի համարձակորեն իրականացված ծածկի երկաթբետոնյա թաղանթը (հեղինակ՝ ինժեներ Ռ. Մանուկյան), որի կենտրոնից, նախկինի տեղում ու նրանից ավելի բարձր, վեր է խոյանում նոր գմբեթն իր ալացիկ ծավալով:

Վերնաշենքը գմբեթի հետ միասին եկեղեցու շենքին հաղորդում է վերձիգ համաչափություններ և որոշ չափով բարելավում նրա հնչեղությունը:

1971—1976 թթ. ս. Սարգիս եկեղեցում կատարված վերակառուցման աշխատանքներն ընթացան ներսից ու դրսից միաժամանակ: Բոլոր այդ տարիներին եկեղեցին անընդմեջ շարունակեց գործել, և այդ հանգամանքը որոշ չափով դժվարացրեց ու դանդաղեցրեց աշխատանքները, մանավանդ՝ ներսում: Եկեղեցու ներսում իրականացվելիք աշխատանքները հիմնականում բարելարդման բնույթ էին կրում, աշխատանքներ, որոնք անհրաժեշտ դարձրին որոշ փոփոխություններ մտցնել ինտերյերում:

Համաձայն նախագծի եկեղեցու ներսում նախատեսվում էր կատարել հետևյալ աշխատանքները.

ա. Հնարավորին չափ կրճատել եկեղեցու դասի լայնությունը, դրա հաշվին մեծացնել ատյանի չափերը: Վերջինիս և արևմտյան մասի հատակների բարձրության տարբերությունը (մեկ աստիճանով) վերացնել, այսինքն ողջ հատակը բերել մեկ բարձրության և ամբողջապես սալարկել մարմարով:

բ. Վերափոխել մույթերի և որմնամույթերի հատակագծում կոր ձևերը: Դրանց անկյուններում հավելումներ կատարելու միջոցով դարձնել հատակագծում քառակուսի (մույթերը) և քառանկյունի (որմնամույթերը): Մույթերը մինչև խոյակների տակ, իսկ ներքին պատերը 1,40—1,50 մ. բարձրությամբ երեսպատել կարմիր գույնի գրանիտով կամ մարմարով:

գ. Հարավ-արևելյան ավանդատան մակերեսն ընդարձակել ի հաշիվ արևելյան և հարավային պատերի հին շարվածքի վերացման՝ կամարների տակ ամփոփելով առաջացած խորշերը: Փակել ավանդատան արևելյան լուսամուտը և նրա տեղում ստեղծել խորշ՝ մեջը ս. Սարգսի պատկերը տեղավորելու համար: Փոխարենը բացել լուսամուտ ավանդատան հարավային պատում և համապատասխանաբար ձևավորել դրսից ու ներսից:

դ. Եկեղեցու բնական լույսն ավելացնելու նպատակով վերակառուցել հարավային մուտ-

քի վերևի լուսամուտները, մինչև մեկ մետր բարձրացնելով չափերը: Ներսից ձևավորել հարավային և հյուսիսային մուտքերը:

ե. Վերակառուցել արևմտյան կողմից գոյություն ունեցող փայտաշեն պատշգամբը և իրականացնել այն երկաթբետոնի միջոցով: Բակրիքներն իրականացնել կոփածո երկաթե ճաղերով՝ դրանց ձևերը կապելով դասն ու ատյանը միմյանցից անջատող բակրիքի ձևերին[62]:

Եկեղեցու պատերի, կամարների ու թաղակապ առաստաղի մշակման միջոցով եկեղեցու ներքնամասին բարետեսություն հաղորդելը հանդիսացավ վերակառուցման առաջ նակարգ հարցերից մեկը: Նպատակահարմար համարվեց ծեփից ազատել ու մաքրել կարմրագույն-գորշ տուֆաքարով կանոնավոր շարվածք ունեցող կամարներն ու որմնամույթերը՝ վերստին ազատելով միայն թաղակապ առաստաղը: Տուֆակերտ մասերի հետ գունային միասնություն ստեղծելու նպատակով, ներքին պատերը 1,57 մ. բարձրությամբ, իսկ մույթերն ու որմնամույթերը մինչև կամարների տակ երեսպատվեցին իտալական Կարրարայի մարմարե սալերով:

Եկեղեցու վերակառուցումը դեռ չէր ավարտված, երբ 1973 թ. սեպտեմբերի 8-ին վախճանվեց նախագծի հիմնական հեղինակ՝ մեծատաղանդ արվեստագետ, ՍՍՀՄ ժողովրդական ճարտարապետ ու Պետական մրցանակի դափնեկիր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը: Հաջորդ տարվա մայիսի 30-ին, անդրադառնալով նախագծի հարավարևելյան խորանի ներքին ձևավորման հարցին՝ հանձնաժողովը անհրաժեշտ գտավ «Անփոփոխ պահել Ռ. Իսրայելյանի կողմից կատարված ս. Սարգիս եկեղեցու հարավ-արևելյան խորանի ձևավորման էսքիզը, փակելով արևելյան լուսամուտը և կենտրոնում նախագծելով կլոր վերջավորություն ունեցող ճարտարապետական էլեմենտ՝ վրան սրբապատկեր նկարելու համար»:

Վերակառուցումից հետո հարավ-արևելյան խորանն իր հյուսիսային պատի կամարակապ կույգ խորշերով, արևելյան պատում խորշի մեջ ամփոփված հեծյալ ս. Սարգիսը պատկերող նկարով ու վերին հարթության վրա տեղավորված վարդյակով ու խաչով և պատերի ներքնամասերը Կարրարայի կարմիր մարմարով երեսապատմամբ ստեղծվեց բավականին արտահայտիչ գունային ներդաշնակություն:

Ճարտարապետական հարդարանքի համապատասխան միջոցներ կիրառվեցին նաև հյուսիս-արևելյան խորանում:

Եկեղեցու ներքին բարեկարգման աշխատանքներում կարևոր հանգամանք հանդիսացավ գմբեթատակ առագաստները թեմատիկ բարձրաքանդակներով պատելը: Ճարտարապետ Ա. Գալիկյանի առաջարկով չորս առագաստներում բնական մեծությամբ վերարտադրվեցին պատմական Վայոց ձորի լավագույն կոթողներից մեկի՝ Արենիի եկեղեցու (ճարտարապետ՝ Մոմիկ, 1321) առագաստների քանդակային սիմվոլները: Դրանք հաջողությամբ իրականացրին քանդակագործներ Ս. Դոնդոնյանը և Մ. Հարությունյանը:

Առագաստների բարձր, գմբեթի թմբուկի հիմքի օղակաձև պատին քանդակվեց «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» արձանագրությունը:

Պատերին փորագրվեցին նաև երկու այլ արձանագրություններ՝ ճարտարապետ Բ. Արզումանյանի մշակած նախագծերով: Հյուսիսային պատի վրա, դուռն ամփոփող կամարից բարձր, շրջանակով երիվված ու երկու կողմերից վարդյակներով զարդարված հարթության վրա քանդակագործներ Հ. Համբարձումյանի և Ե. Հովհաննիսյանի կողմից փորագրվեցին հայտնի շարականի խոսքերը. «Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա»: Մյուս շինարարական արձանագրությունը կատարվեց արևմտյան դռան բարավորի վրա (բովանդակությունը կբերվի վերջում):

Ներքին բարեկարգման մաս կազմեց նաև երկաթակուռ ջահը (հեղինակ՝ Վ. Օհանյան): Գմբեթարդից ներքև, մինչև հատակ, աբսիդի կիսաշրջան պատը երեսապատվեց բաց գույնի մարմարյա սալերով ու դրանց ֆոնի վրա առավել պարզորոշ ուրվագծվեց առաջներում շինված սեղանը:

Ներքին բարեկարգման աշխատանքներին զուգընթաց, վերակառուցման աշխատանքներ էին ընթանում նաև եկեղեցու արտաքին մասում: Այստեղ ավարտվեցին գմբեթի, արևմտյան կողմի կույգ կանգակատների և կտուրի ծածկի շինարարական աշխատանքները: Ապա սկսվեց ճակատների քանդակազարդումը:

Ըստ վերակառուցման նախագծի, քանդակային հորինվածքները առավել հարստությամբ տեղ պիտի գտնեին եկեղեցու արևմտյան՝ ձորահայաց ճակատի վրա: Նախատեսվում էր գլխավոր դռան միակտուր քարից իրականացված բարավորի վրա տեղավորել Աստվածամոր, դրանից վերև գտնվող հարթության վրա՝ Գաբրիել և Միքայել հրեշտա-

---

[62] Հետագայում նպատակահարմար համարվեց բակրիքներն իրականացնել քարով ու քանդակազարդել:

կապետների, վերջիններիս միջև՝ խաչապարդ վարդյակի բարձրաքանդակները, իսկ ճակատի վերնամասում, կույգ խորշերից բարձր, ճակատի ամբողջ լայնքով փորագրել կարդաքանդակային մի գոտի: Վերոհիշյալ կարդաքանդակների էսքիզները մշակեց քանդակագործ Արտ. Հովսեփյանը (մասամբ օգտագործելով Աղթամարի տաճարի մոտիվները), իսկ դրանք քանդակեց քարագործ վարպետ Արամ Սահակյանը: Նույն Արտ. Հովսեփյանի էսքիզով պատրաստվեց ու տեղադրվեց փայտյա քանդակապարդ դուռը: Քանդակապարդվեցին նաև դռան շուրջը գտնվող պատերի հարթությունները:

Հավարտ ս. Սարգիս եկեղեցու վերակառուցման աշխատանքների, արևմտյան դռան բարավորի ներսի երեսին փորագրվեց հետևյալ արձանագրությունը.

«Ի Հայրապետութեան Տ. Տ. Վազգենի Ա Կաթողիկոսի Հայոց և փոխանորդութեան տ. Կոմիտասի արքեպիսկոպոսի ի հիմանէ վերակառուցաւ և բարեզարդեցաւ սուրբ Սարգիս եկեղեցիս արդեամբ Լոնտոնաբնակ Գէորգի և Յովհաննէսի որդւոցն Սարգսի եւ Աստղիկի Քիւրքճեան յամի Տեառն 1976 յամսեանն հոկտեմբերի ի վայելումն հաւատացելոցն քաղաքամայր Երեւանի. ճարտարապետք Ռաֆայէլ Իսրայէլեան եւ Արծրուն Գալիկեան»:

Վերակառուցված եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 1976 թ. նոյեմբերի 3-ին:

Ս. Սարգիս եկեղեցու վերակառուցմամբ, ինչպես նշեց իր քարոզում Վեհափառ Հայրապետը, «քաղաքամայր Երևանն օժտվեց մի նոր կարդով, հայկական ճարտարապետության մի նոր կոթողով, աղոթքի սքանչելի նոր սրբավայրով»:

Ս. ԳԱՅԱՆԵԻ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՎԱՆՔԻ ՇՐՋԱՊԱՏԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Հետևելով Կոմիտաս կաթողիկոսի օրինակին, նրա հաջորդը՝ Եղր կաթողիկոսը (630—641), 630 թ. մի նոր եկեղեցի է կառուցում նահատակված մյուս կույսի՝ Գայանեի և իր երկու ընկերուհիների գերեզմանների վրա, ս. Գրիգոր Լուսավորչի կողմից շինված վկայարանի տեղում: Այդ մասին է դարի Սեբեոս պատմիչը հաղորդում է. «Իսկ ապա Հայրապետն Եղր վկայարան սրբոյ Գայիանեայ, զոր երբեմն խրթին և մթին էր զնա շինեալ, քակեալ զայն՝ ևս ընդարձակագոյն և պայծառագոյն զնա շինեաց, կոփածոյ քարամբք և կրով ձուլելով, և արտաքուստ յարդարէր կայանս բնակութեան քահանայական դասուց ի պաշտօն աստուածային խորանին»[63]:

Թե այնուհետև ինչպիսի վերանորոգությունների է ենթարկվել եկեղեցին, այդ մասին տեղեկությունները վերաբերում են միայն ուշ միջնադարին ու դրանց աղբյուրը նորից Առաքել Դավրիժեցին է: Պատմելով Փիլիպպոս կաթողիկոսի վերաշինական գործունեության մասին՝ նա հայտնում է. «Եւ յետ ամենայն շինուածոցն Էջմիածնի, զոր սուրբ Հայրապետն Փիլիպպոս արար, այնուհետև ձեռն ի գործ էարկ, զի և տաճարս սրբոյն Գայիանեայ և Հռիփսիմեայ նորոգեսցէ»[64]:

Այդ շրջանում եկեղեցու վիճակի մասին նույն գրքում կարդում ենք. «...սրբոյ Գայիանեայ կուսի տաճարն առաւել աւերեալ էր, զի տանիքն բովանդակ իջեալ էր, միայն շուրջանակի որմունք և չորեքին սիւնքն կային կանգուն գլուխն ի բաց, և յատակք որմոցն աւտ և անդ ծածկեալ և խրամատեալ, որոց արար նորոգման սկիզբն կաթողիկոս տէր Փիլիպպոս, մեծահոգ կարօտի և ջանի, և բազում գանձս ծախելով նորոգեաց գեղեցկաշէն, ի հիմանց մինչև զգագաթն գմբեթին. յորոյ վերայ կառուցին զնշանս տէրունական խաչին»[65]:

Մեկ այլ տեղ, նորից խոսելով երկու վկայարանների վերաշինության մասին, Դավրիժեցին հայտնում է այդ աշխատանքների կատարման ժամանակը. «Եւ սկիզբն և կատարումն երկուց վկայարանացս սրբուհւոցն Գայիանեայ, և սրբուհւոյն Հռիփսիմեայ,—գրում է նա,—եղև յամս երիս. ՌՃ թուին սկիզբն արարին նորոգութեան, և ի ՌՃԲ թուին վերծան ի գործելոյ. բազում ծախիւք և յոլով աշխատութեամբ շինեալ կատարեցին ի փառս Քրիստոսի և սրբոց վկայից նորա»[66]: Նույնը վկայված է տաճարի դրսի, հարավ-արևմտյան կողմի պատին դրոշմված վիմական արձանագրության մեջ, որտեղ ասված է. «ՌՃԱ թուին նորոգեցաւ եկեղեցիս և շինեցաւ կաթուղիկէս»[67]:

Այնուհետև Փիլիպպոս կաթողիկոսը վերաշինական աշխատանքների վերակացու էր նշանակել «աբեղայ ոմն Յովհաննէս անուամբ, այր արդիւնաւոր գործօնեայ, և խորհրդական խորհրդով...», որը նաև պեղում-

[63] Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի, նույն տեղ, էջ 310:

[64] Առաքել վարդապետ Դաւրիժեցի, նույն տեղ, էջ 326:

[65] Նույն տեղ, էջ 326:

[66] Նույն տեղ, էջ 329:

[67] Յովհ. եպիսկոպոս Շահխաթունեանց, Ա հատոր, էջ 274:

ներ է կատարել եկեղեցու հատակում ու հայտնաբերել 3 կույսերի գերեզմանատները[68]:

Գայանեի վանքում շինարարական նոր աշխատանքներ են կատարվում ավելի քան կես դար հետո, 1688 թվականին, Եղիազար կաթողիկոսի գահակալության տարիներին: Տաճարի արևմտյան պատին կից կառուցվում է կամարակապ ու 3 գմբեթներով պսակված գավիթ, որի երկարությունը գերազանցում է եկեղեցու լայնությանը ու այդ պատճառով դուրս է շեշտված եկեղեցու հարավային և հյուսիսային պատերի նկատմամբ: Գավթի երկու ծայրերին կառուցվում են փոքր զանգակատներով պսակված երկու խորաններ, մեկը սուրբ Պետրոս, մյուսը սուրբ Պողոս առաքյալների անուններով: Պարսպապատվում է վանքի շրջապատը, կառուցվում են բնակարաններ հոգևորական դասի համար ու տնտեսական շենքեր[69]:

Այս ժամանակ կատարված վերաշինական աշխատանքների շնորհիվ հիմնովին վերականգնվել է ս. Գայանեի տաճարը ու այն կանգուն է մնացել մինչև մեր օրերը:

Գայանեի վանքում իրականացված շինարարական հետագա աշխատանքները վերաբերում են 19-րդ դարի վերջին: Դրանք տեղի են ունեցել սկսած 1872 թվականից, երբ Վահան վարդապետ Բաստամյանցը՝ ուսումնական և կրթված մի նորընծա հոգևորական (ավարտած Մոսկվայի Լազարյան ճեմարանն ու համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, արժանացած թեկնածուի գիտական աստիճանի) նշանակվում է Գայանեի վանքի վանահայր:

1872 թվականին, Վահան վարդապետ Բաստամյանցի վանահայրության օրով և նրա ջանքերով կատարվում են վերաշինական մի շարք աշխատանքներ[70]:

Այնուհետև Վահան վարդապետը կատարում է նաև բարեկարգման բնույթի զգալի աշխատանքներ[71]:

Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության շրջանում, 1959 թվականից սկսած, վերանորոգչական աշխատանքներ կատարվեցին ս. Գայանեի տաճարում: Տաճարի արտաքին ճակատներում ծրագրվում էր իրականացնել հետևյալ միջոցառումները. հարավային ճակատում վերաշարել կենտրոնական լուսամուտի շրջակայքի խարխլված շարվածքը, արևելյան ճակատում վերաշարել ճակտոնի ձախ անկյան շարվածքը, ամբողջապես ամրացնել այս և հարավային կողմի գետնախարիսխը: Բացի այդ, հարավային պատում անհրաժեշտ էր նկատվում կատարել մասնակի ամրացումներ: Արևմտյան ճակատում կարիք էր զգացվում քանդել-վերացնել եզրապատերը իրենց ճաղերով և արևմտյան մուտքի սվաղված երեսակալը, ինչպես նաև վերաշարել կամարակապ գավթի դեպի հյուսիս ուղղված ճակատի կամարի լիցքը:

Տաճարի ներսում նախատեսվում էր ամենուրեք հեռացնել պատերի ծեփը և մաքրել կրաջրով ծածկված մակերեսները, պատերի և հատակի քայքայված քարերը փոխարինել նորերով, նույն կարգի աշխատանքներ կատարել խորանում, նրա սեղանը փոխարինել նորով, փոխել բոլոր պատուհաններն ու դռները:

Բացի վերը թվարկվածից, պետք էր ցանկապատել վանքի շրջապատը ու նորոգել տաճարի պատի մոտ գտնվող աղբյուրը: Նպատակահարմար համարվեց տաճարի հետ կապված աշխատանքները հանձնարարել հուշարձանների գիտավերանորոգման արվեստանոցին, իսկ վանքի շրջապատի ցանկապատումը իրականացնել Մայր Աթոռի ճարտարապետ Ա. Գալիկյանի ղեկավարությամբ:

Ս. Էջմիածնի Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովը բավմիցս անդրադարձել է ս. Գայանեի տաճարում կատարվելիք վերաշինական աշխատանքներին:

Ս. Գայանեի վանքի շրջապատի ցանկապատումը կատարվեց տեղական տուֆով: Վանքի շրջապատի հյուսիսային (փողոցի) կողմի և ս. Էջմիածնի վանքի միաբանության գերեզմանոցի պարսպապատումը իրականացվեց ճաղերի միջոցով, որպեսզի հեռվից դիտելիս ս. Գայանեի տաճարն ու գերեզմանատունը չծածկվեն խուլ պատի ետևում:

Ս. Գայանեի եկեղեցու ներսում ավագ խորանը փոխարինվեց նոր խորանով: Հարմար նկատվեց այստեղ տեղադրել ս. Էջմիածնի Մայր տաճարից հանված իջման սեղանի մարմարյա սյունապարդ գմբեթը: Իսկ խորանի վրա վերեղվեց այս առթիվ մասնավոր կերպով պատվիրված Աստվածամոր նկարը՝ Հիսուս մանուկը գրկին (գործ՝ նկարիչ Հրանդ Ավագյանի):

Տաճարի ներսում աշխատանքներն ընթացան համաձայն ընդունված ծրագրի: Հարավային և հյուսիսային պատերի արևմտյան ստորին հատվածներում ու արևմտյան կողմի գմբեթակիր կույգ մույթերի ներքևի շարքերում քայքայված և կոնստրուկտիվ տեսակետից ոչ պիտանի դարձած բոլոր քարերը փոխարինվեցին նորերով: Ամբողջությամբ

[68] Նույն տեղ, էջ 275:

[69] Նույն տեղ, էջ 276:

[70] **Աբել արքեպիսկոպոս Մխիթարեանց**, նույն տեղ, էջ 46—47:

[71] Նույն տեղ, էջ 47:

նորոգվեց հատակի սալածածկը: Այնուհետև տաճարի ներսի (ներառյալ արևելյան աբսիդը, խորաններն ու ս. Գայանեի դամբարանը) պատերն ու հարթությունները ամբողջովին մաքրվեցին ծեփի մնացորդներից և կրաջրի հետքերից:

Այս բոլորից հետո կատարվեց նաև տաճարի կտուրի նորոգությունը: Կտուրի սալածածկի նորոգումը կատարվեց պատշաճ խնամքով, կիրառելով ջրի ներթափանցման դեմ պահանջվող միջոցառումներ:

Այնուհետև ս. Գայանեի վանքում կատարվեցին բարեկարգման որոշ աշխատանքներ: Դրանց թվին են պատկանում դարպասի ստեղծումը հյուսիսային ցանկապատում, ուշ միջնադարյան աղբյուրի ջրհորի մաքրումն ու նորոգումը, եկեղեցու հյուսիսային պատին կից վանական գերեզմանոցի բարեկարգումը և որոշ գերեզմանաքարերի փոխարինումը նորերով, հողաշեն կիսավեր շենքերի վերացումը տաճարի արևմտյան կողմի աշխարհիկ շենքերի հյուսիսային ծայրում, նոր աղբյուրի կառուցումը և այլն: Աղբյուրը կառուցվեց ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով: Կառուցման մասին նրա ճակատային պատին փորագրված է հետևյալ արձանագրությունը.

«Շինեցաւ աղբիւրս այս ի յիշատակ
Աննիկի Դերձակեան Սերոբեան
ծնեալ ի Կ. Պոլիս յամի Տեառն 1896
և վախճանեալ ի Նիւ-Եորք 1959 ամի
արդեամբ քեռ նորա Հրանոյշի»:

Ս. Գայանեի վանքի բակում կառուցվեց նաև մատաղատուն: Ղալարապատի բակում տարիներ շարունակ օգտագործվող մատաղատունը խիստ մոտ էր գտնվում Մայր տաճարին: Այդ պատճառով էլ ավելի հեռու տեղում մի նոր մատաղատուն ստեղծելու հարցը անհետաձգելի էր դարձել ու ընտրությունն ընկել էր ս. Գայանեի վանքի բակի վրա:

Նոր մատաղատունը գտնվում է վանքի հարավային պարսպին մոտ, արևմտյան կողմի միաբանական շենքի շարունակությունը կազմող հողամասի վրա:

Ս. Գայանեի վանքում իրականացված վերանորոգման, շինարարական և բարեկարգման աշխատանքները հիշատակվածով չէին կարող սահմանափակվել, քանի որ տաճարի հետագա պահպանության շահերը պահանջում էին իրականացնել մի շարք անհետաձգելի միջոցառումներ: Այս կապակցությամբ 1976 թ. մարտի 11-ին մի հանձնաժողով՝ բաղկացած Հայկ. ՍՍՀ Պետշինի հուշարձանների պահպանության վարչության գիտական խորհրդի և ս. Էջմիածնի Մայր Աթոռի ճարտարապետների հանձնախմբի անդամներից, տեղում հանգամանորեն ծանոթանալով տաճարի վիճակին՝ մշակեց հետագայում կատարվելիք լրացուցիչ աշխատանքների ծրագիր:

Համաձայն այդ ծրագրի, նախատեսվում էր իրագործել հետևյալը.

ա. Եկեղեցու շուրջը, մի շարք տեղերում, հողը փորել-իջեցնել մինչև հատակը, պարզել հին շինության հիմքերի վիճակը, անհրաժեշտության դեպքում ձեռնարկել ամրացման աշխատանքներ:

բ. Իջեցնել եկեղեցին շրջափակող մայթերը հարավային և արևելյան կողմերում երեք, իսկ հյուսիսային կողմում՝ մեկ աստիճանով:

գ. Մայթերի իջեցման աշխատանքներն իրականացնել հատված առ հատված: Միաժամանակ, համապատասխան չափով, նույն տեղերում իջեցնել գոյություն ունեցող տապանաքարերը:

դ. Հեռացնել նախագավթի ներսում (առագաստների ու գմբեթի վրա) գաջի սվաղի մնացորդները:

ե. Մաքրել-ամրացնել նախագավթի որմնաքարերը:

կ. Շարունակել և ավարտել տաճարի բոլոր պատերի մեջ շաղախի ներարկումը:

է. Տաճարի ներսում քանդել-վերաշարել հարավ-արևմտյան կողմի խարխլված թաղածածկը, անհրաժեշտ մասերը լրացնել նոր քարերով: Լրացնել պատերի և մույթերի քայքայված ու պակասող քարերը՝ հնարավոր դեպքում կցոններով:

ը. Դրսի կողմից կատարել ծածկերի ամրացումներ, վերանորոգել վեղարի ծածկասալերը:

1976 թվականի երկրորդ կեսի ընթացքում, մինչև տարեվերջը, իրականացվեցին վերը շարադրված ծրագրի ա-ե կետերը:

Առանձնապես բարերար ազդեցություն ունեցավ տաճարի շուրջը եղած մայթերի իջեցումը: Այն ոչ միայն ապահովեց հիմքերը խոնավության ներծծումից, այլև վերականգնեց նախկին համաչափությունները և ավելի բարեկազմ դարձրեց եկեղեցին:

1958 թվականին ս. Գայանեի եկեղեցու վերաշինության սկզբնական աշխատանքների համար ֆրանսահայ գաղութը տրամադրեց կարևոր մի գումար: Ապա, 1977—1979 տարիներին տաճարի ամբողջ ծածկը և գմբեթները հիմնովին վերանորոգվեցին նոր քարապատումով լոնդոնահայ Հարություն Մութաֆյանի նվիրատվությամբ:

(Շարունակելի)



ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ
ԱՐԾԻՎ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Հայ եկեղեցու և ժողովրդի պատմության մեջ 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած մինչև 20-րդ դարի առաջին տարիները Խրիմյան Հայրիկը հանդիսացավ ամենաականավոր դեմքերից մեկը: Նա եղավ Վարագա վանքի վանահայր, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք, Ամենայն Հայոց Կաթողիկոս: Բացի իր վարած հոգևոր բարձր պաշտոններից, նաև միևնույն ժամանակ հասարակական-քաղաքական գործիչ էր, մանկավարժ, գրող և բանաստեղծ, թերթի խմբագիր և գրքի հեղինակ, սպարանի հիմնադիր, լուսավորության տարածիչ, մեկ խոսքով՝ հայ մշակույթի պաշտպան, գիր ու գրականության քաջալերող և վերջապես ջերմ հայրենասեր, բացառիկ մի անձնավորություն:

Վասպուրականի Արծիվը ծնվել է 1820 թ. ապրիլի 4-ին Արևմտյան Հայաստանի պատմական Վան քաղաքում: Սովորել է Վասպուրականի Լիմ և Կտուց վանական դպրոցներում, որտեղ ստացել է հոգևոր հիմնական կրթություն: 1842 թ., երիտասարդ հասակում, նա մեկնել է Կ. Պոլիս և զբաղվել ուսուցչությամբ ու գրականությամբ: 1847 թ. Խրիմյանն այցելել է Պարսկաստան, Անդրկովկաս և Երուսաղեմ՝ ուսումնասիրելով տեղի հայության և եկեղեցիների վիճակը: 1848—50 թթ. նա ուսուցչություն է արել Խասգյուղի ազգային վարժարանում: 1851 թ. այցելել է Կիլիկիա՝ հատուկ նպատակ ունենալով ուսումնասիրել տեղի հայերի վիճակը: 1854 թ., երեսունչորս տարեկան հասակում, ձեռնադրվել է վարդապետ հայ ժողովրդին ծառայելու բարի նպատակով: Հաջորդ տարի Օսմանյան կայսրության մայրաքաղաքում, որտեղ հայկական մի մեծ գաղութ կար, նա հիմնադրեց «Արծվի Վասպուրական» անունով հայրենասիրական պարբերաթերթը, որը հետագայում տեղափոխվեց Վան, դարձավ շաբաթաթերթ և լույս տեսավ մինչև 1864 թ. Խրիմյանի, իսկ 1872—74 թթ. Մանվել Անանյանի խմբագրությամբ: Այս թերթը Արևմտյան Հայաստանում հանդիսացավ տպագիր առաջին պարբերաթերթը, որ հանդես եկավ լուսավորության զարգացման և կրթության տարածման ի նպաստ բազում հոդվածներով, հայրենասիրական գրություններով և գավառահայության մեջ թուրքական կեղեքումների և ճնշումների դեմ բողոքներով[1]:

Մկրտիչ վարդապետ Խրիմյանը 1856 թ. վերադարձել է իր ծննդավայրը և աշխատել օգտակար լինել տեղի իր հայրենակիցներին: Նա դարձել է Վարագա վանքի միաբան, ապա՝ վանահայրը: Այստեղ ժամանելուց մեկ տարի հետո հիմնադրել է վանքի Ժառանգա-

[1] Հայկական Սովետական Հանրագիտարան, Երևան, 1976, հատոր 2, էջ 73:

վորաց գիշերօթիկ դպրոցը՝ նպատակ ունենալով Հայ Եկեղեցուն պարգևել ուսյալ հոգևորականներ, իսկ հայ ժողովրդին էլ՝ կրթված ուսուցիչներ: Նա այստեղ շարունակեց հրատարակել Կ. Պոլսում հիմնադրած իր թերթը:

1862 թ. Խրիմյանին վստահվեց Տարոնի հոգևոր առաջնորդի պաշտոնն ու Ս. Կարապետ վանքի վանահայրությունը: Ժողովրդի ցավերով տառապող այս անձն այստեղ ևս հիմնադրեց Ժառանգավորաց մի նոր վարժարան, ինչպես նաև «Արծվիկ Տարոնո» երկշաբաթաթերթը՝ նրա խմբագրությունը հանձնելով Գարեգին վարդապետ Սրվանձտյանցին: Այս թերթը գրեթե առաջինի շարունակությունը հանդիսացավ իր կրթական-լուսավորական և հայրենասիրական բովանդակությամբ: Բացի այդ, թերթի հայրենասեր հրատարակիչները դրանով պայքարում էին քրդական և թուրքական հարստահարությունների դեմ, որոնց գլխավոր վոհերն էին լինում խեղճ հայ գյուղացիները:

Մկրտիչ վարդապետը 1868-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում օծվեց եպիսկոպոս՝ ձեռամբ Գևորգ Դ. Կ. Պոլսեցի Քերեստեճյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի և հաջորդ տարի ընտրվեց Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք, պաշտոն, որ վբաղեցրեց մինչև 1873 թ.: Խրիմյանը եղավ Կ. Պոլսի հայոց առաջին պատրիարքը, որ իր բողոքի ձայնը բարձրացրեց Օսմանյան կառավարության դաժան քաղաքականության և թուրք ու քուրդ խուժանների կողմից գործադրվող հարստահարությունների դեմ՝ աշխատելով թեթևացնել Թուրքիայի ներքին գավառների հայության քաղաքական-տնտեսական ծանր վիճակը և ստեղծել կյանքի ու ինչքի ապահովություն: Օրվա քաջակորով պատրիարքի նախաձեռնությամբ հայոց Ազգային Ժողովը 1872 թ. գարնանը Օսմանյան կառավարության ներկայացրեց մի տեղեկագիր-բողոքագիր գավառահայության դեմ շարունակվող հարստահարությունների մասին:

Խրիմյանի այս հանդուգն քայլն անջուշտ մեծ դժգոհություն առաջացրեց թուրք կառավարական շրջանակներում, ինչպես նաև մայրաքաղաքի հայ հարուստների մոտ, որոնք անձնական շահեր ու ակնկալություններ ունեին տիրող դասակարգից և հետադիմական Օսմանյան կառավարությունից, որի պատճառով Խրիմյան պատրիարքը ստիպված եղավ հրաժարվել իր պատասխանատու պաշտոնից:

1878-ին, Բեռլինի վեհաժողովի ժամանակ, որպես Կ. Պոլսի պատրիարք Խրիմյանին հաջորդող Ներսես Վարժապետյանի կարգադրությամբ, Բեռլին մեկնող հայկական պատվիրակության ղեկավար նշանակվեց Խրիմյան արքեպիսկոպոսը, որ արդեն «Հայրիկ» պատվանունով մեծարվում էր ամբողջ հայ ժողովրդի կողմից, իր ազգանվեր գործունեության և ժողովրդի նկատմամբ ցուցաբերած խիստ հոգատար վերաբերմունքի համար: Նա նախապես էլ եվրոպական «քրիստոնյա» պետությունների դռները բախելով՝ ջանացած էր լուծել հայկական հարցը, գավառահայությունն ազատելու թուրքական և քրդական շարունակվող հալածանքներից ու կեղեքումներից: Սակայն մեծ հոգու ու սրտի տեր Խրիմյան Հայրիկի բոլոր ջանքերն ապարդյուն մնացին, և նա հուսալքված վերադարձավ երկիր:

Վասպուրականի Գավառական ժողովը իր մեծ կավակին 1879 թ. ընտրեց Վանի հայոց առաջնորդ, որտեղ հաջորդ տարի նա հիմնադրեց երկրագործական մի ուսումնարան: Այդ և հետագա տարիներին Խրիմյանն աջակցեց Վանի և Կարինի հայ ազգային-ազատագրական գաղտնի կազմակերպություններին՝ հստակ կերպով տեսնելով, որ դիվանագիտակսն ճանապարհով այլևս անկարելի է լուծել հայկական հարցը: Այս պատճառով նա գավառից ետ կանչվեց Կ. Պոլիս, որտեղ Ազգային ժողովը 1890 թ., Խրիմյանի նախաձեռնությամբ, երկու տեղեկագիր-բողոքագրեր ուղարկեց թուրքական կառավարության հայկական հարցի վերաբերյալ: Մկրտիչ արքեպիսկոպոսի այս հանդուգն քայլը դուր չեկավ Օսմանյան կայսերական կառավարությանը, որի համար նույն տարում Խրիմյանը Կ. Պոլսից ազատորվեց Երուսաղեմ՝ բնակություն հաստատելով հայոց Սրբոց Հակոբյանց վանքում:

Խրիմյանի անձի շուրջ պտտվող այս բոլոր իրադարձությունները հայ ժողովրդի աչքին այնքան սիրելի դարձրին նրան, որ Մակար Կաթողիկոսի վախճանումից հետո, 1892 թ. մայիսի 5-ին, Ս. Էջմիածնում գումարված համազգային եկեղեցական ժողովը, ձայնների մեծամասնությամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց վտարանդիության մեջ գտնվող Վասպուրականի Արծիվին՝ Խրիմյան Հայրիկին, ընտրություն, որ համընդհանուր հավանության արժանացավ:

Նորընտիր կաթողիկոսն ավելի քան 14 ամիս մնաց Երուսաղեմում՝ սպասելով ցարական կառավարության հաստատման հրամանին, որի ստացումից անմիջապես հետո չորս հոգևորականներից բաղկացած մի պատվիրակություն Մայր Աթոռից ուղևորվեց Երուսաղեմ՝ Խրիմյան Հայրիկին պաշտոնապես և հանդիսավոր կերպով Ս. Էջմիածին հրավիրելու համար: Մկրտիչ Ա Կաթողիկոսը, ժամանած հրավիրակների հետ, ճամփա ելավ Երուսաղեմից և անցնելով Հոպպե, Ալեքսանդրիա, Կահիրե, Թրիեստե, Վիեննա, Օդեսա,

Սեբաստոպոլ, Բաթումի, Թիֆլիս և Երևան քաղաքներից՝ 1893 թ. սեպտեմբերի 12-ին ժամանեց Ս. Էջմիածին, իր ընտրությունից շուրջ 17 ամիս հետո: Երուսաղեմից Ս. Էջմիածին ճանապարհորդությունը տևեց մոտ երեք ամիս, որի ընթացքում Խրիմյան Հայրիկն արժանացավ հանդիպած և բոլոր միջանկյալ քաղաքների ու բնակավայրերի հայկական գաղութների ջերմ սիրույն և ընդունելությանը: Ճամփին ամենուրեք հայկական եկեղեցիներում մատուցվեցին ս. պատարագներ, տեղի ունեցան գոհաբանական մաղթանքներ, խոսվեցին քարոզներ և կազմակերպվեցին ընդունելություններ նորընտիր Հայրապետի պատվին:

1893 թ. սեպտեմբերի 26-ին Մայր Աթոռում մեծավայելուչ կերպով կատարվեց Մկրտիչ Ա Խրիմյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման արարողությունը նրա ընտրությունից շուրջ 17 ամիս հետո: Այդ հանդիսավոր արարողությունն առաջին անգամ լինելով կատարվեց բացօթյա, Մայր տաճարի գլխավոր մուտքի առջև հատկապես պատրաստված բարձր պատվանդանի վրա, որպեսզի ներկա բազմահազար ժողովուրդն ականատես լինի օծման այդ հոգեպարար արարողությանը:

Այնուհետև 1893 թվականից մինչև իր վախճանումը, որ տեղի ունեցավ 1907 թ. հոկտեմբերի 29-ին, Խրիմյան Հայրիկը, կաթողիկոսական գահին բազմած մնաց ավելի քան 14 տարի և կառավարեց Հայոց Եկեղեցին ամենայն խղճմտությամբ և ձեռնհասությամբ, հակառակ հայ ժողովրդի ծանր վիճակին ու կրած մեծ կորուստներին, հատկապես Արևմտյան Հայաստանում: 1895—1896 թթ. Արևմտյան Հայաստանի գավառահայության մեծ կորուստները, ապա Արևելյան Հայաստանի հայկական դպրոցների ու դպրոցական նպատակների կառավարական հսկողության տակ անցնելը, իսկ հետո դրանց գրավման որոշումը, ինչպես նաև Հայ Եկեղեցու ներքին ու արտաքին բազմաթիվ ցավերը մեծապես խոցեցին հայրենասեր և ժողովրդասեր հայրապետի սիրտն ու հոգին:

Խրիմյան Հայրիկը վախճանվեց 88 տարեկան ծերունապարդ հասակում: Նա թեպետև անկարող եղավ այդ բոլոր դժվարությունները հաղթահարելու, սակայն իր ամբողջ կարելին արեց հայ ժողովրդին փրկելու իր ծանր վիճակից:

Խրիմյան Հայրիկի մահվան հինգամյակի առթիվ, 1957 թ. նոյեմբերի 17-ին, Ս. Էջմիածնի Մայր տաճարում կատարված հայրապետական հանդիսավոր Ս. Պատարագին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր արտասանած քարոզում ասաց.

«Ո՜վ պաշտելի Հայրիկ մեր անմահ, տե՛ս, խաղաղ է երկիրդ քու սուրբ և հայրենի հողը բերրի իր կուրծքը կբանա քու թոռնիկներուդ աշխատանքով արդար, քու երազած ճարտար հնարքներովը արդի գիտության, պտուղներ տալով մեկի տեղ երեսուն, մեկի տեղ վաթսուն, մեկի տեղ հարյուր: Եվ կլեցվին ամբարները հայ շինականներու, առատ կհոսի ոսկեվազ գինին Արարատյան դաշտի և կբարձրանան քաղաքներն ու գյուղերը մեր շեն և համայն ժողովուրդը մեր, սուրբ տենդով կեղուն, կասպրի շինելով, կշինե երգով, լուսով, երազով...»[2]:

1983 թ. աշնանը լրացավ Հայոց Հայրիկի՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնում կատարված կաթողիկոսական հանդիսավոր օծման հինգամյակը: 1893 թ., երբ Խրիմյան Հայրիկն Երուսաղեմից ճանապարհորդեց դեպի Ս. Էջմիածին, ճամփին, ապա և հետագա օրերին Մայր Աթոռում նա արժանացավ հայ ժողովրդի բոլոր խավերի ջերմ զգացումների արտահայտությանը: Հայրենիքի բոլոր կողմերից հատուկ պատվիրակություններ եկան ներկա լինելու նրա օծման արարողությանը: Բազմաթիվ անհատներ, ազգային-հասարակական գործիչներ, մտավորականներ, եկեղեցական կազմակերպություններ, միություններ և այլն իրենց հեռագրերով, նամակներով և հատուկ ուղերձներով շնորհավորում էին Մկրտիչ Ա Խրիմյան Հայրիկի բազմելը Ս. Գրիգոր Լուսավորչի 16-դարյա պատմական գահի վրա՝ լավագույն մաղթանքներ անելով նորընտիր հայրապետին: Ճիշտ է, որ Ս. Էջմիածնի բոլոր կաթողիկոսները միշտ արժանացել են հանուր հայ ժողովրդի սիրույն ու ջերմ գնահատանքին, ինչպես այսօրվա Գահակալը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը, սակայն 1893 թ., ավելի քան հինգ հարյուր տարի իր ազատությունը կորցրած հայ ժողովուրդը մեծ ակնկալիքներ ուներ Վասպուրականի Արծիվից իր հայրենիքի ազատության և նրա ժողովրդի բարօրության համար:

Ստորև հրատարակում ենք մի շարք ուղերձներ՝ գրված 1893 թ. և ուղղված Խրիմյան Հայրիկին կանոնական անհատներից և ազգային-եկեղեցական կազմակերպություններից, ցույց տալու համար նախ ժողովրդի մեծ սերը նորընտիր հայրապետի նկատմամբ, ապա նաև, թե ի՞նչ էր սպասում ամբողջ հայությունը Վասպուրականի Արծիվից:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատանը պահպանված են այդ ուղերձներից որոշ թվով ձեռագիր գրվածքներ, որոնք հրատարակվում են այսօր առաջին անգամ:

---

[2] «Էջմիածին» ամսագիր, 1957, ԺԱ, էջ 46:

1. Հեռագիր № 653, Գողթան գավառ (Նախիջևան), 20 օգոստոսի 1893 թ. Գողթան գավառի հայ հասարակության կողմից:

Պաշտելի Հայրիկ,

Անսահման է ապգի ուրախությունը:

Այն օրը, երբ Քո մեծ անունը հնչվեց, կենդրոնաձիգ կորության նման դեպի ինքը քաշեց ամբողջ ապգի սիրտն ու հոգին. ապգի ընտրած պատգամավորները միաձայն Քեզ ճանաչեցին արժանավոր հաջորդ Լուսավորչի Գահին:

Շատ օրեր ու ամիսներ ենք անհամբեր սպասել Քո անձկալի գալստյանը, և ահա՛ այսօր միայն մեր իղձը կատարված ենք տեսնում ու անչափ բախտավոր ենք: Հին Երուսաղեմից նոր Երուսաղեմ մտնելդ ոչ թե ձիթենյաց ճյուղերով ենք ողջունում, այլ որդիական սիրո բուռն զգացմունքով:

Քո դյութիչ անձնավորությունը արդեն գրավական է մեզ համար, որ ապգի իղձերը իրագործվելու են: Միայն Դու ես, Հայրի՛կ, այն հսկայական զորության ներկայացուցիչը, որ ընդունակ է Տաճկահայ, Ռուսահայ և Պարսկահայ որդիներիդ մի հոգի ներշնչել և մի ապգի ընտանիք կազմել:

«Ագուլիսում միայն մեկ խաչ բավական է հավատացյալների աղոթքի համար, մնացյալ խաչերը թող ծառայեն գիտության ու դաստիարակության» ասացիր մեզ 1861 թվին, և ահա այսօր մեր բոլոր խաչերն ու եկեղեցիները հուսով, հավատով ու սիրով Քեզ են սպասում:

Ամենակարող Աստվածը Քո անձնվեր խնամքներին է հանձնում մեր ամենիս սիրտն ու հոգին, որ ուսման, դաստիարակության ու տնտեսության շավիղներով ապագայում Դու ունենաս «Դրախտի ընտանիք» ու նրա «Հայրիկը» լինիս:

Հայրական սուրբ օրհնությանդ կարոտ Գողթն գավառի, Վերին ու Ներքին Ագուլիս, Ցղնա, Տանակերտ, Հանդամեջ և Քաղաքիկ գյուղերի զոկ համայնքը:

1893 թիվ օգոստոսի 20, Գողթն գավառ:

Վերին Ագուլեցի (78 ստորագրություն)
Տանակերտցի (9 »)
Հանդամեջցի (4 »)
Ցղնայեցի (17 »)
Քաղաքիկեցի (6 »)
Ներքին Ագուլեցի (57 »):

2. Հեռագիր № 655, Ռուսճուք (Բուլղարիա), 7 օգոստոսի 1893 թ. Ռուսճուքի Թաղական խորհրդի կողմից:

Վեհափառ
Տ. Տ. Մկրտիչ Ա. Սր. Կաթողիկոս
Աստվածարյալ Հայրապետ
Ամենայն Հայոց.

Հայրապետդ մեր անզուգական,

Հերդ Վեհափառությունը՝ եթե ներողամիտ ակնարկ մը մեկ ի խոնարհ նվիրեր, բարեբաստ պիտի համարեինք զմեզ նվիրական պարտավորություն մը կատարել. ցնծությամբ կեղուն և շնորհապարտությամբ թաթախուն սրտերու թարգման հանդիսանալ որդիական ամենախոնարհ ակնածությամբ:

Սակայն ո՞վ կարող է արդյոք առանց Հեր հայրապետական ներողամտությունն հայցելու՝ բանիվ և տկար գրչով՝ ինչպես հանուր Հայկյան զարմիս՝ նույնպես Ռուսճուքի մերապնեից երախտապարտ սրտից անհուն գոհունակության, շնորհավորության և հափշտակության հավաստիքն նկարագրելու համարձակիլ՝ նկատմամբ Վեհափառությանդ երկնաձիր բարեմասնությանց և ապգասիրական անթերի արարքներուն՝ զոր ապգն լիուլի վայելած է և պիտի վայելե ընդ հար:

Վեհափառ Տեր, մեզ համար չկա անուն մը՝ որ այնքան հուզե ու վառե մեր սրտերն ու մտքերն՝ որքան **Հայրիկ** անունն. սույն պաշտելի անունդ այնպիսի դյութիչ զորություն ա՛ունի, որ ամենեն ավելի սառուցյալ սրտերն անգամ հայրենասիրությամբ կբորբոքե և անհնարին կընե այլևս լռել ու չգործել:

Արի ու բարի հովիվդ Ամենայն Հայոց **Հովվապետ** ընտրվելու լուրը հրատարակված օրեն՝ անհամբեր սպասյալ կմնայինք օրհնությունաբեր ուղևորությանդ դեպի Մայր Աթոռդ Առաքելական. ահա փա՛ռք Նախախնամության, կհասնինք այսօր մեր բաղձանաց լրման. այսօր երկինք հաշտ ակամբ ծագեց հայոցս պայծառ արև մի, փարատեց այն սևութույր ամպն, որ օր ըստ օրե ստվարանալով կսպառնար յուր խավարակուռ մթնոլորտին մեջ խեղդել Հայաստան աշխարհի մեր որբացյալ:

Երկնապարգև արեգիդ կենսավետ ճաճանչներն մեր սրտից այնքան խոր թափանցեց ու բորբոքեց՝ որ կհամարձակիմք ըսել թե՝ Վեհափառությունդ ոչ միայն ապգիս դարավոր վերքերն ամոքելու, այլ և զայնս իսպառ բուժելու համար ամեն խոչընդոտ առաթուր կոխելով անմահ դյուցազն մի պիտի հանդիսանա. ի մի բան Հեզմով պիտի դաղրի Հայ ապգին աղի հեղեղներն արտասվաց:

Արդ՝ Հայրապետդ մեր չնաշխարհիկ,

Ռուսճուքի ապգայինքս մեր մատաղերամ մանկանց օրհնությանց ջերմաջերմ մրմունջներն հար և Հեր թանկագին կենաց՝ տարածելով զԱթոռն Անմահին, որ ամենակարող պաշտպանությունը հովանի կմաղթենք Հեր մեհ գլխուն, թող Ինքն վարձատրե Վեհափառիդ ապգակեցույց ձեռնարկություններն և զորավիգ լինի ի գործս, և զՀեզ սիրելի Հայրիկ, աշխարհային խորշակներե վերծ կացուցանելով՝ փայլեցուսցե իբրև ջահ մշտավառ ի փա-

քրս ազգիս և ի մխիթարություն մեր ամենեցուն:

Որդիական ամենախոնարհ ակնածանք՝ կմատչիմք ի համբույր հայրապետական Ս. Աջույդ և Ձեր առաքելական օրհնությունն մեր և մերայնոց վերա հովանի կենսատու հայցելով՝

1893 օգոստոս 7

Ռուսճուք

Ե ս ք

Վեհափառ Հայրապետիդ ընդ միշտ ամենախոնարհ և հնազանդ որդիք Հայ Գաղթականություն Ռուսճուքի ի դիմաց Թաղ. Խորհրդ

Ատենադպիր Ատենապետ

Ն. Գ. Քեռդանյան Հկբ. Ա. Սարիփնյան:

3. Ձեռագիր № 656, Սլիվեն (Բուլղարիա), 9 հուլիսի 1893 թ. Սլիվենի հայոց օժանդակ ընկերության կողմից:

Դիվան

Օժանդակ Ընկերության Հայոց

Սլիվեն

Թիվ 44

Սլիվեն, 27/9 հուլիս 1893

Նորին Ամենաերանյալ Վեհափառություն

Տ. Տ. Մկրտիչ Ս. Կաթողիկոս

Խրիմյան Ածընտիր պաշտոնյա Լուսավորչավանդ Կաթողիկեին

Ս. Էջմիածնա և Ածարյալ Հայրիկն բազմաչարչար հայությանս:

Ի Վիեննա.

Սրբազնակատար Հայրիկ.

Ի բազում ժամանակաց հետե օսմ(անյան) փարավոններու բռնություններեն Ս. Փրկչին հայրենիքն ազատվինող, հայուն «Հայրենյաց Հայրիկ»-ը այսօր Գողգոթայեն կԱյրարատ և Տարպյան ժայռե ի Կապիտոլ բարձրացած լինելով, ամեն հայու սիրտ երանության խնծիղներով և ամեն հայ աչեր հակքիսի (?) արտասուքով կարտոսրին, և հայ եկեղեցական պատմությունն յուր հսկա և արյունաներկ էջերն մեծ ակնածանք կբանա, այս դյուցազնական պաշտելի անձնավորության, զոր հայ ազգն «Հայրիկ» հորջորջմամբ սիրեց միշտ կոչել:

Սուլթաններու բռնությանց դարավոր լուծին տակ հեծող հայն, կարծես յուր ցավոց թեթեվացում մը կգտա այսօր, անողոքելի ճակատագիրն կանխանվեր ք(ե)ր տնաց (?) գերի. բեռնակիր Վանցին ու Մշեցին վերակենդանության նոր ոգվով մը կլցվին. որբն ու այրին, թշվառն ու չվառն, գերին ու սովյալն, նոթին ու քաղցածն, տնանկն ու գոյավորն, վիրավորն ու մահամերձն, ծերն ու երախայն, հակիրճ ճամբան թորգոմական սերունդն հաղթական կամարի մը տակեն. նոր կենաց ասպարիզի և նոր պատմության մը դարագլխո մեջ թակոխելով, վերածնության շրջանի մը մեջ կմտնե և երկինք, գոգցես գթալիր առ մեկ, «երջանիկ» մակդիրով կդրոշմե այսօր հայուն աննկուն լայն ճակատն, և հայությունն յուր ներկա քաղաքական անհանդուրժելի կացության մեջ, Ձեր Վեհափառությունը, Ածատուր Գահույիցդ վերա բազմած տեսնելով, նվաղկոտ այլ հուսալից աչքերով, ակնապիշ և անքթիթ առ քե՛զ, առ քե՛զ միայն կհայի, Ո՛ Հայրիկդ Հայրենյաց:

Վերնախնամ տեսողությունն, Ասքանազյան Ազնն թրքական փարավոններու մահաստվեր բռնություններեն ազատելու, և վամենեցանս Այրարատյան Ածաճեմ դրախտավայրն փոխադրելու համար, Քրիստոսաճեմ սրբավայրի մը խորեն, Հիսուսական ձայնիվ ի պաշտոն կոչելով զձեր Վեհափառության լուսավորչակուռ Գավազանավդ, ըստ օրինակի երջանկահիշատակ նախորդիդ «Ներսեսի» Ե. Աշտարակեցվո, զմեզ փորձության և հեղափոխության օվկյանեն առ հայրենին մեր վերադարձնել պատվիրելով, մեր վշտաց ու կսկիծներու մխիթարիչ հայր կկոչե զքեզ:

Բա՛վ է, Հայրիկ, բա՛վ է, իսուր մեր ուղեխարշ կականներովն ջանացինք ի գութ շարժել զԵվրոպան. ի նանիր մեր հոգեմաշ լալիսներովն խլացուցինք անգութ թրքին պուսիդոնական երկաթակուռ ականջներն, վայրապար մեր հանապազօրյա աչերանաց ավազներովն բաղխեցինք երկնից՝ գթության Այ դրունքն և ի վրեպ հուսադիր եղանք մեր ժողովրդանենգ եկեղեցականաց ոմանց, որք յուրյանց անձնական շահուն խեթ զոհեցին ազգիս և եկեղեցվո շահերն: Հոս ցավ, հոն վիշտ. աստ մահ, անդ լաց:

«Առ ո՞ ուղղեմք զանհուն աղետս Հայ Ազգին.
ցե՞րբ հուսավիրկ դիմենք առ Էն ի հերկին.»
«Զի՛ Հայրիկ, զի՛ ի քեզ, ի քեզ հուսամք
մենք. զքեզ միայն պաշտեմք, զքեզ միշտ սիրեմք.»
«Մենք հարազատ որդիք քո եմք հավիտյան.
մեզ հայրենիք պիտի կամ մահ, Խրիմյա՛ն.»
«Հերիք մեր լացն, մեր կոծն, ալ բա՛վ է,
հերիք. մեր հայրենիքն ի քեն խնդրեմք,
ո՛ Հայրիկ:»

Ահա այս են մեր և հանուր հայության իղձն ու ակնկալությունն, մեր գաղափարաց կեդրոնացումը, մեր ջանքերն, մեր վկայումներն, մեր կյանքն ու գոյությունն, մեր պաշտելի Հայրենիքն է միայն, Հայրիկդ հայրենյաց. և այսու մեծ իրավամբ հայկական եկեղեցական համաստեղության մեջ ձեր Վեհափառությունը միայն ճանչնալով մեր կենսատու Արուսյակն, մեր Մովսեսն, առ քե՛զ այս, առ քե՛զ միայն կուղղեմք մեր ցավերն և վշտերն, մեր խնդիրքն ու հույսն, մեր լացն ու

կոծն. և որդիական ակնածանք հանուն Իսլիմեայու հայ գաղթականության և հանուն Թորգոմական տան, Ռուսիո մեծապանծ կայսրության ամենաողորմած ցարին մոտ ձեր Վեհափառության աջակցությունը խնդրելով, Նորին Կայսերական Վեհափառության գթության աղոտ նշույլն կհայցեմք այն ապգին համար, որ յուր աշխարհահռչակ և նշանավոր պաշտոնյաներովն դափնեպսակ անմահացուց Ռուսիո մեծավոր կայսրության քաղաքական պատմությունն ու կայսերաց փառքը, որոց արևշատության աղոթարկու է միշտ հայն առ հաստիչն տիեզերաց, առ Ածն հավիտենից:

Որդիական ամենախորին ակնածանք՝ կարոտակեզ շրթանց կրկնակի համբուրիվ, մատչելով ի համբույր Ածօրհնյալ հայրական աջույդ.

Եմք ամենախոնարհ որդիքդ
ի դիմաց
Օժանդակ Ընկերության Հայոց Իսլիմեայու
Ատենադպիր Ատենապետ
Խաչիկ Հ. Թռաքչրյան Նապարեթ Պողոսյան
անդամք՝
Սիմեոն Պ. Ունճոյան
Արտաշես Կարապետյանց
Հայկ Թորգոմյանց:

4. **Ձեռագիր № 659, Լայպցիգ (Գերմանիա), 29 հուլիսի 1893 թ. Լայպցիգի հայ ճեմարանական ընկերության կողմից:**

Աստվածարյալ Տ. Տ. Մկրտիչ նորընտիր Հայրապետ Ամենայն Հայոց և Ծայրագույն Պատրիարք Մայր Աթոռ Կաթուղիկե Ս. Էջմիածնի:

Վեհափառ Տեր,

Լցան ավուրք սգո Կաթուղիկե Մայր Աթոռոյն. ցնծալից բերկրին այսօր հայորդյանքն. վի աջն Հոր Ամենակալի, որ անշարժ պահե զԱթոռ Հայկազնյայց, զորավիգն Հորդ լյալ Հայաստանյայց՝ տա ստանալ ի գահն հայրապետական:

Անդ ակնկառույց դասք կրոնավորաց Հայաստանյայց Առաքելական ս. Եկեղեցվո կան և մնան Վեհափառ Հայրապետին յուրյանց, անդ աղածրի մանկտին ըղձալի մերոց հայրենյաց մնան սրտաբաղխ հորն յուրյանց վեհագունի. անդ և հոտն քրիստոսյան ապգն հայոց ողջույն լիաջուրթն օրհնությամբ ակն ունին ակնապիշ ավետավոր ժամանման Հովվապետին Հայաստանյայց, վի լրումն ապգի ապգի խնդրոց ի Վեհեն ակնկալեն յուրյանց ի Պետեն: Եկեղեցին զուրն ցանկա ի Պետեն յուրմե առնուլ զբաժին. դպրոցն զյուրն զմասն խնդրե. իսկ ապգն ողջույն, որ ի սփյուռս Մայր հայրենյաց՝ զյուրն հայցե լնուլ զկարոտություն:

Սակայն ձայնն բազմաց՝ ձայն համորեն Հոտին, որ կոչեն զՀայրիկն յուրյանց ի գահ ս. Լուսավորչին, կա ի սպասու միշտ Վեհիդ առ ի լնուլ զպետս կարյաց բազմակարոտն ապգին. սերն սրբանվեր որդիական, որով լցյալ են սիրտք համայն հարազատ որդվոցդ, զորացուցանե զՁեզ մեծավոր զորությամբ. աջն Միածնին առաջնորդ Ձեզ եղիցի. և հոգիք սրբազնասուրբ նախորդացն Ձերոց կան ի թիկունս արժանընտիր Հաջորդին յուրյանց: Այո՛, Վեհափառ Տեր, այսոքիկ, որք անցուցին զՀայրիկն հայոց ընդ հուր և ընդ ջուր, այլ և ասեմք և ընդ սուր և ամբարձին ի գահ Ծայրագույն Պատրիարքի, այսոքիկ և հայսմիտետ զորավիգն Ձեզ լիցին համենայնի:

Արդ և մեք,- Վեհափառ Տեր, տարաշխարհ և հարազատ որդիք Մորն Լուսո Կաթուղիկե Ս. Էջմիածնի, որ ի սփյուռս Գերմանիոն, հայրական նվիրական ավուր մատչիմք ի համբույր աջույդ սրբական՝ և ամենեքին ընդ մի բերան մաղթանս վերառաքեմք առ Բարձրյալն լսան երկարության կենաց Սրբությանդ՝ խոնարհաբար խնդրելով զօրհնություն աստվածարյալ Հայրապետիդ:

Համին 1893
ի 29 Հուլիս ամսո
ի Լայպցիգ:
Ի դիմաց հայ-ճեմարանական
Ընկերության որ ի Լայպցիգ.
Նախագահ Վարչության՝ Ա. Խաչատրյան
Ատենադպիր՝ Լևոն Բաբայան:

5. **Ձեռագիր № 660, Փարիզ (Ֆրանսիա), (1893 թ.) Փարիզի հայ ուսանողության կողմից:**

Նորին Վեհափառության
Տյառն Տյառն Մկրտչի Առաջնո
Սրբազնակատար Կաթուղիկոսի և
Ծայրագույն Պատրիարքի Ամենայն Հայոց.
Վեհափառ Տեր,

Այսօր երբ ի սփյուռս աշխարհաց վտարյալ՝ համայն հայության սիրտ ի խինդ բերկրյալ ցնծա հընտրություն Վեհիդ ի Գահ Առաքելանման Սրբո Հորն Մերո Գրիգորի Լուսավորչին, քանի՞ոն ապա և մեզ հրճվիլ, որդվոցդ օտարաբնակ, որք ի մանկութենե անտի սնյալ ի վարդապետություն հայրենախոս Երգչիդ «Հրավիրակին Այրարատա» ընդ օտար աստեղոք, ոգի ի բռին, աչք հերեր առ Հայրենիս, դուն ի գործ արկանել բերել զնմանություն որդվո արժանվո Հորդ անզուգականի:

Անհուն է բերկրություն մեր, վի թե՞ Ձեռք վերացավ սուգ Եկեղեցվո Անդրանկանն, Ձեռք վերասցի և աղջամուղջ տգիտության հերկրեն Վեհագունից, Ձեռք լցուսցին իղձ փափագանաց Ազինն Թորգոմյան:

Արդ՝ առաջի առնելով Ձերումդ Վեհափառության զընկերակիցն մեր Հակոբ Մելիք-Բախտամյան, որպես թարգման սրտից մե-

բոց, կոչեմք բարձրաձայն. Կեցցե՛ հավետ Վեհափառ Տերն Մեր Խրիմյան, Կեցցե՛ հավիտ Հայրիկն Հայրենյաց:

Մնամք հայցողք Երկնաձիր օրհնությանդ ուսանողք Փարիզու.

(12 ստորագրություններ)

Եվ մեք, գոանելով հոստանն Գաղղիո, կցորդեմք կսրտաբուղխ ցնծությունս մեր ընդ ուսանողս վասն ընտրություն Վեհիդ ի գահ Ս. Հորն Մերոյ Լուսավորչի՝

Ուսուցչապետ՝ Գ. Ղամբարյան
Նախկին ուսանողուհի՝ Օլ. Զեիմյան:

6. Ձեռագիր № 661, Վառնա (Բուլղարիա), 5 օգոստոսի 1893 թ. Վառնայի թաղական խորհրդի կողմից:

Նորին Վեհափառություն
Տ. Տ. Մկրտիչ Ա. Սրբազնագույն
Կաթողիկոս և Գահակալ վեհապանծ
Աթոռույն Սրբո Էջմիածնի.

Վեհափառ Տեր,

Արարատի վայրավատին ու հալածական ժողովուրդը չէր կրնար ասկից ավելի մխիթարություն ունենալ, բայց եթե տեսնել, որ **Արարատյան Հրավիրակը** ժողովրդյան միահամուռ փափաքանոք կուգար բավմիլ Իջման տեղվո առաքելական և սլատմական փառասլանծ Գահուն վերա:

Հայ ժողովուրդն երկու սրբազնագույն զգացումներ ունի, մին՝ կրոնական և մյուսն՝ ազգային. կրոնական զգացումը կսեռի դեպի **Ավետյաց երկիր** և ազգային զգացումը՝ դեպի **Արարատ:** Եվ արդ՝ **Վեհափառ Տեր, Սրբազնագույն Գահակալդ,** մեկ ձեռքով հայ ժողովուրդն Ավետյաց երկիր և մյուսով Արարատյան երկիր առաջնորդելու համար կրկնակի հրավիրակնելով մեր սիրտն ու հոգին դեպի այդ երկիցս սուրբ երկիրները մագնիսելե կենի, ամենայն ռուսաց ողորմած թագավորկայսեր հավանությամբն կմեկնիք երկնավոր թագավորչին չարչարանաց վայրեն երթալ բավմելու հայոց սրտին կեդրոնն ի Սուրբ Էջմիածին:

Անխելահաս վարչություն մը չի կրցավ կամ չուզեց քննել և խելամտիլ **Վեհափառ Տյառնդ** երիկամունքը, ընդվզյալ կարծեց այն անվուգական և պատվական անձն, որ հայտնի համարձակ իբր գլուխ բավմաչարչար, բայց գնահատելի ժողովրդյան, երկրին վիճակը, ազգին պետքը մատնանիշ ցույց կուտար և դարմանը կպահանջեր՝ շեշտելով, ո՞ր պետք էր վտարել այս չարչարյալ ազգին Պետն—ի Գողգոթա,—և ահա տիեզերական համայն հայոց սիրույն միակ առարկային՝ **Վեհափառ Տյառնդ** վիճակյալ է փոխանակ Վոսփորեն անսայթաք Պաթում և անտի Տփղիս ուղևորելու, Հոպայեն Աղեքսանդրիա, Թրիեստե, Վիեննա, Օդեսա և անտի Պաթում ուղևորիլ:

Հայության կարևոր կեդրոնը՝ Պոլիս, ամենամեծ անձկությամբ կսպասեր յուր սիրեցյալ **Կաթողիկոսին** շնորհաբեր գալուստն ողջունելու, բայց շատ բաներ կլացված այս ազգին և յուր սիրելի **Վեհապետին,** կայս ևս կլացան և չներեցին նեղուցներեն անցնիլ, ինչպես որ չպիտի ներեին ահարկու տերության մը նավատորմիղին անցանիլ, բայց այսու միջոց ընձեռեցին արդեն ցասյալ ժողովրդյան ցասումն ավելցնելե կատ, դաշնադիր վեց տերությանց միույն մայրաքաղաքին մեջ լռիկ, բայց խորհրդավոր ցույց մը ըլլալուն հանդեպ յուր սիրեցյալ **Կաթողիկոսին:**

Եվ այս ինքնաբուխ հանդիսադրության տրուպ որդեկացս կողմանե ամենախոնարհ թարգման մը կացուցանելու փափաքով, այս անգամ տեղվույս կղերականներեն Արժանապատիվ Տեր Օհան Մանդակունին միահամուռ որոշմամբ և հավանությամբ կհամարձակիմք հուղարկել հոտս սրբազնասուրբ և հրեշտակատիպ **Վեհափառ Տյառնդ,** մեր խնդակցություններն, բարեմաղթություններն, ինչպես նաև մեր որդիական ակնածու զգացումները մատուցանելու:

Քաղցր է մեզ ակնկալել, **Վեհափառ Տեր,** որ Աստված բարեգութ՝ երկար կյանք պարգևելով նոր ումն Զորաբաբել պիտի հարուցանե հանձին **Սրբազնագույն Հայրապետիդ,** այս բավմաչարչար ժողովուրդն՝ որ անցավ ընդ հուր, ընդ ջուր և ընդ սուր, ի նավահանգիստ խաղաղության հասցնելու համար առ ոտն Արարատա, տառապանաց ջրհեղեղն սլատելով կայն:

Մատչելով ի համբույր սրբազնասուրբ և խնկաբույր Աջույդ՝

Եմք և մնամք **Վեհափառ Տյառնդ** ամենահնարհ ծառայք և որդիք:

5 օգոստոս 1893
Վառնա

Ի Դիմաց Թաղական Խորհրդոյ
Ատենադպիր՝ Ատենապետ՝
Մատաթյա Սյուքյասյան Պ. Փափազյան

7. Ձեռագիր № 662, Թիֆլիս (Վրաստան), (1893 թ.) Թիֆլիսի հայ ուսուցչուհիների և ուսուցիչների կողմից:

Ազգընտիր Հայրապետ.

Ամբողջ կես դար Հայաստանի ավերակները ողբալով, հայ աստանդական ժողովրդի ցավերը հոգալով, հավատի ու մամուլի վենքով՝ խաչով ու գրչով հայ աշխարհից տգիտության խավարն ու բռնությունը հալածելով, հայ զլուղացու, հայ աշխատավոր, բայց անպաշտպան դասակարգի ուրախությանը խընդակցելով ու նրա ցավերով տանջվելով, նրա արդարացի դատը օսմանյան գահույքից ընկրսած՝ մինչ Բեռլինի վեհաժողովը պաշտպանելով և ամեն ալրկանքների ու խոչընդոտնե-

րի հաղթելով, վերին Տեսչության տնօրինությամբ և սիրելի ազգիդ միահամուռ ընտրությամբ այսօր գալիս ես բազմաչարչար Գրիգորի, Հայաստանյայցս հավատոհոր՝ Ս. Լուսավորչի Գահը բազմելու.—Գալուստդ բարի:

Հայ ժողովուրդը Ձերդ Վեհափառության հաստատվելու և մանավանդ Երուսաղեմից դեպի Լուսավորչի Գահը, դեպի Արարատի ծոցը մեկնելու օրից անսահման բերկրությամբ մի համայն ազգային տոնախմբության մեջ է: Հայրիկին հավատում է ամեն մի հայ անչափ նվիրականությամբ, Հայրիկին սիրում է յուրաքանչյուրը մեկանից անհուն սիրով, Հայրիկին պատրաստ է հրճվանքով հպատակվելու ամեն մի հայ: Հայրիկի մեջ հայ ժողովուրդը ամփոփված է տեսնում յուր գաղափարները, յուր իղձերն ու տենչանքները: Այդ բավական չէ. Հայրիկն է միակ հսկան, միակ անպարտելի բարոյական ուժը, միակ դյութական բազուկը, որը կարող է իրագործել նրա նվիրական ցանկությունները. Այդ անզուգական հեղինակությունն է, այդ կենդանի մարմնացյալ սրբությունն է, որը, այո՛, այսօր մի փոթորկալից շարժումով ամբողջ հայությունը խմբել, միացրել է ի մի համերաշխ ընտանիք, ի մի բախտավոր տուն և լարել է այդ ընտանիքի, այդ տան ուշադրությունը դեպի յուր կառավար Նահապետի ճանապարհը: Դա մի հրաշալի պատմական րոպե է մեր ցիր ու ցան և անհատական բնապդումներով խմորված հայության մեջ. մի րոպե, որի նմանը գուցե կապվի միայն Ղեվոնդ Երեցի հիշատակի արժանի ժամանակների հետ: Ի՞նչ կտա այդ րոպեն՝ դա ապագայի գաղտնիք է, սակայն ներկայիս համար րոպեն կենդանարար է, ազդեցիկ է, բարեբեր է և շատ ու շատ բեղմնավոր յուր հետևանքներով: Կեցցե՛ հայության Հայրիկը. կեցցե՛ նա, որ ստեղծող է մի նշանավոր պատմական վայրկենի, կեցցե՛ Վասպուրականի Արծիվը, որ այժմ Արարատի Արծիվ պետք է դառնա:

Այս հանդիսավոր րոպեին, այս անմոռանալի օրը, որ հայ ազգի ու Եկեղեցու պատմության մեջ փայլուն էջեր պետք է գրավե, Հայ Եկեղեցու ու ժողովրդի ցնծության ձայներին միացնում է յուր անկեղծ բերկրանքը հայ մանկտվռ դաստիարակության մշակ, հայ վարժուհիների ու վարժապետների համեստ գերդաստանը,—փառաբանելով Արարչին, որ հայ մտքի անդաստանի բարձրագույն խնամքըն ու հովանավորությունը հանձնել է այն վեհ Դիտապետին, այն մեծ Ուսուցչին, որի հանճարն այնքան բազմաթիվ ու անմոռանալի ծառայություններ է մատուցել ժողովրդի կրթական գործին: Հայրիկի հետ այլևս դրժվարություններ չկան ուսուցիչներիս առաջ. Հայրիկի հետ մենք բաղդավոր կլինինք ամենածանր պայմաններում: Ասա՛, պահանջի՛ր, գո՛րծ ասա՛ր, հրամայի՛ր, մենք պատրաստ ենք:

Հաճի՛ր, Վեհափառ Հայրապետ, թույլ տալ մեզ մատչելու Սուրբ Աջիդ և հայրական օրհնությունդ ստանալու:

(Ողերձի ներքևում կա 77 ուսուցիչ-ուսուցչուհիների ստորագրությունը):

8. Տպագիր, Թավրիզ (Պարսկաստան), 17 սեպտեմբերի 1893 թ. Թավրիզի Արամյան և Ս. Աննայի երկսեռ դպրոցաց ուսուցիչների և ուսուցչուհիների կողմից:

«Այժմ ծանեաք, զի կեցոյց Տէր զՕծեալ իւր».

ՈՒՂԵՐՁ

Ի դիմաց ուսուցչական խմբի Արամյան և Ս. Աննայի երկսեռ դպրոցաց, որ ի Դավրեժ:

Աստվածընտիր Հայրապետ,

Անբավ են բերկրանք և անպատում հրճվանք սրտից որդվոցս Թորգոմա ընդ գալուստ Վեհիդ Մեծի ի Նոր Սիոն և ի սերկյան ավուր քանի երանի՜ առն, որ ի տաճարիս մատչի ի համբույր Սրբո Աջույդ և ողջույն Մեծի Հորդ տա ի համբառնալ ի Գահ, որ բազմեցանն Ս. Գրիգոր, Մեծն Ներսես և Ս. Սահակ:

Խարիսխ ազգությանս ապաքեն, Վեհափառ Տեր, Առաքելականս է Ս. Եկեղեցի. Սա է լաստ, որ ի հանգրվանն ուղղե անքույթ՝ կնավաբեկյալս: Ընդ ժամս ժամս մարդկայինս տկարություն հեցյալ ի թյուր վարկածս՝ վարանի ընդմիտս վհատատութենե Սորին, այլ Որո հիմունք եղան ի ձեռն Միածնի, Ույր շաղախ եղև քրտամբ և արյամբ Հարց սրբոց և Հայրապետաց, Դա և ի պատեհի հարուցանե զՀայրիկդ Հայրենյաց: Զարդիս տարակո՞ւս ինչ իցե, եթե անդրդվելի է խորանդ հավատոն և զի դրունք դժոխոց ոչ իշխեսցեն հաղթահարել զԴա:

Այլ ուր կայա՞նդ լուսո, ուր նսեմ գիշերո, և զի պատճառ առաջնույդ ի կյանս՝ ուսումն և գիտություն, վասն որո և հաղերս անկանիմք հեղով ի վերա մեր զշնորհատու օրհնությունդ, զի սատար կալյալ մերում ջանից փույթ կալցուք ճախրել հետ ընդ հետ հաղջամղջ տգիտության ի կատարյալ պսակ Վեհիդ, հՈրմե բազում ինչ ակնկալե որբացյալ ժողովուրդ Հայոց, որ ի Պարսս, և հանապազորդյալ մեր հաղոթս ընդ մանկտվույս երկոցունց սեռից, «որոց է արքայությունն երկնից», վերառաքեմք անդրեն առ Բարձրյալն խունկս մաղթանաց առ ի հերկարել զթել կենաց Արծվոյդ Վասպուրականի ի փառս Եկեղեցվո և ի բարգավաճումն ազգիս:

Տեսուչ՝ Տիրսն Նիկողայոսյան Գալֆայանց

(ապա ներքևում կա երկու դպրոցների 11 ուսուցիչ-ուսուցչուհիների տպագիր ստորագրությունը):

17 Սեպտեմբերի 1893.

Դավրեժ:

9. Ձեռագիր № 652, Մանչեստր (Անգլիա), 1878 թ. Մանչեստրի հունաց առաջնորդ Մորոս Իկոնոմու արքեպիսկոպոսի կողմից:

(Սույն ձեռագիրը գրված է հունարեն և տրված Մորոս արքեպ. Իկոնոմուի կողմից Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմյանին, երբ նա 1878 թ. հունիս և հուլիս ամիսներին Բեռլինի վեհաժողովին ներկայանալու համար ճանապարհին այցելում է Վիեննա, Փարիզ և Լոնդոն: Խրիմյան Հայրիկն այն ստացել է Լոնդոնում կամ Մանչեստրում: Թեպետև այն կապ չունի Վասպուրականի Արծիվի Կաթողիկոս օծման հետ, սակայն իր պատմական արժեքի համար թարգմանաբար տպագրվում է այստեղ):

Ձերդ Գերաշնորհություն Հայոց Պատրիարք Տեր Տեր Մկրտիչ Խրիմյանին:

Ազգային հպարտությամբ, որպես հույներ և քրիստոնյաներ, ողջունում ենք Ձերդ Սրբությանը, տեղի հույն համայնքի և համայն հունական Եկեղեցու անունից, որպես ցավակից եղբայր քրիստոնյա Ձեր հոտին հասած պատուհասների, գիտակցում ենք այն անտանելի լուծը և ծանր հալածանքները, որոնց մեր կույգ ժողովուրդներն ենթարկվել են երկար դարերի ընթացքում:

Հղում ենք նաև Ձերդ Սրբությանը մեր սրտաբուխ մաղթանքը, որ Դուք Ձեր կոչումի բարձր գիտակցությամբ, Ձեր ազգային իրավունքները հետապնդելով՝ դրանք իրականացած տեսնեք:

Որպես հույներ և եղբայրներ հայ ազգի, որի հետ մեկ կապում են քրիստոնեական մեր առաքելական ավանդություններն ու բազում տառապանքներ, գալիս ենք արտահայտելու մեր ուրախությունը Ձերդ Սրբության ժամանման նպատակի առնչությամբ և հայտնում մեր անկեղծ մաղթանքները Ձեր սուրբ նպատակի իրականացման համար:

Տրված Ձերդ Սրբության ցավակից Ձեր խոնարհ ծառայի կողմից:

Մանչեստր, 17/29 ապրիլի 1878.

+ Մորոս աքրեպիսկոպոս Իկոնոմու:

Ն. ՏԵՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Շուրջ երեք ամիս Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը հյուրը եղավ թեմիս բարեխնամ առաջնորդ Տ. Աղան եպիսկոպոս Պալիոյանի ու թեմական խորհրդի և եկեղեցականի իր բարձր հանգամանքով ու բայի կամեցողությամբ, իր քարոզներով և կանական առիթներով ունեցած ելույթներով հորդորեց հայ հավատացյալներին մնալ հավատարիմ վավակները Մայր Եկեղեցու և Հայաստան աշխարհի:

Սրբազան հայրը Սիդնեյ ժամանեց 1983 թ. նոյեմբերի 17-ին և օդանավակայանից ուղիղ առաջնորդվեց հայոց եկեղեցի, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով, ապա հաղորդեց Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու բարեմաղթությունները և խրախուսիչ խոսքերով թելադրեց ներկաներին աչքի լույսի պես պահել ու պահպանել հայ հավատքը և մշակույթը:

Հաջորդ կիրակի, թեմիս առաջնորդ Տ. Աղան եպիսկոպոս Պալիոյանը պաշտոնապես իր և թեմի անունից բարի գալուստ մաղթեց սրբազան հորը և նրան հրավիրեց իր պատգամը տալու ներկա հավատացյալներին: Բարձրաստիճան սրբազան հյուրը Ավստրալիայում իր կեցության օրերին, լինի Սիդնեյի Ս. Հարություն կամ Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցիներում, «Բանին կենաց» քարոզությամբ մխիթարեց բարեպաշտ հայ հավատացյալների հոգիները: Եղան բազմաթիվ առիթներ, երբ Տ. Սիոն արքեպիսկոպոսը ականատեսի վկայությամբ պատմեց Վեհափառ Հայրապետի բազմարդյուն գործունեության և այն շինարար աշխատանքների մասին, որոնք կատարվում են Մայր Աթոռի ներքին թեմերում: Սրբազան հայրը նաև ասաց, որ հինգ տարիներից ի վեր բնակվում է Սուրբ Էջմիածնի վանքում և մոտիկից ծանոթ է Հայաստանի վերջին տարիների հսկայաքայլ վերելքին ու նվաճումներին: Հայրենի երկիրը արագ աճում է և բարգավաճում:

Տ. Սիոն արքեպիսկոպոսի այցելության առթիվ ավստրալահայ համայնքում, ի պատիվ նրան, տրվեցին ճաշկերույթներ, տեղի ունեցան մի շարք հավաքույթներ և պաշտոնական հանդիպումներ, որոնց ընթացքում սրբազան հայրը կրկին ու կրկին հորդորում էր բարձր պահել հայ անունը և հայ լեզուն այս հեռավոր ցամաքամասում և առավել ամրապնդել կապը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ, որովհետև, ինչպես նշեց սրբազան հայրը, «Մայր Աթոռը, ինչպես և հնումն, նույնպես և այսօր Հայ Եկեղեցվո կենտրոնն է. և ինչպես անցյալին, այսօր ալ նախախնամական դեր կկատարե սփյուռքի հայության գոյության և պահպանության համար»: Այնուհետև սրբազան հայրը, խոսելով Հայաստանի նվաճումների մասին, ասաց, որ «Հայրենիքի մշակույթի և արվեստի կապը շատ կորավոր է սփյուռքի հայության հետ: Հայաստանի արվեստագետները՝ արվեստի, գրականության, երաժշտության, երգի ու պարի վարպետները, նոր շունչ ու ոգի կներշնչեն հայ գաղութներուն և կամրապնդեն անոր հայրենասիրության կապը Մայր Հայրենիքի հետ»:

Մեկնելուց առաջ, հրաժեշտի իր ելույթի մեջ նա մասնավորապես նշեց, որ ավստրալահայ գաղութը պետք ունի նոր ու հայկական ճարտարապետական ոճով կառուցված մի մեծ եկեղեցու ու նույնպես շատ կարևոր հայկական ամենօրյա դպրոցների:

Շուրջ երկու և կես ամսվա արդյունավետ այցելությունից հետո, սույն թվականի փետրվարի 1-ին Տ. Սիոն արքեպիսկոպոսը օդանավով մեկնեց Ամերիկա՝ վստահաբար լավագույն հիշատակներով ու տպավորություններով:

ՍՐԱՄԱՅԻՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԻՐԶԱՅԱՆ

Հոգևոր հովիվ Մելբուռնի հայոց եկեղեցու



ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԼՈՒՐԵՐ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԻՑ

Սույն թվականի փետրվարի 20-ին թեմական-վարչական գործով Բուխարեստից Սոֆիա է ժամանել Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը:

Փետրվարի 26-ին, կիրակի օրը, թեմական առաջնորդի կարգադրությամբ, Բուլղարիայի հայոց բոլոր եկեղեցիներում կատարվել են հոգեհանգստյան մասնավոր պաշտոններ հանգուցյալ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի հիշատակին: Նույն օրը Սոֆիայի հայոց Մայր եկեղեցում, հավարտ ս. պատարագի, Տ. Տիրայր արքեպիսկոպոսը նախագահել է օրվա հոգեհանգստյան արարողությանը և խոսել հանգուցյալ Սերովբե արքեպ. Մանուկյանի կյանքի և եկեղեցանվեր գործունեության մասին՝ վեր հանելով հոգևոր վարչական ասպարեզում նրա երկարամյա ծառայությունը ի նպաստ Հայաստանյայց Եկեղեցու, մասնավորապես Արևմտյան Եվրոպայի հայոց եկեղեցիների բարեկարգման ու ծաղկման, ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Հետևյալ օրը, փետրվարի 27-ին, Սոֆիայի հայոց առաջնորդարանում, առաջնորդ սրբազանի հրավերով և նախագահությամբ տեղի է ունեցել քահանայական հավաք, որին ներկա են եղել բուլղարահայ թեմի բոլոր հոգևոր հովիվները, ինչպես նաև թեմական խորհրդի նախագահը: Քահանայական սույն հավաքույթն անցել է քրիստոնեական ջերմ ու սրտագին մթնոլորտում: Տ. Տիրայր արքեպիսկոպոսը խոսել է քահանայական բարձր կոչման մասին՝ տալով իր խրատներն ու հորդորները: Նա նշել է, որ Հայ Եկեղեցու սպասավորները պետք է քաջ գիտակցեն կարևորությունն ու պատասխանատվությունը այն բարձր առաքելության, որին կոչված են նրանք, ի մասնավորի սփյուռքահայ պայմաններում, որտեղ բարոյական ու հոգևոր արժեքների պահպանմանը կուգընթաց այժմ առաջնահերթ նշանակություն է ստացել նաև ազգապահպանման հարցը: Առաջնորդ սրբազանը նաև ներկաներին պատմել է վերջերս դեպի Երուսաղեմ կատարած իր ճանապարհորդությունից ստացած տպավորությունների մասին և հաղորդել պատմական տեղեկություններ սուրբ քաղաքի վերաբերյալ:

Այնուհետև Տ. Տիրայր արքեպիսկոպոսի առաջարկով ժողովը ընդհանուր քարտուղար է ընտրել Սոֆիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Մեսրոպ ավագ քահանա Պենլյանին: Որոշվել է տարին մեկ կամ երկու անգամ կազմակերպել նման հավաքույթներ՝ ի ջինություն և ի ծաղկումն բուլղարահայ եկեղեցիների:

Մարտի 1-ին, հինգշաբթի օրը, Սրբոց Վարդանանց տոնի և Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ի անվանակոչության առթիվ Սոֆիայի հայոց եկեղեցում տեղի է ունեցել սուրբ պատարագ: Օրվա տոնակատարությանը նախագահել է թեմական առաջնորդը և Վարդանանց հերոսամարտի խորհրդի մասին արտասանել ոգեշունչ մի քարոզ՝ վեր հանելով և դրվատելով Ղևոնդյանց և Վարդանանց զոհաբերությունը վասն Հիսուսի և վասն հայրենյաց: Պատարագի ա-

վարտին առաջնորդ սրբազանը ներկաներին հրավիրել է իրենց աղոթքները մատուցել առ Աստված՝ ապգիս սիրեցյալ Հայրապետի կյանքի արևշատության և քաջառողջության համար:

Նույն օրը թեմական խորհուրդը Սոֆիայի «Բալկան» հյուրանոցի ճաշասրահում Վարդանանց մեծ տոնի հիշատակին կազմակերպել է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա են եղել Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի մինիստրի տեղակալ և Կրոնական գործերի կոմիտեի նախագահ Լուբեն Պոպովը, կոմիտեի այլ պատասխանատու աշխատակիցներ, բուլղարական քույր Եկեղեցու Ս. Սինոդի գլխավոր քարտուղար Կելասի եպիսկոպոսը, Սոֆիայի բուլղար պատրիարքարանից՝ Դոմիտիան եպիսկոպոսը, Ռումին Եկեղեցու ներկայացուցիչ Մունտիանու ավագ քահանան, ռուսաց Եկեղեցու Մոսկվայի պատրիարքարանի ներկայացուցիչ Նիկիտա վարդապետը, բուլղարահայ «Երևան» մշակութային կազմակերպության նախագահ Տիրան Բարիքյանը և բուլղարահայ թեմական խորհրդի լրիվ կազմը՝ գլխավորությամբ Տ. Տիրայր արքեպիսկոպոսի:

Ճաշկերույթն անցել է եղբայրական ջերմ ու խանդավառ մթնոլորտում, որի ընթացքում փոխանակվել են բաժակաճառեր և կատարվել երգեր հայերեն ու բուլղարերեն լեզուներով:

Տ. Տիրայր արքեպիսկոպոսը Պլովդիվի հայոց եկեղեցական համայնքից հրավեր ստացած լինելով՝ մարտի 4-ին Սոֆիայից մեկնել է Պլովդիվ՝ տեղի հայոց եկեղեցում պատարագելու և քարոզելու Վարդանանց տոնի առթիվ:

Մարտի 9-ին թեմական առաջնորդ սրբազանը վերադարձել է իր աթոռանիստը՝ Բուխարեստ:

ԼՈՒՐԵՐ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

Իրաքի հայոց թեմի բարեջան առաջնորդ Տ. Ավագ եպս. Ասատուրյանի առաջնորդական պաշտոնի ժամանակաշրջանն ավարտված լինելով՝ իրաքահայ թեմի Ազգային Կենտրոնական Վարչության հրավերով 1984 թվականի հունվար ամսի վերջերին Բաղդադ են ժամանել Բասրայի, Մուսուլի, Քերքուկի և Զախոյի հայոց թեմական խորհուրդների անդամները լրիվ կազմով՝ մասնակցելու առաջնորդի ընտրությանը:

Ընտրությունը տեղի է ունեցել հունվարի 26-ին: Ազգային Կենտրոնական Վարչության հրավերով գումարված պատգամավորական ժողովում ընթերցվել է վարչության տեղեկագիրը Տ. Ավագ եպիսկոպոսի անցնող չորս տարիների առաջնորդական գործունեության մասին: Ժողովականները հաստատել են, որ առաջնորդ սրբազանը թե՛ հոգևոր և թե՛ ազգային-մշակութային իմաստով թեմից ներս կատարել է գնահատելի և օգտակար աշխատանք՝ միաժամանակ իբրև թեմական առաջնորդ ցուցաբերելով վարչական ու կազմակերպչական ակնհայտ կարողություն:

Վերոհիշյալ հանգամանքները նկատի ունենալով, ինչպես նաև ըստ արժանվույն գնահատելով Տ. Ավագ եպիսկոպոսի անձնական արժանիքներն ու նրա նվիրումը իր աշխատանքին՝ ժողովը միաձայնությամբ նրան վերընտրել է Իրաքի հայոց թեմի առաջնորդ առաջիկա չորս տարիների համար:

Այնուհետև ժողովի նախագահ Տ. Գեղամ ավագ քահանա Փաշայանի և ատենապետ դոկտ. Հասրաթ Միքայելյանի ուղեկցությամբ Տ. Ավագ եպիսկոպոսն առաջնորդվել է առաջնորդարանի դահլիճ և ընդունվել պատգամավորների կողմից ջերմ ծափահարությամբ: Այստեղ առաջնորդ սրբազանը շնորհակալության ջերմ խոսք է ասել ժողովականներին՝ իր նկատմամբ ցուցաբերված վստահության համար, ապա, իբրև միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, իր հավատարմությունն է հայտնել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռի հանդեպ՝ միաժամանակ խոստանալով մնալ հավատարիմ կավակը Իրաքի ասպնջական հողի և պետության:

Հավարտ պատգամավորական ժողովի տեղի է ունեցել պաշտոնական ճաշկերույթ:

Վերընտրված առաջնորդ սրբազանն իր ուխտը կատարել է Բաղդադի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում, ապրիլի 22-ին:



ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Սույն թվականի ապրիլի 2-ից 4-ը Մոսկվայում տեղի է ունեցել «Տիեզերքն առանց կենքի» թեմայով խաղաղությանը նվիրված միջազգային կոնֆերանս, որին իրենց մասնակցությունն են բերել աշխարհի 26 երկրներից ժամանած տարբեր կրոնների ներկայացուցիչներ՝ քրիստոնյաներ, մահմեդականներ, մովսիսականներ, հինդու կրոնի ներկայացուցիչներ, բուդդայականներ և այլն, ընդամենը շուրջ 60 հոգի: Մասնակիցների թվում եղել են հայտնի գիտնականներ, տիեզերագետներ և բազմաթիվ հյուրեր:

Հայ Առաքելական Եկեղեցու կողմից, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, սույն կոնֆերանսին, որպես հյուր, մասնակցել է նաև Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանը, որը կոնֆերանսի նախագահ, Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Ֆիլարետին փոխանցել է Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ ժողովին ուղղված բարի մաղթանքներն ու ցանկությունները:

Ապրիլի 3-ին «Ուկրաինա» հյուրանոցի դահլիճում կոնֆերանսի մասնակիցներին ընդունել և ողջունել է Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Պիմենը: Իր ողջույնի խոսքի մեջ Ռուս Եկեղեցու պետը անդրադարձել է ներկա միջազգային լարված դրությանը և այն մեծ դերին, որ այսօր ի վիճակի են կատարելու տարբեր հավատի և դավանության տեր մարդիկ, հոգևորական թե աշխարհական, աշխարհի խաղաղության պահպանման պատասխանատու և դժվարին գործում: Իր խոսքի վերջում նա հաջողություններ է ցանկացել կոնֆերանսի աշխատանքներին:

Հաջորդ երկու օրերին ժողովի մասնակիցները լսել են մի շարք զեկուցումներ տիեզերքի և նրա սպառազինման վտանգավոր հետևանքների վերաբերյալ: Զեկուցել են տարբեր երկրներից հրավիրված ականավոր գիտնականներ:

Ապրիլի 4-ին, հավարտ կոնֆերանսի, կազմվել և ժողովականների կողմից միաձայն հաստատվել է խաղաղության պահպանման օգտին մի հաղորդագրություն՝ ուղղված պետությունների ղեկավարներին:



ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ԵՂԻՎԱՐԴԻ ՆՈՐ ԳԻՐՔԸ

Սփյուռքահայ գրականությունը հարստացավ մի նոր չափածո ստեղծագործությամբ: Վերջերս Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքի տպարանից լույս տեսավ ըսփյուռքահայ անվանի բանաստեղծ Եղիվարդի (Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյան) նոր գիրքը «Հայրենականք, Տոհմականք» խորագրով: Ներկա հատորը, անտարակույս, գալիս է իր ինքնուրույն տեղը գրավելու հեղինակի գրական ընդհանուր ժառանգության մեջ:

Գիրքը բաղկացած է երկու բաժնից. առաջին բաժնում, որն ունի «Հայրենականք» վերնագիրը, տեղ է գտել հայրենասիրական երկարաշունչ մի քերթված, ուր հեղինակը անհագ կարոտով ոգեկոչում է իր ծննդավայրը, իր կորցրած հայրենիքը, նրա բնության առինքնող գեղեցկություններն ու հրապույրները: Այս բաժնի իրարահաջորդ հատվածներում ընթերցողի աչքերի առաջ մեկը մյուսից գրավիչ պատկերներով տողանցում է հեղինակի մանկության հուշերի շարանը: Բանաստեղծի հիշողության պաստառի վրա, տարիներ անց, աղոտ ստվերագծերի մեջ վերհառնում են հայրենական հին գյուղակը լեռան փեշին, նրա նեղ ու «կույր» փողոցները, նախիրների բարձրացրած փոշին, սայլերի «հեծքը» դաշտի ճանապարհին, մանկության կուլալ աղբյուրը, որի հավերժական ծարավով է տոչորվում իր սիրտը, հետո՝ ջերմությունը հայրական սուրբ օջախի, գորովակաթ բարի դեմքը իր մոր, որ թթի ծառի տակ իր «աղեկատն» է մանում, և ապա... ապա անծայր քարավանը հեք տարագիրների «Եղեռնի սև ճամփաներուն», ինքը մենակ, մոր փեշից բռնած, քայլում է ու քայլում՝ հոգում անկոր ցասում ու բողոք: Ժամանակի հեռուներից հեղինակը մտքի աչքերով տեսնում է Վանա ծովն ու Աղթամարը, Սիփանն ու Նեմրութը, այնուհետև արյունով պղտորված Եփրատը, մայր Արաքսը, որ սիրտը մրմուռ՝ գնում է դեպի օտար ափեր:

Հին հիշողություններից հառնող այս պատկերներին զուգահեռ, որոնք պարուրված են աշնանային թախծոտ գույներով, հեղինակը տալիս է նաև իր նոր հայրենիքի՝ ապրող, շնչող, արևային Հայաստանի լուսաշող պատկերը. ահա բերք ու բարիքով լիառատ հայրենական դաշտերը, որտեղից վերադառնում են հոգնաբեկ մշակները նոր գյուղի, «ուր կիյուսի ոսկի հեքիաթը նոր օրերուն»: Ահա հայ հավատքի վեմ Մայր տաճարը Ս. Էջմիածնի, շքեղ համալիրը հերոսական Սարդարապատի, ժայռակերտ Գեղարդա վանքը, Սյունիքն ու Զանգեզուրը՝ իր հռչակավոր Տաթևով, Ջերմուկը՝ իր բուժարաններով, Վայոց ձորը, կապուտաչյա Սևանը, նրանից սկիզբ առնող «կենդանի շող» Զանգուն՝ իր

«ջրանցքներով երկաթաձայն», իր էլեկտրական կայաններով, ապա մեր հայրենիքի նոր ոստանը՝ Երևանը, որ մարմին է առել «ավերներեն մեր անցյալին»: Եվ այսպես՝ հեղինակի ընկալման մեջ համադրվում, կուգակցվում և միաձուլվում են հինն ու նորը, անցյալն ու ներկան, խավարն ու լուսավորը, հին այգին ու նոր այգին, ավերված խրճիթներն ու նորաստեղծ պալատները նորոգ հայրենիքի: Ի տես օրավուր ծաղկող ու բարգավաճող իր հայրենի երկրի, բանաստեղծի սրտի խորքից բարձրանում է ապագա խաղաղ կյանքի մաղթերգը.

«Թող չբուսնի տատասկ դժնիկ
Հողերուդ քու, այգին իմ նոր,
Ու վրայեդ թևը չանցնի
Թռչունին սև...»:

Հեղինակն ուզում է իր նոր տունը կառուցել «Արագածի անքույթ խորշին, վերթ համեցող կարոտի ժայթք», նման իր երբեմնի այն երապ տան, որի շեմքին հոսել է իր հոր արյունը կաթիլ-կաթիլ:

Ամբողջ քերթվածը շնչում է հայրենասիրական անկեղծ ոգով՝ դրսևորելով բանաստեղծի հոգեկան աշխարհն ալեկոծող զգացումնքների ու ապրումների ելևէջները: Քերթվածի առանցքն է կազմում հայրենիքի գաղափարի նվիրականությունը, որ միակ անսուտ սրբությունն է, միակ ճշմարտությունը:

Հատորի երկրորդ բաժինն ունի «Տոհմականք» ընդհանուր վերնագիրը: Այս բաժնում ընդգրկված են փոքր ծավալի չորս պոեմներ՝ «Աժդահակն ու Տիգրանը», «Զորափոքեցին», «Վահան Գողթնացին» և «Տարիներ հետո (Ս. Սահակ)»: Հիմնվելով ազգային ավանդապատումների, վկայաբանությունների և մեր հին մատենագիրների հաղորդած պատմական տվյալների վրա՝ հեղինակը գեղարվեստական մարմնավորում է տվել հայ ժողովրդի հեռավոր անցյալի որոշ դեպքերին ու դեմքերին: Ուշագրավ է հատկապես «Զորափորեցին» պոեմը, ուր սեղմ, բայց տպավորիչ գծերի մեջ վեր է հանված պայծառ կերպարը Սահակ Գ Զորափորեցի հայրենասեր կաթողիկոսի, որը աքսորական կյանքի դառնությունները ճաշակած, հյուծված ու վատառողջ, ծերունական հասակում հանձն է առնում երկար ու դժվարին ճանապարհորդության տաժանքը՝ հանդիպելու համար հայոց աշխարհի վրա արշավելու ելած արաբ արյունարբու ոստիկանին, աղերսալից խոսքերով մեղմելու նրա կայրությը և այդպիսով փրկելու իր հայրենիքն ու իր անպաշտպան ժողովրդին անխուսափելի սպանդից և ավերածություններից: Հուզիչ և ազդու է պոեմի վերջին հատվածը, ուր պատկերված է հայոց վշտակիր Հայրապետը՝ դագաղում պառկած, ցավի ստվերը դեմքին, անկենդան ձեռքում պինդ սեղմած մերձիմահ գրված իր նամակը՝ ուղղված դաժան բռնակալին, որպես խաղաղության և հաշտության պատգամագիր: Պոեմն ավարտվում է պատումի էական գաղափարն ամփոփող հետևյալ խորիմաստ և թելադրական տողերով.

«Մահ կենսանորոգ և մահ սրբարար,
Որ երիթամած հոգիներուն մեջ
Կբանաս հաճախ վարդերդ ճերմակ,
Ձեռքովն Աստուծո կարծես հոն ցանված»:

Գեղեցիկ են մշակված նաև հատորի մյուս պոեմները, որոնք բոլորն էլ հագեցած են գեղարվեստական խոսքի ինքնատիպ, ճոխ տարրերով:

Եղիվարդի չափածոն, որ գերապանցապես անհատական դրոշմ ունի, այս հատորում նույնպես պահպանել է իր հիմնական հատկանիշները՝ սահուն երաժշտականությունը, թեթևությունը, պարզությունը: Նրա մտածողությունը խիստ պատկերավոր է: Բանաստեղծը իր մտքերն ու զգացումները դրսևորում է պատկերների ամբողջական շարքերով, խոսքի գյուտերով, ցայտուն ու ներգործուն արտահայտչամիջոցներով, որոնք արդյունք են նրա ստեղծագործ երևակայության:

Եղիվարդի ներկա հատորը ուշագրավ երևույթ է սփյուռքահայ արդի բանաստեղծության մեջ:

Ստորև արտատպում ենք առանձին հատվածներ հեղինակի վերոհիշյալ գրքի «Հայրենականք» բաժնից:

«Ո՜վ հայրենիք, հաղթող ես դուն,
Ստեղծիչը հզորագույն հոգիներուն:
Ժամանակի շանթերուն տակ,
Կխորտակվին փառք, մեծություն,
Կմնաս դուն
Իբրև դափնյա ճյուղ մը դալար,
Շիրմին վերև
Քեզի համար մեռնողներուն»:

Կքալեի աշնան մեջեն
Իմ հայրենի,
Գլխուս վերև երկինք անհուն
Վրան լարված,
Հովի թևով կծավալեր
Երգն աշունին,
Վեր բարձրացող ճպոտին տակ
Մասիս սարին:

. . . . . .
Աչքերուս դեմ գյուղեր ահա,
Մեր աշխարհին հպարամյա,
Նստած խաղաղ մեր լեռներու
Գահավանդին,
Կամ ուժասպառ ինկած տապաստ
Խորն հովիտին:
Փողոցներն անոնց փոշոտ
Ու խորտուբորտ,
կանցնին ծերեր,
Գավականին հետ հաշտված,
Կիներ փայլատ հագած արև:
Դուռներուն դեմ հյուղակներուն,
Լաճեր բոկոտ,
Աչվընեռով ջինջ, բայց թախծոտ:
. . . . . .
Վանք ու մատուռ, վկայարան,
Կերպարանքներ մեր հոգիին,
Մեր լեռներու երակներեն
Քար քար հանված,
Աստվածապգյաց իշխաններեն
Մեր հինավուրց,
Որոնք իրենց մարմնեն անդին
Գիտցան անցնիլ,
Ու բուսցուցին ոգին անմահ
Եվ ադամանդ,
Դարերու դեմ միշտ անվկանդ:
. . . . . .
Դաշտավայրը Արարատյան,
Սուրբ Գրքի էջ մըն է կարծես,
Որուն վրա լեռն հայրենի՝
Նետած նայվածքն իր խորամուխ,
Կուլե հեգել,
Խորհուրդն անլույծ մեր պատմության:
. . . . . .
Ու կթվի ինծի լսել
Զայնը կրակ
Արնաշաղախ մեր անցյալին,
Հերոսներուն և սուրբերուն,
Խոսքի նստած Աստուծո հետ:

Անոնք բոլոր,
Նետած պատանք, հագած մարմին,
Իբրև իշխան, կղերական
Ու շինական,
Մեր հողերեն կանցնին նորեն,
Վերքերով խոր ու տարադեմ:

Խուժումն անծայր հուշերու բորբ
Կբարձրանան սիրտըս ի վեր:
Աչքերուս դեմ տունը մեր հին,
Մայրս թոթի ծառին ներքև,
Կմանե դեռ աղեկատն իր:
Ու կհիշեմ լացս առաջին,
Ժայռեն ինկած ջուրի հանգույն:
. . . . . .

Երկնքին տակ կբարձրանար
Յաթաղան մը արյունաներկ,
Որ հայ մայրեր չծնին ալ,
Եվ մանուկներ չգան աշխարհ:

Ես դեռ մանուկ մորս փեշին՝
Եղեռնի սև ճամփաներեն
Քալեցի շատ,
Ոտքերուս՝ ցավ և սիրտիս՝ վերք,
Եվ այդ ցավին կհյուսվեր լուռ
Ցասում մ'անպոր, բողոք մ'անհուն,
Որ կմնա մինչև այսօր
Իբրև կտակ արյունագիր
Իմ որբության:
. . . . . .
Հեռո՜ւն, հեռուն,
Միտքիս աչքով կտեսնեմ դեռ,
Ծովը Վանա,
Մատյան անհուն անցելահուշ
Հրաշքներուն:
Սնդուս կտավ մինչև երեկ,
Այժմ սուգի մեծ վարշամակ,
Արցունք աչքին՝ որ կնայի
Բյուր վերքերուն Աղթամարի:

Վերեն ինկած վերթ դագաղներ
Կղկիներն են ջուրին վերև,
Անվերադարձ մեծ փառքերու
Իբրև դիերը ծփծփուն:

Սիփան, Նեմրութ, մոգերու պես
Հագած կնգուղ,
Դեռ կխոսին Աստուծո հետ:

Եփրատն անդին, պղտոր, քենոտ,
Վիշապի մը նման նոթի,
Հովիտներեն ու դաշտերեն
Կգալարվի,
Ավերակներն իսկ լիկելու
Ա'լ անկարող,
Իր ջուրերուն՝ ալ չեն ցոլար,
Բյուր գմբեթներն տաճարներու:
. . . . . .

Հո՜ղ հայրենի,
Անհուն կարոտ և կարմիր ձայն,
Գեղեցկություն անշամանդաղ,
Ոսկի երակ,
Գաղափարի կարմիր դրոշ:
Քանի դար է ալ չեմ հիշեր
Մեր արևին նման այրող,
Մեր ջուրերուն պես պաղպաջուն
Երակ էր խոր,
Ժողովուրդին մեր դարավոր,
Ունենալ լոկ իր սեփական
Կտոր մը հող:

Ունի՛նք այսօր:
Այդ բաբախուն բարիքն հպոր,
Որուն ծոցին՝ կծոցվորին
Միտքի, սիրտի ծիլեր աղվոր,
Ողողելու խորշերն ամեն
Սեր գերության խոր նկուղին,
Եվ ընելու կմեկ գիտակ
Իրավունքին մեր դարավոր:
. . . . . .
Կքալեի ափերն ի վեր
Օձապտույտ Հրալդանին,
Հոգիս լեցուն
Ցնորքներով աներկրային:
. . . . . .
Զանգո՛ւ, Զանգո՛ւ,
Աղջիկն աղվոր մեր լեռներուն,
Մաղերդ հովին,
Հովտե հովիտ ու ժայռե ժայռ
Քանի՞ դար է կվազես դուն:
Սափորն ուսած ջուր կտանիս
Այգիներուն մեղրաողկույզ,
Լույս կտանիս,
Գյուղակներուն և սիրտերուն,
Նորափթիթ և նորապարդ:

Ու կպատմես հին օրերու
Հեքիաթն ոսկի,
Զրանցքներուն երկաթաձայն,
Կայաններուն էլեկտրական,
Պատրույգն որոնց
Երակներեդ կհագնի բոց:
. . . . . .
Աշնան մեջեն ես կքալեմ
Ու կնայիմ լեռներուն սուրբ,
Որոնք բռնած ափսեն կապույտ
Սևան լիճին,
Վեր կհանեն երկնքին դեմ:

Լի՛ճ հայրենի, երապն հալած,
Ժողովուրդիս բպվմահալած,
Որու ծոցին կղվին աղվոր,
Կուրծքին առած մատուռներ կույգ,
Որոնք կարծես կունկնդրեն դեռ
Զայնը Անոր՝
Որուն օր մը բացինք մեր սիրտն
Ու մեր հոգին:
. . . . . .
Սևա՛ն, Սևա՛ն, ափսե ակատ,
Արյունին մեջ վերջալույսին,
Եվ Հրալդան քեզմե բխող
Կենդանի ջող,
Մեր սիրտերուն վերև բացվող:

Դուն սրտաձև,
Սիրտն ես իրավ Հայ աշխարհին,
Որ դարերով տրոփեր է,
Շուրջդ կախարդված
Լեռներու ծոց:

Ափիդ կեցած,
Թարթիչներուս՝ օտարության
Դեղին փոշին,
Եվ ոտքերուս՝ հալած կապար,
Բայց աչքերուս՝ երապ մը վառ
Քեզ կդիտեմ ագահաբար:
. . . . . .
Ծտար երկնի լույսին ներքև,
Պատկերդ աղվոր,
Պիտի մնա հոգիիս խորն
Մարգրիտն ինչպես սադափաշող
Սռայլ ծոցին մեջ ոստրեին:
. . . . . .
Աշնան մեջեն ես կքալեմ
Փողոցներեն նորակառույց
Երևանին:
Կոթողներու շարանն աղվոր,
Ոստանին նոր,
Կղզիներու պես հրեղեն
Կբարձրանան
Ժամանակի անհուն ծովեն,
Հորինելու մանյակ մը նոր
Հրալդանի պարանոցին:

Քաղաքն է այս,
Ժողովուրդին իմ նորավառ
Տուն տաղավար,
Զավակներուն իր ծոցածին,
Դրախտ մը նոր,
Փոխան կորսված դրախտներուն,
Մարմին առած
Ավերներեն մեր անցյալին:
. . . . . .
Հրաշալան իմ Երևան,
Գիրկ մայրական, վերջին կայան
Զավակներուդ հեռու, մոտիկ:
Ոչ ոք գիրկեդ կիյնա հեռու,
Երբ կբերե արյուն ու դին
Դարե ի դար մինչ մեր օրեր:
Դուն բոլորին
Եվ մենք ամբողջ քու մեջ միայն:

Հաշտության ձեռք իմ Երևան,
Սերդ օրենք մեռելներուն և ողջերուն:
Անցյալ, ներկան ու ապագան,
Քու սիրուդ մեջ թող իրար գան,
Հացդ ընելու մեկի նշխար,
Ջուրդ ընելու մեկի գինի
Հաղորդության,
Մեկ լվացող, մեկ կրակող
Թմբիրներեն տարագրության,
Հանդերձելու փառքդ պայծառ,
Զոր ըղձացինք ու դեռ կըղձանք.
Հավար ամե մինչ հավար ամ:

. . . . . .
Աչքերուս դեմ այգին է նոր,
Այն մյուսին այնքա՞ն նման,
Որ ալ չկա:
Ներս կմտնեմ երկաթ դռնեն,
Առավոտը ոտքերուս տակ
Զույլ մարմարիոն:
Աղջիկն ինչպես կտավին դեմ
Իր երապին կարմիր, կապույտ,
Կքաղցրանա այգիիս դեմ
Տարիներու սիրտն իմ ծարավ:
. . . . . .
Խաղաղությո՛ւն. և օրհնությո՛ւն
Մշակներուն և արտերուն,
Որոնք բարիքն հանդերձեցին
Մառաններուն և սիրտերուն:
Օրո՛ր ոսկի տերևներուն,
Մերկ հողերուն,
Կմախք դարձած անտառներուն,
Անոնք բոլոր,
Թուխս են նստեր վաղվան հույսով:

Թող չբուսնի տատասկ, դժնիկ
Հողերուդ քու, այգին իմ նոր,
Ու վրայեդ թևը չանցնի
Թռչունին սև,
Եվ վաղը երբ մեկ հնձանին
Մեջ ճմլվին
Բարիքն անուշ մեր արևին
Եվ հողերուն, փրփուր փրփուր,
Բացվի պիտի երգն ադամանդ,
Այգիներեն խրճիթներու,
Խրճիթներեն պալատներու:

Հոս ես ահա, այգին իմ նոր,
Ավերին դեմ հպարամյա
Մեր աշխարհին,
Եվ իմ քաղցրիկ մամի փոխան,
Որ ալ չկա,
Աղջիկ մըն է քաղցրատեսիլ,
Կեցած ցմրուխտ օրերուն դեմ,
Անցորդներուն արդ կբաշխե
Բարիքն առատ,
Խնկանման հատիկներով:
. . . . . .
Էջմիածի՛ն,
Երկնի վրա ձևված հրաշք,
Զույլ տապանակ, սյուն հրեղեն,
Որուն լույսին նայեցան միշտ
Աչքերն ուրախ, աչքեր տրտում
Սերունդներու,
Որուն շունչեն ու կրակեն
Առավ մարմին
Մեր դարերու հրաշքը սուրբ,
Աստվածաշունչ,
Մագաղաթ, երգ ու շարական,
Կանթեղին տակ Լուսավորչին:
. . . . . .
Սարդարապա՛տ, հաղթության պատ,
Հողասկիհ մը սրբական,
Մարմին հայուն, նշխար ընտիր,
Արյուն գինի,
Պատարագին պպատության:

Դարեր կանցնին,
Բայց կմնա հուշարձանն այն,
Անպարագիծ և անսահման,
Կերտված քար քար
Ոսկորներեն հերոսներուն,
Հավատքեն սուրբ մեր մայրերուն,
Ձերմակ հույսեն՝
Պարմաններուն և կույսերուն,
Հիրիմին պես Օշականի
Աննիջ Սուրբին,
Էջմիածնի քարի հանգույն,
Արարատի պես անսասան:
. . . . . .
Գեղարդն ահա,
Լուսավորչի սուրբ ձեռակերտ,
Որ խավարին դեմ հեթանոս
Վառեց ճրագն քրիստոնյա,
Եվ Գեղարդովն արյունավառ
Փորեց, կոփեց կուրծքը ժայռին,
Կերտեց տաճարն այս արտակարգ,
Իբրև քանդակ ու կաղապար
Մեր հոգիին:
. . . . . .
Զանգակներու անձրևին մեջ:
Դրած անտես թագն Աստուծո,
Վանքը կախարդ դեռ կբախե
Գավալանովն ադամանդե,
Երկինքներու կապույտ դրան,
Աղերսելու խաղաղություն
Ու բարություն,
Վրան արյան հեղեղներուն
Մութ սիրտերուն,
Վրան համայն Հայոց երկրին:



Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ» ԱՐՁԱԳԱՆՔԸ (՞) ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Սուրբ Գրիգորի վարդապետությունը» հայ եկեղեցական մատենագրության հնագույն և ամենաարժեքավոր աստվածաբանական երկասիրությունն է, որում հստակորեն արտացոլված է հայոց դավանաբանական դիրքորոշումը՝ խարսխված առաքելական ավանդության և Ընդհանրական Եկեղեցու գաղափարախոսության վրա: «Վարդապետությունը» կազմում է Ագաթանգեղոսի «Պատմության» երկրորդ գիրքը[1], կետեղված առաջին («Վարք և պատմութիւն սրբոյն Գրիգորի») և երրորդ («Դարձ փրկութեան աշխարհիս Հայաստան») գրքերի միջև: Հետազոտողների կարծիքները համեմատաբար միասնական են «Վարդապետության» ստեղծման ժամանակի հարցում. հուշարձանի գոյությունը Ե դարի կեսերին, ոչ մի կասկած չի հարուցում:

«Վարդապետությունն» ընդգրկում է Հին և Նոր Կտակարանների ողջ բովանդակությունը՝ սկսած արարչագործությունից մինչև առաքելական քարոզությունը: Սակայն այդ հսկայական նյութը ներկայացված է ոչ թե հանգամանալից փոխադրությամբ, այլ միայն հիմնական դրվագներով, որոնց ներհյուսված են հեղինակի գաղափարներն ու դատողությունները աստվածաբանական այս կամ այն հարցի վերաբերյալ: Համեմատաբար հանգամանորեն են արծարծված Երրորդության, արարչագործության, մարդեղության, առաքելական քարոզության և մեռյալների հարության թեմաները[2]: Կենտրոնական տեղն զբաղեցնում է մարդեղության խորհրդի լուսաբանությունը (§§ 363—611): Երկասիրության մեջ, սակայն, ներկայացված են Քրիստոսի երկրային տնօրինության ոչ բոլոր կողմերը: Հեղինակի հատուկ ուշադրությանն են արժանացել միայն մկրտության և խաչելության դրվագները:

Խաչելության դրվագի լուսաբանման խնդրում հեղինակին կարծես հետաքրքրում է ոչ այնքան Քրիստոսի չարչարանքի բուն էության, որքան խաչի խորհրդանշական իմաստի բացահայտումը: Խաչը այդ առումով նախ և առաջ հակադրվում է Բաբելոնի աշտարակին: Եթե վերջինս հանդիսանում է մարդկության բաժանման, լեզուների խառնակության խորհրդանիշը, ապա խաչի միջոցով, ընդհակառակն, բաժանված ազգերն ու լեզուները միավորվում են ճշմարիտ Աստծու ճանաչողությամբ: «Զի յառաջին աշտարակէն ցրումն եղև, իսկ ի խաչէս՝ ժողով»,—գրում է հեղինակը (§ 629), կամ՝ «Արդ՝ փոխանակ բարձ-

[1] Տե՛ս «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909», § § 259—715:

[2] «Վարդապետության» հանգամանալից վերլուծությունը տե՛ս **Բ. Սարգիսյան**, Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն, Վենետիկ, 1890, էջ 359—408. **R. W. Thomson**, The Teaching of Saint Gregory. An Early Armenian Catechism. Translation and Commentary. Cambridge, Massachusetts, 1970, Introduction, p. 1—38.

բաբերձ և վաղաւէր աշտարակին՝ խաչն ճըշմարտութեան կանգնեցաւ, որոյ կօրութիւնն ւնշտնջենական է, և փառք նորա Աստուած» (§ 581): Բաբելոնի աշտարակաշինությունից հետո մարդկությունը բաժանվեց 72 ազգերի՝ առաջնորդվելով նույնքան թվով նահապետների կողմից. «Եօթանասուն և երկու նահապետք լեզուաց կացեալ՝ բաժանեցան ընդ երկիր, հաստատեալք յիւրաքանչիւր սահմանս» (§ 579): Իսկ խաչելությունից հետո մարդկությունը միավորվեց 72 առաքյալների գործունեության շնորհիվ. «Որ և ըստ առաջին լեզուացն բաժանելոց ամենայն ազգաց, երեւեցուցեալ եօթանասուն և երկուս, որպէս յառաջագոյն քան զայս ասացաք. զի նոքօք ի միաբանութիւն զառաջին պատառումն ապգացն և լեզուացն ժողովեսցէ» (§ 612):

Բաբելոնի աշտարակի՝ որպես մարդկության բաժանման և խաչի՝ որպես համախըմբման խորհրդանշական բացատրությունը «Սուրբ Գրիգորի վարդապետության» հեղինակը, ամենայն հավանականությամբ, քաղել է «Վարդապետութիւն առաքելոց» անվավեր գրվածքից, որը հայերեն է թարգմանվել ասորերենից Ե դարի առաջին կեսին: Կարելի է մատնանշել նույնիսկ բնագրերի կապը հաստատող բառացի ընդհանրության մի դեպք.

Վարդապետութիւն առաքելոց

որպէս յաշտարակէն ցրումն նոյնպէս ի խաչէն ժողովումն[3].

Վարդապետութիւն Ս. Գրիգորի

զի յառաջին աշտարակէն ցրումն եղև, իսկ ի խաչէս՝ ժողով (§ 629)

Բացի նշված բովանդակությունից, խաչը, ըստ «Սուրբ Գրիգորի վարդապետության» հեղինակի, խորհրդանշում է նաև սուրբ սեղանի չորս անկյունները, որոնցից յուրաքանչյուրը ցույց է տալիս երկրի չորս ծագերից մեկը: Մյուս կողմից, երկրի վրա կանգնեցված խաչի ստորին կողմը խորհրդանշում է Տիրոջ ոտնակոխության տեղը, այսինքն՝ Եկեղեցու հիմքի հաստատությունը: Խաչի վերին կատարը ցույց է տալիս աստվածային բնությունը՝ մարմնավորված Քրիստոսի գլխի պատկերում: Աջ թևը խորհրդանշում է աջ բակի կորությունը, որն ուրախություն է պարգևում արդարներին, իսկ ձախը մատնանշում է մեղավորների տանջանքները: Այս մտքերը բնագրում շարադրված են հետևյալ հաջորդականությամբ.

«§ 488. Երթայ այնուհետև Քրիստոս ընդ երեկս աւուրն միաշաբաթուն՝ երևել աշակերտացն դրօքն փակելովք, ասէ առետարանագիրն. և տուեալ վկենդանարար ողջոյնն, և յապում ուրախութիւն աշակերտացն արարեալ: Անդ կատարէր նուագ սաղմոսարանին, թէ «Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ. արարէ՛ք տօնս ուրախութեան կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ»: Եւ զի՞նչ իցեն անկիւնք սեղանոյն՝ եթէ ոչ զխաչն նշանակէ, որ և անկիւնս իսկ ցուցանէ խաչին չորս:

§ 489. **Մինն ընդ երկիր ցցեալ, զի յայտնեսցէ դնել զՏեառն գարշապարսն յերկրի. զի ի վերայ վիմին հաստատութեան շինեսցէ դիցէ զբարձրութիւն հիմանց եկեղեցւոյ.** որպէս և մարգարէն գուշակեաց, թէ «Ի վերայ վիմին կացոյց զիս Տէր, զի անշարժ առնիցէ»: **Իսկ զբուն անկիւնն՝ զկատարն ի վերուղղեալ, զի այն անկիւնն (որ ի վերկոյս ուղղեալ է իբրև զկշռուած սահմանի, զբնութիւն այնորիկ, որ ի նորայն ի վերայ բակմեցաւ՝ ի վերկոյս հատանիցէ և անդր հայեցուցեալ զտեսողն, ի Հայրն ի գլուխն Քրիստոսի, և զբնութիւնն ցուցանիցէ: Իսկ՝ աջ անկիւնն՝ ցուցանէ զկօրութիւն աջոյ բակի. աջովն զուրախութիւն արդարոցն զուարթութեան՝ պարգևացն պատրաստելոց պսակացն զարդուն ցուցանէ: Իսկ ահեակ անկիւնն՝ զտանջանսն նշմարեցուցանէ զմեղաւորացն:**

§ 490. Վասն զի ունի սեղանն չորս անկիւնս, որ է խաչն. և յիրաւի սեղան, զի եղև վերընկալ տէրունական մարմնոյն ճշմարիտ պատարագին որ մատեաւ Հօր: Յիրաւի և չորս անկիւնս ասէ, զի ուղղեսցի ընդ չորս անկիւնս ամենայն երկրի, և զամենայն տիեզերս ուրախ արասցէ յայսմ սեղանոյ, վերկնաւորս և վերկրաւորս, և զսանդարամետականսն, և զիմնացեալսն, որ են առաքեալքն և մարգարէքն: Եւ վերկնաւորսն՝ զիրեջտակս, զկօրսն հոգեղէնս. որոց կարի իսկ ուրախութիւն եղև և լինի ընդ անկարծակամ դարձ կենացն: Եւ մարդիկ իսկ երկրաւորք՝ որ կեցին և դարձան առ Տէր. և դուք արդ կամիք կեալ այցելութեամբն Քրիստոսի: Եւ սանդարամետականքն ննջեցեալքն, զորս փրկեաց գալստեամբն իւրով: Քանզի խաչն, որ կանգնականն՝ զպաղթականն ցուցանէ, վերնանկիւնն զպաղթութիւնն ցուցանէ»;

[3] Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հատ. Ա, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 63:

Թարգմանություն[4].

«§ 488. Այնուհետև գնում է Քրիստոսը միաշաբաթ (կիրակի) օրվա երեկոյան և երևվում աշակերտներին փակ դռներից ներս, ինչպես ասում է ավետարանագիրը: Եվ տվեց նա կենդանարար ողջույնը և աշակերտներին բաղում ուրախություն պատճառեց: Ապա կատարեց Սաղմոսարանի նվագը (երգը), թե «մեր Տեր Աստվածն երևաց մեզ, ուրախության տոն արեք շատ կանուխ մինչև սեղանի (խորանի) անկյունները»: Եվ ի՞նչ են սեղանի (խորանի) անկյունները, եթե ոչ այն, որ դա նշանակում է խաչը, որը չորս անկյուններ է ցույց տալիս:

§ 489. [Անկյուններից] մեկը ցցեց երկրի վրա, որպեսզի ցույց տա Տիրոջ գարշապարը երկրի վրա դնելը, որպեսզի հաստատուն վեմի վրա շինի ու դնի եկեղեցու հիմքերի բարձրությունը: Ինչպես և մարգարեն է գուշակել, թե «Տերն ինձ կանգնեցրեց վեմի վրա, որպեսզի անշարժ դարձնի»: Ապա բուն անկյունը՝ կատարը վեր ուղղեց, որպեսզի այդ վեր ուղղված անկյունը որպես հավասարակշռություն, դեպի վեր բարձրացնի նրանց բնությունը, որոնք նրա վրա հենվեցին, և այսպիսով տեսնողները տեսնեն Հորը, Քրիստոսի գլուխը և ցույց տան նրա բնությունը: Իսկ աջ անկյունը ցույց է տալիս աջ բակի զորությունը, աջով ցույց է տալիս արդարների վարքության ուրախությունը, պատրաստված պարգևները, պսակների զարդարանքը: Իսկ ձախ անկյունը ցույց է տալիս մեղավորների տանջանքները:

§ 490. Քանզի սեղանը (խորանը) չորս անկյուն ունի, որը հենց խաչն է, և դա իրոք սեղան է, քանզի նա ստացավ տերունական մարմնի ճշմարիտ պատարագը, որը Հորն էր մատուցված: Հիրավի նա չորս անկյուն է հիշում, որպեսզի ամբողջ երկրի չորս անկյուններին ուղղի և ուրախանա այս սեղանից ամենայն տիեզերքը՝ երկնավորները և երկրավորները, սանդարամետականները և հիմնացյալները, որոնք առաքյալներն են ու մարգարեները: Երկնավորները հրեշտակներն են, հոգեղեն զորքը, որը շատ ուրախություն է ունեցել և ունենում է կյանքի անկասկած վերադարձին: Իսկ մարդիկ են երկրավորները, որոնք ապրում էին և դարձան Տիրոջը և դուք արդ կամենում եք ապրել Քրիստոսի այցելությամբ: Սանդարամետականները ննջեցյալներն են, որոնց փրկեց իր գալստյամբ: Քանզի խաչը, որը կանգնեցված է, ցույց է տալիս հաղթականին, իսկ վերնանկյունը ցույց է տալիս հաղթությունը»:

Ինչպես տեսնում ենք, «Սուրբ Գրիգորի վարդապետությունը» մեզ է ներկայացնում խաչի միջնադարյան խորհրդանշական ըմ-

Եղեգնաձոր, Աղավնաձոր. 1009 թ.
Լ. Ապարյան, Հայկական խաչքարեր (ալբոմ), նկ. 18

բռնման մի հետաքրքիր նմուշ, որի ուսումնասիրումը թերևս կարող է որոշ նպաստ բերել խաչքարային արվեստի հետ կապված առանձին հարցերի պարզաբանման գործին: Խնդրի գիտական քննությունը թողնելով մասնագետ արվեստաբաններին՝ մենք ուզում ենք ուշադրություն հրավիրել միայն մեկ փաստի վրա: Հետաքրքիր է մասնավորապես այն հարցը, թե այսքան մշակված խորհրդանշական ըմբռնումը, որ ներկայացված է հայ մատենագրության հնագույն և ամենահեղինակավոր հուշարձաններից մեկում, արդյոք որևէ կերպ չի՞ արտացոլվել խաչքարային արվեստում: Այս առումով արժանի է ուշադրության հատկապես «Վարդապետության» ընդգծված հատվածը, որը պատկերագրա-

[4] Թարգմանությունը տալիս ենք ըստ հետևյալ հրատարակության. **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983:

Ծաղկաձոր, Կեչառիս. 13-րդ դ.
Լ. Ավարյան, Հայկական խաչքարեր (ալբոմ), նկ. 64

կան լայն հնարավորություններ է պարունակում:

Խաչի վերին կատարը Քրիստոսի գլխով խորհրդանշելու հանգամանքը, իհարկե, որևէ խնդիր չի հարուցում և անհրաժեշտություն էլ չկա այն բխեցնելու «Վարդապետությունից», քանի որ խաչի այդ մասը ինքնըստինքյան համապատասխանում է խաչյալի գլխի գրված դիրքին: Խաչի աջ և ձախ թևերին հատկացված խորհրդանշական բովանդակության մասին նույնպես, փաստերի ներկա դրությամբ, առանձին ասելիք դժվար է գտնել: Իսկ ինչ վերաբերում է խաչի ստորոտի՝ որպես Եկեղեցու հաստատության խորհրդանիշի բացատրությանը, ապա այդ գաղափարն, ահա, մեր կարծիքով, դրսևորում է գտել Եղեգնաձորի շրջանի Աղավնաձոր գյուղում կանգնեցված մի հնագույն խաչքարում, որը թվագրված է 1009 թվականով[5]: Դժվար չէ նկատել, որ այդ խաչքարում, որի լուսա-

[5] **Արձանագրությունը՝** ՀԱ[ՅՈՑ] ԹՈՒԱԿԱՆՍ :ՆՇԸ: ՍԱՐԳԻՍ ԵՐԵՑ/ ԿԱՆԳՆԵՑԻ ՍՈՒՐԲ ՆՇԱՆՍ/ ՍՈՒՐԲ ԱՇԱՇԻՆ. տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 34:

նկարը բերվում է ստորև[6], խաչը հենված է եկեղեցու, այն էլ հայկական կենտրոնագմբեթ եկեղեցու ուրվագծի վրա: Պատահական, թե՞ օրինաչափ է այս համապատասխանությունը՝ կպարզվի մասնագիտական ուսումնասիրություններից: Համենայն դեպս համարյա նույն գծագրումը նկատելի է նաև Աղավնաձորի մի այլ խաչքարում[7] և Ցաղաց Քարի մի խաչքարում[8]:

Թերևս կարելի է խաչքարային արվեստում կուգահեռ գտնել նաև Բաբելոնի աշտարակի և խաչի խորհրդանշական հակադրության առումով: Նման ենթադրության համար հիմք է տալիս այն հանգամանքը, որ հայկական խաչքարերում լայն տարածում գտած խաչի աստիճանաձև պատվանդանը[9] ինչ-որ չափով հիշեցնում է Բաբելոնի աշտարակը[10]: Ըստ այդմ, կարելի է մտածել, որ այդ տիպի խաչքարերում պատկերված է խաչի հաղթանակը Բաբելոնի աշտարակի նկատմամբ:

[6] Նկարը պատճենված է Լ. Ապարյանի «Հայկական խաչքարեր» ալբոմից (Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1973 թ.), նկ. 18:

[7] Նույն տեղում, նկ. 19:

[8] Նույն տեղում, նկ. 15:

[9] Հմմտ. նույն տեղում, նկ. 17, 25, 64, 80—82, 138 և այլն:

[10] Այս միտքը մեզ է հուշել Մաշտոցյան Մատենադարանի աշխատակից, բանասեր-արևելագետ Ն. Գևորգյանը:





Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԴԵՐԸ ՀԱՅ ՀՆԱՏԻՊ ԳՐՔԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանյայց Առաքելական ս. Եկեղեցին իր Մայր Աթոռով, հիմնադրության օրից եղավ ոչ միայն հայ ժողովրդի հոգևոր դաստիարակը, այլև պատմական դժխեմ ճակատագրի բերումով դարձավ նաև հայ գրավոր մշակույթի ստեղծողն ու պահպանողը: Պատահական չէր, որ հինգերորդ դարի լուսաբացին Հայ Եկեղեցին երկնեց հայ գրի երկու երախտավորներին՝ ս. Սահակ հայրապետին և ս. Մեսրոպ մեծ վարդապետին, որոնք նախախնամության կամքով եղան ազգային գրականության և ազգային դպրոցի հիմնադիրները մեր աշխարհում: Նրանց անմահ գյուտի շնորհիվ ազգայնացավ մեր Եկեղեցին, որով վերջնականապես ու մեկընդմիշտ նախագծվեց Հայոց Առաքելական ս. Եկեղեցու ընթանալիք ճանապարհը: Հայոց Մայր Աթոռ ս. Էջմիածինը, որպես գլուխը համայն հայ եկեղեցիների, եռամեծ իր վարդապետների միջոցով ոչ միայն ստեղծել ու պահպանել է անցյալի հալեցի մեր ողջ մշակույթը, այլև առաջին օրից իր վավակներին ներշնչել է նաև պաշտամունք, հատկապես մայրենի լեզվի, գրի և գրքի նկատմամբ: Մեսրոպատառ գրի և գրքի նկատմամբ պաշտամունքը միշտ էլ եղել ու մնացել է համոզմունք հայ վանականության և ժողովրդի համար: Աշխարհի և մեր ժողովրդի համար բացվեց ԺԵ դարի վարագույրը: Իտալական վերածննդի շրջանում եղան բազմաթիվ գյուտեր ու աշխարհագրական հայտնագործություններ, այդ թվում նաև տպագրության գյուտը, որը տեղի ունեցավ 1440 թվականին Գերմանիայի Մայնց քաղաքում ապրող Յոհան Գուտեմբերգի ձեռամբ: Շնորհիվ Եվրոպայի տարբեր երկրներում հաստատված հայ համայնքների, ինչպես նաև այդ երկրների թեմերն այցելող հայրապետական նվիրակների, Մայր Աթոռը մշտապես շփման մեջ էր Եվրոպայի հետ: Հայոց հայրապետները, մեծապես գնահատելով տպագիր գրքի դրական դերը իր ակնհայտ արժանիքներով, սրտի ցավով հաստատում էին, որ Մայր Հայրենիքում այդ շրջանում տպագրական գործով զբաղվելը անհնարին գործ է: Հենց այս տխուր պարագան հաշվի առնելով՝ ս. Էջմիածինը օրհնեց և ողջունեց ԺԶ դարի լուսաբացին, 1512 թվականին, Հայ Եկեղեցու սպասավորներից Հակոբ Մեղապարտի ձեռամբ հեռավոր Վենետիկում տրված մեսրոպատառ առաջին գրքերը, որոնք պիտի լուսավորեին խավարի մեջ խարխափող մեր երկիրը: Հայ Եկեղեցու պայծառ այս սպասավորի՝ Հակոբ Մեղապարտի կողմից հրատարակած գրքերի շարքը դասավորվում է հետևյալ կերպ.

1.—Ուրբաթագիրք
2.—Պատարագամատույց
3.—Աղթարք
4.—Պարզատումար
5.—Տաղարան

Դժվար է գերագնահատել հայ գրքատպության գործի բացառիկ նշանակությունը մեր մշակույթի հետագա բուռն զարգացման համար: Սխալված չեմ լինի, եթե ինչ-որ չափով այն համեմատեմ ս. Մեսրոպի անմահ գործի հետ: Ե դարի առաջին քառորդում, երբ մենք դժբախտությունն ունեցանք կորցնելու քաղաքական իշխանությունը, մեր հայրենիքը բաժանվեց հույների ու պարսիկների միջև: Ս. Մեսրոպի հանճարով ստեղծված հայերեն

տառերը ծանրագույն այդ օրերին ազգայնացրին մեր ս. Եկեղեցին՝ նոր շունչ ու կենսունակություն տալով նրան: Բացի այդ, ճակատագրական այդ դարում, բաժանված Հայաստանի տարածքով մեկ բացվեցին բազմաթիվ ազգային դպրոցներ, որոնք մեր սուրբ Եկեղեցու հետ միասին կոչված էին պահելու և ամրապնդելու քաղաքական ու կրոնական տարբեր հայացքներ ու ձգտումներ ունեցող պետությունների գերիշխանության տակ գտնվող հայ ժողովրդի միասնությունը: Ճիշտ նույն քաղաքական դժբախտ վիճակի մեջ էր գտնվում մեր ժողովուրդը ԺԶ դարում: Երկարատև պատերազմներից հետո Հայաստանը ամայացել ու բաժանվել էր մահմեդական երկու պետությունների՝ շահական Պարսկաստանի և օսմանյան Թուրքիայի միջև: Մայր Աթոռ ս. Էջմիածնի և նրա սրբազան գահակալների ուսերին ծանրանում էր ազգի, Եկեղեցու և հայ դպրոցի ազգային ոգու, միասնության պահպանման ծանր հոգսը: Նվիրական այդ գործերը հաջողությամբ իրականացնելու համար հարկավոր էր վարկ տալ գրքատպության գործին, ավելի շատ մեսրոպատառ գրքեր ունենալ: Դժբախտաբար Հակոբ Մեղապարտի տպարանը չէր կարող բավարարել հսկայական այն պահանջը, որ զգացվում էր հայրենիքում, մանավանդ որ այդ տպարանը գոյատևեց ընդամենը մեկ-երկու տարի, որից հետո հայկական տպագրությունը կեսդարյա դադար ունեցավ:

Երկրորդ հայ տպագրիչը Աբգար Դպիր Թոխատեցին էր, որը իր մասին գրել է «Կղերական եմ և դպիր»[1]: 1562 թվականին Աբգար Դպիրը Միքայել Սեբաստացի կաթողիկոսի (աթոռակից Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսին 1547 թվականից) հանձնարարականով երեք հոգուց բաղկացած պատգամավորության գլուխ անցած՝ մեկնում է Եվրոպա Հայաստանի ապստագրության գործով: Դժբախտաբար այդ ուղղությամբ Աբգար Դպիրը որևէ դրական արդյունքի չի հասնում: Հասնելով Վենետիկ՝ նա մոտավորապես մեկ տարի մնում է այնտեղ և ամենայն հավանականությամբ ուսումնասիրում տպագրության գործը: ԺԶ դարի 60-ական թվականներին Վենետիկում գործում էին մոտավորապես 200—250 տպարաններ: Աբգար Դպիրը Վենետիկում մեծ վրկանքների ու համառ աշխատանքի շնորհիվ ձեռք է բերում տպագրական մեքենաներ ու հայերեն տառեր և կաթոլիկ Եկեղեցու ծայրահեղ խիստ հսկողության տակ, հավատաքննության ու գրաքննության ներկայացուցիչների աչքի առջև 1565—1566 թթ. հրատարակում է մի տոմարացույց, որը գիտությանը ավելի հայտնի է «Խառնափնթուր տոմար» վերնագրով և մի «Սաղմոսարան»: Այդ ժամանակ կաթոլիկ Եկեղեցու կողմից հալածվում էին ոչ կաթոլիկ բոլոր հրատարակիչները, որոնք պարտավոր էին դրականապես պատասխանել հռոմեադավան Եկեղեցու հավատաքննության բոլոր հարցերին: Հեռու մնալու համար հավատաքննչական մարմինների սադրանքներից ու հետապնդումից՝ Աբգար Դպիրը տպագրական մեքենաները հետը առած տեղափոխվում է Կ. Պոլիս: Որպես հրատարակիչ, Աբգար Դպիրը առաջինն էր, որ զգաց հայատառ տպարանը հայկական միջավայր փոխադրելու անհրաժեշտությունը: Ստանալով Կոստանդնուպոլսի հայոց Հակոբ պատրիարքի արտոնությունը՝ նա իր տպարանը հաստատում է ս. Նիկողիանոս եկեղեցուն կից շենքերից մեկում: Այսպիսով՝ Աբգար Դպրի միջոցով կատարվեց ևս խոշոր մի քայլ հայատառ տպարանը հայրենիքին էլ ավելի մոտեցնելու գործում: Հնարամիտ, ավնիվ, ազգային մշակույթի նկատմամբ նախանձախնդիր այս մշակը, դժվարին այդ տարիներին, Կ. Պոլսում տպագրում է յոթ-ութ անուն գիրք: Ահա այդ հրատարակությունների ցանկը.

1.—Փոքր քերականություն, 1567—68 թթ.
2.—Տոնացույց, 1568 թ.
3.—Պարզատումար, 1568 թ.
4.—Աղոթամատույց (Ժամագրքի և Պատարագամատույցի հետ), 1568 թ.
5.—Տաղարան, 1568 թ.
6.—Մաշտոց, հավանական է 1568 թ.[2]

Փաստորեն Աբգար Դպիր Թոխատեցու տպագրական գործունեությունը լայնորեն կապվում է Մայր Աթոռ ս. Էջմիածնի հետ:

ԺԷ դարի հայկական տպագրության պատմության մեջ անվիճելիորեն իր պատվավոր տեղն ունի եռանդաշատ Մովսես Տաթևացի կաթողիկոսը (1629—1632 թթ.): Լինելով ժամանակի ամենապարգացած եկեղեցականներից մեկը՝ նա հնարավոր բոլոր միջոցներն օգտագործեց ոչ միայն հայ մանուկների համար ամենուրեք դպրոցներ բացելով, այլև գերլարված ջանքեր թափելով լուսավորական աշխատանքը հայ գրքատպության գործին կապելու համար: «Յամենայն տեղիս դասատուն եւ դպրոցս կարգեաց եւ լուսաւորեաց կապգս Հայոց: Յարաժամ ցանկայր տպագրութիւնս, վի առաստութենէ գրոց ամենեքեան դիւրաւ վարժէին, սակայն չեղեւ ձեռ-

[1] Այս մասին տես Հանդէս ամսօրեայ, 1912, էջ 387 և Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմ., Եր., 1977, էջ 185:

[2] Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմ., Եր., 1977, էջ 221:

նահաս չի փոխեցաւ աստի յանանց կեանս»[3]: Հայոց Հայրապետին հայրենասիրական ու լուսավորական իր ծրագրերի իրականացման ճանապարհին գործակից պիտի լիներ ս. Էջմիածնի միաբանությունը, որը Մովսես կաթողիկոսի, մանավանդ նրան հաջորդող Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսի ժամանակ (1633--1655 թթ.) քանակապես և որակապես շատ բարձր էր: 1634 թվականին գրված ձեռագրերից մեկի հիշատակարանում կարդում ենք, որ ս. Էջմիածնում այդ շրջանում կար «հարիւր սպասաւորս գրոց՝ վարժասէրս եւ հանճարատենչս ի կիրթս հրահանգից դաստիարակեալք եւ տեառն վիճակեալք»[4]: Հայոց հայրապետի վերահաս մահը և մեր երկրի քաղաքական դաժան պայմանները խանգարեցին հայոց կաթողիկոսին՝ իրականացնելու Մայր Աթոռում տպարան ունենալու ծրագիրը: Բարեբախտաբար Մովսես Կաթողիկոսը միջոցներ գտավ օտար ափերում տպվող հայատառ գրքերը առատապես հայրենիք բերելու՝ դրանով իսկ մեծապես օգնելով Մայր Աթոռի «գրոց սպասավորներին» խորանալու կրոնական, դավանաբանական և փիլիսոփայական գրականության մեջ: Մովսես կաթողիկոսի անկատար մնացած երազը 1638 թվականին իրականացրեց իր շնչով ու հոգով դաստիարակված Մայր Աթոռի մեկ ուրիշ միաբան՝ Խաչատուր վրդ. Կեսարացին: Եռամեծ այս վարդապետը 1620 թվականին, նշանակվելով Նոր Ջուղայի առաջնորդ, իր մի քանի աշակերտների հետ միասին Ամենափրկչյան վանքում ծավալում է հսկայական աշխատանք: Նոր Ջուղայում Կեսարացի վարդապետի ջանքերով բացվում է հոգևոր դպրոց, որը հաճախ հիշվում է նաև որպես համալսարան: 1638 թվականին նա գլուխ է բերում նաև մի այնպիսի գործ, որը, ինչպես աստմաբան Լեոն է ասում, «ավելի հրաշքի էր նման»: Զգալու համար «հրաշքին» հասնելը նրա հիմնադրած տպարանի արժեքը, պետք է պատկերացնել ԺԷ դարի հետամնաց ավատատիրական Պարսկաստանը: Հաշվի չառնելով ոչ մի դժվարություն, առանց Եվրոպան և Գուտենբերգի տպագրական մեքենաները տեսնելու, մեղվաջան աշխատանքի շնորհիվ Խաչատուր վրդ. Կեսարացին և իր գործակիցները Ամենափրկչյան վանքի իրենց խուցերում փորագրում են հայերեն տառեր, շինում մամուլներ և երկար նախապատրաստական աշխատանքից հետո 1638 թվականի մի գեղեցիկ առավոտ լույս աշխարհ են բերում իրենց ինքնաշեն տպարանի երախայրիքը՝ «Սաղմոսարան»-ը: Այդ մասին Խաչատուր վրդ. Կեսարացին, մեծարելով իր ուսուցչին՝ Մովսես Տաթևացի հայրապետին, գրում է. «...Եւ յաջորդեաց կաթոռ նորա Տէր Փիլիպպոս ձեռնասուն աշակերտ իւր: Եւ յաւուրս սորա եղեւ տպագրութիւնս ի քաղաքն Շոշ յանապատն Ջուղայոյ, ի թուին ՌՁԵԱ 1638 ձեռամբ նուաստ Խաչատուր վարդապետի Կեսարացւոյ, որ տարի մի է եւ հինգ ամիս, որ կցայգ եւ կցերեկ անդադար աշխատիմք հանդերձ միաբան ուխտիւ, չի ոչ եմք տեսեալ ի վարպետէ եւ ոչ ունիմք ուսուցիչ, բայց միայն կՀոգին սուրբ եւ վիղձս եւ կկենդանի աղօթս հոգեւոր հօրն մերոյ գնացեալ առ Տէր»[5]: Ճիշտ է, Նոր Ջուղայի տպարանի մամլիչների տակից դուրս եկած առաջին գիրքը անսահման ուրախության հետ նրա հրատարակիչներին մեծ մտահոգություն էլ բերեց, քանզի ինքնաշեն այդ տպարանի անդրանիկ հրատարակությունը ուներ տպագրական բավական թերություններ: Անկեղծ ոգևորությամբ սկսված հրատարակչական գործը կատարյալ դարձնելու նպատակով Խաչատուր վրդ. Կեսարացին Եվրոպա է ուղարկում իր աշակերտներից Հովհաննես վրդ. Ջուղայեցուն: Ինքը չսպասելով Հովհաննես վարդապետին՝ նույն ջանասիրությամբ շարունակում է գրքեր տպելու գործը: 1638 թվականից մինչև 1647 թվականը Նոր Ջուղայում տպվում են՝

1.—Սաղմոսարան, 1638 թ.
2.—Հարանց վարք, 1641 թ.
3.—Խորհրդատետր, 1641 թ.
4.—Աւետեաց ժամագիրք, 1642 թ.

Թեև այս հրատարակությունները պոլիգրաֆիական տեսակետից շատ պարզունակ էին և ոչ կատարյալ, բայց մեզ համար շատ թանկ են նրանք, որովհետև գալիս են հաստատելու հրատարակիչների ինքնամոռաց և անմնացորդ սերն ու պաշտամունքը հայ մշակույթի և այն ստեղծող բազմաբնույթ ու բազմաչարչար մեր ժողովրդի նկատմամբ: Խաչատուր վրդ. Կեսարացին և իր աշակերտները, առանց վախենալու անհաղթահարելի թվացող դժվարություններից, ձեռք են կարնում Աստվածաշունչ մատյանի նման մի բարդ ու դժվարին հրատարակություն գլուխ բերելու գործին: Մայր Աթոռը ուշի-ուշով հետևում էր Նոր Ջուղայի տպարանի գործունեությանը: Դժբախտաբար նրա հրատարակությունը-

[3] Տես Խաչատուր վրդ. Կեսարացու հրատարակած Սաղմոսարանի հիշատակարանը, Նոր Ջուղա, 1638 թ.:

[4] ՀՍՍՀ Մատենադարան, ձեռագիր 3480, էջ 262բ: Այս մասին տես նաև **Ա. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հտ. Բ, Եր., 1959, էջ 167:

[5] Տես Խաչատուր վրդ. Կեսարացու հրատարակած «Սաղմոսարանը», Նոր Ջուղա, 1638 թ., Հիշատակարան:

ները իրենց որակով և քանակով չէին կարող բավարարել հայ գրքի նկատմամբ աճող այն պահանջը, որ նկատվում էր Հայաստանում: 1655 թվականին ս. Էջմիածնի հայրապետական գահին «նստաւ Յակոբ Ջուղայեցին, այր սուրբ եւ ընտրեալ յար եւ նման մեծին Մովսէսի եւ Փիլիպպոսի»[6]: Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը ժամանակակիցների կողմից ճանաչված էր որպես անապատական շարժման ընդերքից ելած եկեղեցական ամենակարևոր դեմքերից մեկը, որոնց գործունեությունը Հայոց Եկեղեցու դավանաբանության անաղարտությունը պահպանելուց վատ կոչված էր գլխավորելու կրթական, գրահրատարակչական և լուսավորական գործը: Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը Մայր Աթոռում ուներ Երևելի եկեղեցականների մի մեծ խումբ, որոնց Ստեփանոս Լեհացի վարդապետը հետևյալ կերպ է բնորոշում. «Երեւելի վարդապետք քաջաբանք բանաստեղծք աստուածային գրոց, քաջ գիտունք եւ հմուտք,—որոնց թվում էր մեծահամբավ պատմաբան Առաքել վրդ. Դավրիժեցին,—քաջ ռաբունի եւ վիպասան, որ ժամանակագրութիւնս հայրապետաց եւ թագաւորաց գեղեցկայարմար բանիւք դրոշմեաց»[7]: ԺԷ դարի ժամանակագիրներից Դավիթ Բաղիշեցու բնորոշմամբ՝ Հակոբ Ջուղայեցու ժամանակ Մայր Աթոռի միաբանության անդամներից շատերը «...սիւնք Եկեղեցւոյ եւ անօթք Հոգւոյն սրբոյ, անյաղթ փիլիսոփայք»[8] էին ճանաչված: Հայոց Հայրապետը ընտրության լայն հնարավորություն ուներ այդքան հեղինակավոր միաբանության անդամներից մեկին Եվրոպա ուղարկելու՝ հայ գրքատպության գործով զբաղվելու համար: 1656 թվականին որոշակի հրատարակչական ծրագրով Եվրոպա է մեկնում Մայր Աթոռի միաբաններից Մատթեոս սրկ. Ծարեցին, որը Փիլիպպոս կաթողիկոսի կոնդակագիրն էր: Մատթեոս սարկավագը մեծ դժվարությունների գնով կարողանում է գլուխ բերել Հայոց կաթողիկոսի հանձնարարությունը՝ Ամստերդամում կազմակերպելով ժամանակակից հրատարակչական պահանջները բավարարող մի տպարան: Սակայն նա մահանում է առանց տեսնելու իր տպարանի երախայրիքը[9]: Բազմաթիվ պսրտատերեր սպառնում են պարտքի դիմաց գրավել տպարանը: Երջանիկ պատահականությամբ այդ օրերին Ամստերդամում էր գտնվում ոմն հայ առևտրական, Ավետիս Ղլճենցը, որը Ոսկան վրդ. Երևանցու եղբայրն էր: Տպարանի հետ կապված բոլոր պարտքերը վճարելով՝ Ավետիս Ղլճենցը տպարանը կոչում է ս. Էջմիածնի և Ուշի գյուղի ս. Սարգիս վանքի անունով, որտեղ այդ ժամանակ վանահայր էր իր եղբայրը՝ Ոսկան վրդ. Երևանցին: Այսպես, պատահականորեն փրկվեց հսկայական դժվարությունների ու տառապանքի գնով ստեղծված ս. Էջմիածնի անունով առաջին տպարանը, որին վիճակված էր այնքան ծավալուն և դրական դեր կատարելու մեսրոպատառ գրքերի բազմացման գործում: Մայր Աթոռի միաբան և Հայոց Հայրապետի ներկայացուցիչ Մատթեոս սրկ. Ծարեցու ձեռքով Ամստերդամում հիմնադրած տպարանը փաստորեն, Մայր Աթոռի և Հայաստանի առաջին տպարանն էր օտար հողում: Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի տպարանում 1660—1686 թթ.-ին, շուրջ քսանվեց տարվա ընթացքում, լույս են տեսնում քառասուն անուն հայերեն գրքեր: Մատթեոս սրկ. Ծարեցու մահից հետո Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը տարակուսում է, թե ո՞վ սլիտի Ամստերդամում փոխարինի Մատթեոս սարկավագին: Հենց այդ օրերին հայոց Հայրապետը ստանում է Ավետիս Երևանցի Ղլճենցի նամակը Ոսկան վրդ. Երևանցուն Ամստերդամ ուղարկելու մասին: Առանց երկմտելու կաթողիկոսը համաձայնվում է Ոսկան վարդապետի թեկնածությանը, մանավանդ որ այդ եկեղեցականն ուներ համապատասխան պատրաստություն Ամստերդամում շարունակելու այնքան լավ սկսված տպագրության գործը: «Իսկ ակնի Ոսկան վարդապետն՝ որ եւ սա մի իսկ էր ի յիմաստնայեղց աշակերտաց տեառն Խաչատրոյ մեծի վարդապետին. ի ժամանակս Յակոբայ Հայրապետի՝ որոյ հրամանաւ գնաց ի յԱմստերդամ... Ուր գնացեալ սա, երջանկափայլ վարդապետն Ոսկան, այնպէս պարմանալի եւ գեղեցկագոյն գիր յօրինեաց, ըստ որում եւ հաւաստեաւ յայտնի իսկ է արդիւնք ի յՈսկան վարդապետի տպեալ Աստուածաշնչոյն, որ գրեթէ ոչ Վանանդեցւոյնն, ոչ Մխիթարայ աբբային եւ ոչ Թուրջաճու եւ կամ թէ այլոց գրեանքն կարեն լինել աղախնեայք»[10]: Ոսկան վարդապետը մինչև Ամստերդամ մեկնելը նախապես պասրաստում էր Աստվածաշնչի համեմատական բնագիրը՝ Եվրոպայում տպելու համար: Ոսկան Երևանցի վարդապետը ս. Էջմիածնից մեկնեց 1662 թվականին: 1666 թ. իր հրատարակած Աստվածաշնչի

[6] Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 52:

[7] Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ապատագր. մտքի պատմ., գիրք Բ., Եր., 1959, էջ 164:

[8] Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 52:

[9] Տես Գարեգին Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 99:

[10] Խաչատուր Աբեղայի Ջուղայեցւոյ, Պատմ. Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 121—122:

հիշատակարանում այդ առթիվ գրում է. «Ելեալ յերկրէ եւ յապգէ իմմէ, դիմեցի ի կողմանս Եւրոպիոյ յաղագս տպման մատենիս այսորիկ»: Ոսկան վարդապետը Ամստերդամ մեկնելու ճանապարհին հասցրեց բանակցել մի քանի հայ վաճառականների հետ, որոնք խոստացան իրենց նյութական օժանդակությունը, եթե տպագրությունից ստացված օգուտները տրամադրվեն Մայր Աթոռին, Երուսաղեմի հայոց պատրիարքարանին և ս. Սարգիս վանքին: Ոսկան վարդապետը, Ամստերդամ հասնելով, իր գործընկերների հետ մի քանի հայերեն գրքեր ևս տպեց (Շարակնոց, 1664—65 թթ., իր հեղինակած Քերականությունը, 1666 թ.), որոնք մի տեսակ փորձնական հրատարակություններ էին՝ նախապատրաստվելու համար Աստվածաշունչ սատյանի չքնաղ այն հրատարակությանը, որը տպագրական տեսակետից աննախադեպ մի երևույթ էր հայ իրականության մեջ: Ս. Էջմիածնի տպարանը Ոսկան վարդապետը Ամստերդամում պահեց մինչև 1669 թվականը: Աստվածաշնչի հրատարակությունից հետո Ամստերդամում երեք տարվա ընթացքում հրատարակիչ վարդապետը հասցնում է հրատարակել 11 անուն գրքեր ևս: Դրանք են՝ Գիրք աղօթից (1667 թ.), Աղօթամատոյց (1667 թ.), Գիրք ս. Մաշտոցայ վրդ.-ի, Մաշտոց (1667 թ.), Վարդապետութիւն քրիստոնէական (1667 թ.), Նոր Կտակարան (1668 թ.), Տօմարաց գիրք (1668 թ.), Աղուէսագիրք (1668 թ.), Առաքել վրդ. Դավրիժեցի (1669 թ.), Տօնացոյց՝ երկու հրատարակություն (1669 թ.):

Այնուհետև սկսվում է Ոսկան Երևանցու տպարանի ոդիսականը: Այն փոխադրվում է Լիվոռնո, այնուհետև՝ Մարսել:

Դժվար է գերագնահատել ս. Էջմիածնի անունը կրող տպարանի կատարած դրական ծառայությունները հայ տպագրության գործին: Ամփոփելով՝ ասենք, որ Ոսկան վարդապետը իր նվիրյալ գործունեությամբ մի նոր բարձունքի հասցրեց հայ տպագրության գործը: Ս. Էջմիածնի տպարանը Ոսկան վարդապետի ջանքերով առաջին հայ տպարանն էր փաստորեն, որ անընդմեջ գործեց շուրջ քառորդ դար՝ տալով շուրջ քառասուն անուն շատ կարևոր հրատարակություններ: Հետագա մեր տպագրիչների համար այս տպարանի հրատարակությունները դարձան ուղեցույց, որից սովորեցին հայ գիրքը գեղեցիկ տառերով և լավ ձևավորված վիճակում ժողովրդին հասցնելը: Ոսկան վարդապետն էր, որ գրքերի տպաքանակը 500-ից բարձրացրեց 3000-ի: Այս տպարանն էր, որ հրատարակեց ժամանակակից հեղինակների գործերը, որով ընթերցողները ավելի մոտ էին կանգնում ժամանակակից հասարակական կյանքին: Վերջապես, այս տպարանն էր, որ առաջինը անդրադարձավ գրքերը նոր գրական հայերենով լույս ընծայելու կարևոր գործին:

Ոսկան վարդապետի մահից հետո ս. Էջմիածնի տպարանը Մարսելում դադարեցրեց իր գործունեությունը: Նրա աշակերտներից Մկրտիչը 1676 թվականին Զմյուռնիայում հիմնադրեց մի տպարան, որը նույնպես կոչվում էր ս. Էջմիածնի և ս. Սարգսի անուններով: Մատթեոս Վանանդեցին, որը Ոսկան վարդապետի աշակերտներից էր, իր մի քանի ազգականների հետ 1685 թվականին Ամստերդամում հիմնադրեց արդիական մի տպարան: Փաստորեն ս. Էջմիածնի տպարանից ճյուղավորվեցին երկու տպարաններ, որոնցից հատկապես Վանանդեցիներինը հսկայական հրատարակչական գործունեություն ծավալեց: Վանանդեցիները կատարելագործելով հրատարակչական գործը՝ այն բարձրացրին մի աստիճանով ևս: Նրանք էին, որ 1695 թվականին հրատարակեցին «Աշխարհացույցը»: Վանանդեցիների տպարանը Ամստերդամում գոյատևում է մինչև 1717 թվականը, որից հետո պարտատերերը բռնագրավում են այն:

ԺԸ դարի սկզբից հայ տպագրիչների մոտ նկատվում է հայրենիքին էլ ավելի մոտենալու ձգտում: Հայ տպագրիչները հատկապես հաստատվում են Պոլսում, որտեղ, մինչև 1800 թվականը, տարբեր տպարաններում հրատարակվում են շուրջ 300 անուն հայերեն գրքեր[11]: Հայ տպագրությունը հրատարակված գրքերի այս քանակով արձանագրում էր իր հերթական հաղթանակը՝ նպաստելով նաև հայ մշակույթի գանձարանում ձեռագիր վիճակում պահվող ազգային ու համաշխարհային արժեքները լույս աշխարհ հանելուն: Տպագրված հայերեն գրքերը պիտի օգնեին Մայր Աթոռին աշխարհասփյուռ մեր ժողովրդի հատվածներին էլ ավելի ամուր կապելու իր բուն արմատներին, ներարկելու նրա մեջ ազգային կենարար այն ավիշը, որն ընդունակ էր ապահովելու բացառապես միայն մեսրոպատառ գիրքը:

Ժամանակագրական կարգով՝ հերթը Մայր Աթոռի տպարանինն է: Խախտելով ավանդական կարգը, մի քանի խոսքով ներկայացնենք Ռուսաստանի հայ գաղթօջախում ԺԸ դարի այն տպարանները, որոնց հիմնադրումը և ողջ գործունեությունը կապված է Մայր Աթոռ ս. Էջմիածնի հետ: Ռուսաստանում առաջին հայկական տպարանը հիմնադրել է Նոր Ջուղայեցի Գրիգոր Խալդարյանը, որը

[11] Տես Ք. Կորկոտյանի «Հայ տպագիր գիրքը Կ. Պոլսում, 1567—1850 թթ.», Եր., 1964:

առևտրական գրասենյակ ուներ Լոնդոնում: Նա իր խնայողությունների հաշվին Լոնդոնում հիմնում է հայկական տպարան: Առաջին գիրքը՝ «Դաւանութիւն հաւատոյ Հայաստանեայց» հրատարակելուց հետո, 1780 թվականին, ստանալով Ռուսաստանի հայոց բպմարդյուն առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի սիրալիր հրավերը, 1781 թվականին տեղափոխվում է Պետերբուրգ՝ դառնալով Ռուսաստանում հայկական առաջին տպարանի հիմնադիր: Բոլորովին չնսեմացնելով Գրիգոր Խալդարյանի կատարած գործի մեծ կարևորությունը Ռուսաստանում հայկական առաջին տպարանի հիմնադրության գործում, սխալված չենք լինի, եթե հիմնադրի պատիվը տանք նաև Սիմեոն կաթողիկոսի աշակերտ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին, որը, օգտագործելով իր հսկայական հեղինակությունը, առաջին օրից բարոյապես և նյութապես կորավիգ կանգնեց Խալդարյան գրահրատարակչին: Այս տպարանը Պետերբուրգում իր գոյությունը պահեց ընդամենը ութ տարի, բայց այդ կարճ ժամանակամիջոցում Հովսեփ արքեպիսկոպոսի հրամանով, բացի կրոնական, թարգմանական գրականությունից, հասցրեց հրատարակել նաև մեր հին և միջնադարյան հեղինակների՝ Եղիշեի, Ներսես Շնորհալու և այլոց գործերը: Դժբախտաբար, ինչպես հայկական մյուս տպարանները, Խալդարյանի տպարանը նույնպես շուտով հսկայական պարտքերի տակ ընկավ: Տպարանը հայկական համայնքը պիտի կորցներ, եթե չլիներ ռուսահայոց հոգևոր առաջնորդի նյութական մեծ օժանդակությունը: Աստրախանի հայոց նյութական օգնությամբ Հովսեփ արքեպիսկոպոսը տպարանը փրկեց պարտատերերից և Գր. Խալդարյանին առաջարկեց վերջնականապես այն փոխադրել Նոր Նախիջևան: Մինչ վերջինս պատրաստվում էր կատարելու իր մեծ բարերարի ցանկությունը, Պետերբուրգում հիվանդացավ և մահացավ: Հիմնադրի մահից քիչ անց Պետերբուրգից տպարանը փոխադրվեց Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքը: Հովսեփ արքեպիսկոպոսը, լինելով իր ժամանակի ամենաազդեցիկ կրոնական ու քաղաքական գործիչներից մեկը, չէր կարող աչքաթող անել լուսավորության ու մշակույթի տարածման այդ մեծագույն գործոնը՝ տպարանը: Նա մտադիր էր ս. Ղազարի վենետիկյան միաբանության օրինակով իր հիմնադրած Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքը դարձնել լուսավորության և մշակույթի կենտրոն: 1789 թվականին Խալդարյանի տպարանը հաստատվեց Նոր Նախիջևանում և կոչվեց Արղության արքեպիսկոպոսի անունով: Ժրաջան այս մեծ եկեղեցականը առաջին հերթին տպարանը ապահովեց տնտեսապես: Նա մարդիկ և կոչեր ուղարկեց ամենուրեք, մինչև անգամ Հնդկաստան: Նրա կոչերին հընդկահայ մեծահարուստներ Մասեհ Բաբաջանյանը, Եղիա մահտեսի Հակոբյանը և ուրիշներ պատասխանեցին իրենց առատաբուխ նվիրատվություններով և կտակներով: Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքի տպարանը իր գոյության ընթացքում ունեցավ բազմաթիվ օգտակար հրատարակություններ: Վստահորեն կարելի է ասել, որ 1781 թվականի Պետերբուրգի առաջին տպարանը, որ 1789 թվականին տեղափոխվեց Նոր Նախիջևան, ԺԸ դարի Արևելյան Հայաստանի հայության համար միակ լուսավոր երևույթը դարձավ 1771 թվականին Մայր Աթոռում հիմնադրված տպարանից հետո:

Հայ գրքի տպագրությունը սկզբնավորվեց և ճյուղավորվեց Հայրենիքից հեռու, օտար ափերում: Մայր Աթոռը հենց սկզբից հանդես բերեց գործնական հետաքրքրություն հայ գրքի տպագրության գործում և ջանքեր չընխնայեց իր ներկայացուցիչների միջոցով կատարելության հասցնելու այն: Ս. Էջմիածինը, մտահոգված իր վավակների լուսավորության և հայ մշակույթի զարգացման գործով, սիստեմատիկ կազմակերպչական աշխատանք տարավ Եվրոպայի զանազան քաղաքներում իր հոգևոր ու աշխարհիկ ներկայացուցիչների անշահախնդիր աշխատանքով հրատարակված հայերեն գրքերը հայրենիք փոխադրելու՝ դրանով իսկ նախադրյալներ ստեղծելով հայրենիքում նոր դպրոցների և ազգի լուսավորության նոր կենտրոնների հիմնադրության համար: Տպագրված գրքերի առատությունը նպաստեց նաև Հայոց Եկեղեցու և ի մասնավորի ս. Էջմիածնի համար լուսամիտ վանականներ պատրաստելու գործին: Մայր Աթոռի դպրոցական, մշակութային և հոգևոր դաստիարակության ծրագրերի իրականացմանը լավագույնս նպաստելու դիտավորությամբ Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը, ինչպես հաստատում է ԺԷ դարի ձեռագրերից մեկի հիշատակարանը, 1668 թվականին ս. Էջմիածնում հիմնադրեց տպագիր գրքերի մատենադարան «Ընդ որս և մատենից գումարութիւնք ի մի ոչ սակաւ և նոցին խոկացողք և ի նոնյս պարապողք յոգնսկ հանճարի»[12]:

Մոտավորապես երեք հարյուր տարի (1512—1800) հայրենիքից հեռու, բազում հայորդիների անշահախնդիր աշխատանքի,

[12] Տես Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 981, էջ 502ա: Այս մասին տես նաև Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմությունից, հատ. Բ, Եր., 1959 թ., էջ 169:

գրականքների ու տառապանքի շնորհիվ հնարավոր եղավ հրատարակել շուրջ 1000 անուն հայերեն մատյան: Հասունացել էր հայրենիքում տպագրական մեքենաներ ունենալու խնդիրը: Նախախնամության կամքով 1763 թվականին Լուսավորչի գահին է բարձրանում Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, որին պատկանում է Հայաստանում առաջին տպարանի և թղթի գործարանի հիմնադրի մեծ պատիվը:

Այն, ինչ երեք հարյուր տարիների ընթացքում չհաջողվեց իրագործել նախորդ հայրապետներին, փայլուն կերպով իրականացրեց Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, որի մոտ, ինչպես հաստատում է Օրմանյան սրբազանը, «Այդ միտքը հղացած էր, երբ կաթողիկոսանալեն քսան տարի առաջ, տակավին սարկավագ՝ Հնդկաստանի նվիրակությունը կկատարեր»[13]: Սիմեոն կաթողիկոսը, ստանալով մադրասաբնակ Գրիգոր Միքայելյան Չակիկյանցի նյութական նվիրատվությունը (3106 ռուպի) Մայր Աթոռի բակում կառուցում է հատուկ տպարանի շենք: Նորաբաց տպարանը անվանվում է ս. Գրիգոր Լուսավորչի անունով: Քիչ անց մեծանուն հայրապետը կառուցում է նաև թղթի գործարան, որը ողջ Անդրկովկասում առաջինն էր: «Աստուծով հաստատեցաւ տպագրատունս նոր ի նորոյ ի սուրբ Աթոռս Էջմիածին ամենայն պարագայիւքն, հոգաբարձութեամբ Տեառն Սիմէոնի Սրբազան Կաթողիկոսին Երեւանցւոյ, արդիամբ Ջուղայեցի եւ Հինդ բնակեալ բարեսաշտօն Գրիգոր աղային Չաքիկենց ...թուին ՌՄԻ (1771»: Առաջին գիրքը, որ Մայր Աթոռի տպարանից լույս տեսավ 1771 թվականին, Սիմեոն կաթողիկոսի հեղինակած «Փոքրիկ Տաղարան» գիրքն էր: Մինչև դարի վերջը Մայր Աթոռի տպարանից դուրս եկավ 12 անուն գիրք: Ճիշտ է, համեստ է այս թիվը, բայց դրանով հիմք դրվեց հայրենիքում գրքատպության գործի հետագա բուռն զարգացմանը: Ասենք նաև, որ Սիմեոն կաթողիկոսից հետո ս. Էջմիածնի տպարանը մի քանի հայրապետների կողմից նորոգվել է, կամ նոր մեքենաներ են տեղադրվել այնտեղ:

Տպագիր հայ գրքի անցած տատասկոտ, դժվարին, բայց փառքի ճանապարհը, որն սկզբնավորվեց 1512 թվականին Վենետիկում, հասավ հայրենիք, ս. Էջմիածին 1771 թվականին: Հավետ հարգանքի ու մեծարանքի արժանի համեստ մեր հրատարակիչները, Մայր Աթոռի և նրա գահակալների օրհնությամբ, արին անհնարինը հայ հրատարակչական գործի ծաղկման համար՝ նվիրելով հոգեմաշ այդ աշխատանքին իրենց առողջությունը, նյութական հնարավորությունները, շատ հաճախ նաև ամենաթանկը՝ կյանքը: Նրանք իրենց հրատարակած մեծարժեք գրքերով ոչ միայն նպաստեցին ազգի լուսավորության և մշակույթի զարգացման սրբազան գործին, այլև խավարի ու հոգևարքի մեջ գտնվող մեր ժողովրդին ներշնչեցին հավատք իր լուսավոր գալիքի նկատմամբ: Հավերժ փառք անցյալի մեր հրատարակիչներին և հավերժական Մայր Աթոռ ս. Էջմիածնին, որ այնքան իմաստուն կերպով կազմակերպեց հայ մշակույթի հույժ կարևոր այդ բնագավառը՝ հայ հնատիպ գրքի հրատարակության գործը, որը նախադրյալներ ստեղծեց հայ մշակույթի հետագա արագ և բուռն ծաղկման համար:

ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

[13] **Մաղաքիա արքեպիս. Օրմանեան,** Ազգապատում, Պէյրութ, 1960, սյունակ 3099:



ՅԱԼԹԱՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Յալթա: Առողջարաններով, նավահանգըստով, տուրիզմի խոշոր կենտրոնով հայտնի ծովափնյա այս քաղաքը գտնվում է Ուկրաինական ՍՍՀ Ղրիմ թերակղզու հարավային ծովախորշերից մեկում: Եվ ահա հեռավոր այս անկյունում, որպես հայ հավատացյալ հոգու պայծառ վկայություն, անսասան և կանգուն է մնացել հայկական մի գեղեցկատես եկեղեցի:

Ծովային ճանապարհով Յալթա այցելողի համար անհնար է չնկատել հորիզոնին՝ երկընքի ու ծովի կապույտի վրա վեր հառնած հայաոճ այդ եկեղեցին իր երկնասլաց գմբեթով: Բարձունքին բազմած այս եկեղեցին, թաղված մենության գրկում, որպես հավատքի և հույսի փարոս, իրեն է ձգում բազմաթիվ մարդկանց: Եկեղեցին իր արտաքին տեսքով շատ նման է Էջմիածնի Ս. Հռիփսիմե տաճարին: Այս նմանությունը պատահական չէ, քանի որ այն կրում է Ս. Հռիփսիմե կույսի անունը: Ո՞վ է այս եկեղեցու հիմնադիրը, ինչո՞ւ է այն նման Ս. Հռիփսիմե եկեղեցուն ու կոչվում նրա անունով, և ե՞րբ ու ինչո՞ւ է այստեղ կառուցվել:

Այս բոլորը կապված է մի տխուր պատմության հետ, որը պատահել է դարիս սկզբներին:

Բաքվի հայերից հայտնի արդյունաբերող Պ. Հ. Տեր-Ղուկասյանը (Ղուկասով) ուներ մի դուստր Հռիփսիմե անունով: Աղջիկը հիվանդանում է թոքերի բորբոքումով: Բժիշկների խորհրդով Տեր-Ղուկասյանն իր աղջկան բուժելու նպատակով տանում է Յալթա: Սակայն 1905 թ. դեռատի Հռիփսիմեն մահանում է՝ սգի մեջ թողնելով իր հորը: Վշտերի մեջ թաղված հայրը աղջկան թաղում է Յալթայի ամենաբարձր բլուրներից մեկի վրա:

Տարիներ շարունակ Յալթայում ապրող հայերը բազմաթիվ խնդրագրեր են ուղարկում Էջմիածին՝ եկեղեցի ունենալու համար: Վերջապես 1904 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Մկրտիչ Ա Խրիմյանի (1892—1907 թթ.) օրոք, «Սինոդը լսեց Ներքին Գործոց նախարարի գրությունն, որով հայտնում էր Յալտա քաղաքի եկեղեցու շինության համար տրված բարձրագույն թույլտվությունը»[1]:

Տեր-Ղուկասյանը սիրելի աղջկա հիշատակը հավերժացնելու նպատակով օգտվում է այս հարմար առիթից և համաձայնության գալով նախաձեռնողների հետ՝ իր ծախսերով 1905—1909 թթ. կառուցել է տալիս Էջմիածնի Սուրբ Հռիփսիմե տաճարի նման մի երկհարկանի դամբարան-եկեղեցի և աղջկա անունով էլ կոչում Ս. Հռիփսիմե:

Եկեղեցու նախագիծը Տեր-Ղուկասյանի հանձնարարությամբ կատարել է հայ անվանի ճարտարապետ Գաբրիել Միքայելի Տեր-Միքայելյանը (1874—1949):

Վերելքը դեպի եկեղեցի սկսվում է բլրի ստորոտից քարե լայն աստիճաններով, որոնց սկզբին, աջ և ձախ կողմերում, կառուցված են երկու մատուռանման գեղեցիկ շինություններ: 128 աստիճաններն ավարտվում են եկեղեցու հարավային ճակատի առջև գտնվող հարթակով, որի ավարտը տանում է դեպի եկեղեցու առաջին հարկը՝ մի հանգըստարան, ուր և գտնվում է վաղամեռիկ Հռիփսիմեի գերեզմանը: Բուն եկեղեցին գըտնվում է երկրորդ հարկում: Հանգստարանի աջ և ձախ կողմերի լայն աստիճանները տանում են երկրորդ հարկ՝ եռակամար թաղածածկ սրահը, որը կցված է եկեղեցու հարավային ճակատին, ուր և գտնվում է գլխավոր մուտքը: Մյուս մուտքը արևմուտքից է: Ճարտարապետ Տեր-Միքայելյանը եկեղեցու կառույցի մեջ «հաշտեցրել է» հայկական-եկե-

[1] «Արարատ» ամսագիր, 1904 թ., էջ 392:

ղեցական շինարարության տարբեր ժամանակաշրջանների կառուցողական ավանդությունները: Այստեղ լայնորեն օգտագործվել են Հաղբատի (10-րդ դար) վարդաքանդակների գեղարվեստական հնարանքները, իսկ



Յալթայի Ս. Հռիփսիմե եկեղեցին

երկհարկ եկեղեցի-դամբարանի միտքը վերցված է Ամաղուի Նորավանք եկեղեցու շինությունից (13-րդ դար):

Յալթայի Ս. Հռիփսիմե եկեղեցու ներքին ձևավորման աշխատանքներին մասնակցել են ճանաչված նկարիչ Վարդգես Սուրենյանցը, քանդակագործներ Տարագրոսը (Տեր-Վարդանյան), Մերկուրովը: Եկեղեցու վարդաքանդակների ընտրությունը կատարել է Վ. Սուրենյանցը՝ ցուցաբերելով բացառիկ ճաշակ: Նա կատարել է նաև ներքին նկարապարդումները, որոնց ոճավորումը նույնպես փոխ է առնված հին հայկական վարդարվեստից (9—18-րդ դդ.): Գմբեթի որմնապարդերը իրենց բնույթով ու հորինվածքով հիշեցնում են Էջմիածնի Մայր տաճարի գմբեթի նկարապարդումները (18-րդ դ. 60-ական թթ.):

Եկեղեցու արտաքին տեսքը, դիրքը, ներքին ձևավորումը խաղաղությամբ են համակում այցելողի հոգին՝ նրան տրամադրելով խոկումի և ինքնամփոփման:

Գմբեթի վրա երևում է եկեղեցու միակ արձանագրությունը, որը մեր փրկիչ Հիսուս Քրիստոսի ավետարանական ճշմարտության և փրկարար լույսի պատգամն է. «Գնացէ՛ք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Ուսուցէք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ. ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ 19—20):

Եկեղեցու բակում է գտնվում հայտնի նկարիչ Վարդգես Սուրենյանցի գերեզմանը (նա մահացել է 1921 թ. ապրիլի 6-ին):

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի...»:

ՍՏԵՓԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(АПРЕЛЬ 1984 г.)

1. Пасхальная проповедь Патриарха и Католикоса всех армян Вазгена I, произнесенная в Кафедральном соборе св. Эчмиадзина, 22 апреля 1984 г. (стр. 3—5).

2. Обмен приветственными телеграммами и посланиями между Его Святейшеством Верховным Патриархом и Католикосом всех армян Вазгеном I и главами братских церквей по случаю праздника чудесного Воскресения Господа нашего Иисуса Христа (стр. 6—8).

3. Поздравительное послание Его Святейшества Вазгена I, адресованное трем иерархическим престолам Армянской церкви, а также всем предстоятелям епархий и церковным общинам, по случаю св. праздника чудесного Воскресения Господа нашего Иисуса Христа (стр. 9—10).

4. Чудесное Воскресение Христово (редакционная статья) (стр. 11—12).

5. Энциклика Его Святейшества Вазгена I о праздновании 100-летия блаженной памяти Нерсеса Варжапетяна, патриарха Константинопольского, 20 апреля 1984 г., № 1249 (стр. 13—14).

6. Св. праздник Воскресения Христова в первопрестольном Эчмиадзине, 22 апреля 1984 г. (стр. 15).

7. Годовщина армянского геноцида в Турции, отмечавшаяся в первопрестольном Эчмиадзине, 24 апреля 1984 г. (стр. 16).

8. **Религиозная жизнь** (хроника): краткие сообщения о литургиях, проповедях и прочих событиях, имевших место в первопрестольном Эчмиадзине (стр. 17—19).

9. **Епископ Аваг Асатурян**—Воспоминание о чудесном воскрешении Лазаря (проповедь)—(стр. 20—22).

10. **Проф. Вараздат Арутюнян**—Начинания в области строительства, предпринятые первопрестольным Эчмиадзином в 1956—1980 гг. в период правления Католикоса всех армян Вазгена I (исследование) (стр. 23—28)

11. **Н. Тер-Микаелян**—Хримян Айрик-орел Васпуракана (стр. 29—37).

12. **Старший священник Арамаис Мирзаян**—Посещение армянской епархии в Австралии архиепископом Сиоиом Манукяном (стр. 38).

13. **Жизнь епархий**

а) Вести из армянской епархии в Болгарии (стр. 39).

б) Вести из армянской епархии в Ираке (стр. 40).

14. Международная конференция сторонников мира в Москве, 2—4 аперля 1984 г. (стр. 41).

15. **Паргев Шахбазян**—Новая книга архимандрита Егише Тертеряна, патриарха Иерусалимского (рецензия)—(стр. 42—46).

16. **Л. Тер-Петросян** — Влияние памятника «Учение Григория Просветителя» на символику искусства хачкаров (исследование) (стр. 47—51).

17. **Старший священник Егише Сарксян**—Роль св. Эчмиадзина в деле развития раннего армянского книгопечатания (исследование) (стр. 52—58).

18. **Диакон Степан Карапетян** — Армянская церковь в Ялте (исследование)—(стр. 59—60).



"ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(APRIL 1984)

1. The sermon of His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians, in the Holy Cathedral during the feast of Easter (22nd April 1984) —(pages 3—5).

2. The cables and letters of greeting exchanged between His Holiness Vasken I. the Catholicos of All Armenians and the spiritual heads of the Sister Churches, on the occasion of the Holy Resurrection (pages 6—8).

3. The congratulatory letters of His Holiness to the three hierarchical Sees of the Armenian Church, all the diocesan primates and church communities, on the occasion of the feast of Holy Resurrection (pages 9—10).

4. The marvelous Resurrection of Christ — (editorial)—(pages 11—12).

The encyclical of His Holiness on the occasion of the 100th anniversary of the death of the blessed memory of Patriarch Nerses Varjabedian of Constantinopole. 20th April 1984, № 1249 (pages 13—14).

6. The feast of the Holy Resurrection in the Mother See, 22nd April 1984 (page 15).

7. The anniversary of the 1915 genocide in the Mother See, 24th April 1984 (page 16).

8. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of April (pages 17—19).

9. **Bishop Avak Assadoorian** —In memory of the resurrection of Lazarus (sermon) — (pages 20—22).

10. **Prof. Varazdat Harutiunian**—The history of the architectural activity of the Holy See of St. Etchmiadzin, during the patriarchate of His Holiness Vasken I, the Catholicos of all Armenians (1956—1980) (study)—(pages 23—28).

11. **N. Ter-Mikaelian**—Khrimian Hayrik, the Eagle of Vasboorakan (pages 29—37).

12. **Archpriest Aramayis Mirzayan** —The visit of Archbishop Sion Manoogian to the diocese of the Armenians of Australia (pages 38).

13. **Diocesan life**

a) News from the diocese of the Armenians of Bulgaria (page 39).

b) News from the diocese of the Armenians of Iraq (page 40).

14. International conference of peace in Moscow, during the days of 2—4th April 1984 (page 41).

15. **Barkev Shahbazian**—The new book of Archbishop Yeghishe Derderian, the Patriarch of Jerusalem (pages 42—46).

16. **L. H. Ter-Petrossian** —The echo of St. Gregory's doctrine in the art of khatchkars (stone-cross) (study)—(pages 47—51).

17. **Archpriest Eghishe Sarkessian**—The role of Holy Etchmiadzin in the publication of the old Armenian books (study)—(pages 52—58).

18. **Deacon Stepan Karapetian**—The Armenian Church of Yalta (study) (pages 59—60).

„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(AVRIL 1984)

1. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 22 avril 1984 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la sainte fête de Pâques (pages 3—5).

2. Echange de télégrammes et de lettres de félicitation entre Sa Sainteté et les chefs spirituels des Eglises soeurs à l'occasion de la fête de la sainte Résurrection de notre Seigneur Jésus-Christ (pages 6—8).

3. Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise apostolique arménienne à l'occasion de la fête pascale (pages 9—10).

4. „La Résurrection merveilleuse du Christ" (éditorial)—(pages 11—12)·

5. Encyclique № 1249 de Sa Sainteté publiée le 20 avril 1984 à l'occasion du 100e anniversaire du bienheureux Nersès Varjapétian, patriarche des Arméniens de Constantinople (pages 13—14).

6. Le 22 avril, célébration de la fête de la sainte Résurrection au Saint-Siège d'Etchmiadzine (page 15).

7. Le 24 avril, commémoration du 69e anniversaire du génocide de 1915 au Saint-Siège d'Etchmiadzine (page 16).

8. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans le cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois d'avril 1984 (pages 17—19).

9. **Evêque Avak Assatourian**—„A la mémoire de la résurrection de Lazare" (sermon)—(pages 20—22).

10. **Prof. Varazdat Haroutiunian**— Histoire des travaux de construction réalisés par le Saint-Siège d'Etchmiadzine dans les années 1956—1980, du patriarcat de Sa Sainteté Vasken Ier (suite)—(pages 23—28).

11. **N. Ter-Mikaélian**—„Khrimian Haïrik l'aigle de Vaspourakan" (pages 29—37).

12. **Père Aramaïs Mirzayan**—Visite de l'archevêque Sion Manoukian au diocèse des Arméniens d'Australie (page 38).

13. **Vie diocésaine:**

a) Nouvelles du diocèse des Arméniens de Bulgarie (pages 39).

b) Nouvelles du diocèse des Arméniens d'Iraq (page 40).

14. Conférence internationale pour le maintien de la paix tenue à Moscou du 2 au 4 avril 1984 (page 41).

15. **Parkev Chahbazian** —Le nouveau livre de l'archevêque Yéghiché Tertérian, patriarche des Arméniens de Jérusalem (compte rendu)— (pages 42—46).

16. **L. H. Ter-Pétrossian**—L'écho de la „doctrine de saint Grégoire" dans l'art des khatchkars (étude)—(pages 47—51).

17. **Père Yéghiché Sarksian**—Le rôle de Saint-Etchmiadzine dans la publication des anciens livres arméniens (étude)—(pages 52—58).

18. **Diacre Stépan Karapétian** — L'église arménienne de Yalta (étude)—(pages 59—60).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կատկական քարոզը՝ արտասանված Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում 3

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 6

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին 9

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Քրիստոսի հրաշափառ Հարությունը 11

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կոստանդնուպոլսի երջանկահիշատակ Տ. Ներսես Պատրիարք Վարժապետյանի մահվան հարյուրամյակը նշելու մասին 13

Սուրբ Հարության տոնը Մայր Աթոռում 15

Մեծ եղեռնի տարեդարձի նշումը Մայր Աթոռում 16

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 17

ԱՎԱԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ—Հիշատակ Ղապարու հարության . . . 20

ՊՐՈՖ. ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Պատմություն Ս. Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունեության Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի գահակալության օրոք (1956—1980) 23

Ն. ՏԵՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ—Խրիմյան Հայրիկ Արծիվ Վասպուրականի . . . 29

ԱՐԱՄԱՅԻՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԻՐԶԱՅԱՆ—Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի այցելությունը Ավստրալիայի հայոց թեմ 38

Լուրեր բուլղարահայ թեմից 39

Լուրեր Իրաքի հայոց թեմից 40

Խաղաղության միջազգային կոնֆերանս 41

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ—Եղիվարդի նոր գիրքը 42

Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ—«Սուրբ Գրիգորի վարդապետության» արձագանքը (՝) խաչքարային արվեստի խորհրդապաշտության մեջ 47

ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ—Ս. Էջմիածնի դերը հայ հնատիպ գրքի տպագրության գործում 52

ՍՏԵՓԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—Յալթայի հայոց եկեղեցին 59

„Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата 61

„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin 62

„Etchmiadzine" organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie. URSS

Հանձնված է արտադրության 28.04.1984 թ.: Ստորագրված է տպագրության 29.05.1984 թ.:
Տպագրական 4 մամուլ+2 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 376:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1984 թ.